




Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՀՈՒՆԻՍ 2021



Ուրախանում էի, երբ ասում էին՝
«Գնանք Տիրոջ տուն»:

Սաղմոս 121. 1

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Շապիկի առաջին էջին Սբ. Գայանե վանքը

Սուրբ Գայանե վանքը միջնադարյան կրոնական կառույց

է Վաղարշապատ քաղաքի հարավային կողմում,՝ որ հիմնվել է Սբ. Գայանեի և իր երկու ընկերուհիների՝ Սբ. Շողակաթի ու Սբ. Դռիփսիմեի նահատակման վայրում:

Ըստ պատմիչ Ազաթանգեղոսի՝ 301թ. Գրիգոր Լուսավորչի ղեկավարությամբ և նրա գցած հիմքերի վրա Տրդատ Մեծը, նրա քույր Խոսրովիդուխտը և Աշխեն թագուհին վկայարան են կառուցել, որը 395թ. վերակառուցել է Սահակ Ա. Պարթևը: 630թ. Եզր. Ա. Փառածնակերտցին քանդել է այդ վկայարանը դրա տեղում կառուցել այսօրվա Սբ. Գայանե եկեղեցին և հաստատել վանական միաբանություն:

17-րդ դարում եկեղեցին կիսավեր էր ու լքված: 1652-ին Փիլիպոս Աղբակեցին հիմնովին վերակառուցել է այն: 1688թ. Եղիազար Ա. Այնթապցին կառուցել է վանքի միաբանության շենքերը:

1764 թ. Սիմեոն Ա Երևանցին Սբ. Գայանե եկեղեցու տարածքում կառուցել է ստորգետնյա խոշոր սառցատուն՝ վանքի մթերքները պահելու համար: 1866-1882թթ. եկեղեցու վանահայր Վահան Բաստամյանցը վերանորոգել է վանքը, հիմնել տպարան և հրատարակել «Դպրոց» ամսագիրը:

1977-1980 թթ. լոնդոնահայ բարերար Հարություն Մուրաֆյանի բարերարությամբ վանքի միաբանության շենքերը կրկին նորոգվել են և հագեցվել ժամանակակից հարմարություններով:

Լուսանկարիչ՝ Լարա Գայսերեան,
Փենսիլվենիա, ԱՄՆ
Lara Kaiserian, Pennsylvania, USA



Ձիաց մեր հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՀՈՒՆԻՍ 2021

ԼՔ. ՏԱՐԻ

Բ. ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Սրբերի կարիքներին հաղորդակի՛ց եղեք, հյուրասիրության հետևեցեք: (Յոհն. 12. 13)

ՀԱՏ ՕԳՏԱԿԱՐ

Քրիստոնեական ռազիոկայան էր զանգահարել մի մարդ՝ հայտնելու, որ իր կինը վիրահատությունից հետո շուտով տուն է վերադառնալու: Նա հատկապես շնորհակալություն էր հայտնում, որ մեր եկեղեցու բոլոր անդամները իրենց մեծապես օգնել են ցուցաբերած հոգատարությունը:

Այդ մարդու պարզ հայտարարությունն ինձ հիշեցրեց քրիստոնեական հյուրասիրության ու հոգատարության արժեքն ու անհրաժեշտությունը: Սկսեցի մտածել, որ հավատակից բարեկամները՝ միմյանց հանդեպ ունեցած սերն ու հոգածությունը այն ձևերից են, որոնցով կարելի է ցույց տալ Ավետարանի՝ կյանք փոխող զորությունը:

Պետրոս առաքյալն առաջին նամակում իր ընթերցողներին թախանձում էր կատարել այն, ինչն իր բարեկամ Պողոսը գրել էր հռոմեացիներին.«հյուրասիրությա՛ն հետևեցեք» (12.13): Իսկ Պետրոսն ասում է. «Իրար նկատմամբ ջերմ սե՛ր ունեցեք... հյուրասե՛ր եղեք: Ամեն մեկդ ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեցեք» (Ա.Պետ. 4. 8-10):

Բոլորս էլ ճանաչում ենք ռազիոկայան զանգահարածի նման մարդկանց, որոնք կարիք ունեն քրիստոնեական հոգածության և մտերմության: Աստծո զորությամբ թող որ մենք էլ լինենք այդ մարդկանց շարքում, որոնք մատնանշվում են որպես «չատ օգտակար»:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, օգնի՛ր, որ կարողանամ շուրջս նայել ու տեսնել իմ քաջալերական խոսքի կամ օգնության կարիքն ունեցողներին: Հետո էլ օգնի՛ր, որ կարողանամ նրանց հյուրասիրություն առաջարկել: Ամեն:

Սեր շուրջ մի՛ս էլ կլինեն կարիավորներ, և մեր սրբազան դարձականությունն է նրանց ցուցաբերել սեր ու հոգատարություն:

Երբ Յիսուսը քացախն առավ, ասաց. «Կատարվեց». և գլուխը խոնարհեցրեց, հոգին ավանդեց: (Յոզի. 19. 30)

ԳԻՆԸ

Միքելանջելոյի շատ գործեր են ներկայացնում զրվագներ Հիսուսի կյանքից, սակայն ամենացնցող պատկերներից մեկը ամենապարզն է նաև: 1540թ. նկարիչն իր ընկերոջ՝ Վիտորիա Կոլոնայի համար նկարեց Աստվածամորը՝ անշնչացած Քրիստոսը գրկում: Կավիճով արված այդ աշխատանքում Մարիամը, որդուն գրկած, նայում է երկինք: Մարիամի ետևում բարձրանում է խաչի ճառագայթը՝ վրան Դանթեի «Դրախտից» վերցված այս բառերը. «Նրանք չգիտեն, թե որքան արյուն է արժեցել»: Միքելանջելոյի ընտրած տողը շատ խորհրդանշական է, եթե իսկապես մտածենք Հիսուսի մահվան մասին և նկատի առնենք Նրա վճարած մեծ գինը:

Քրիստոսի վճարած գինը պարփակված է մահվան ժամին Իր արած հայտարարության մեջ. «Կատարվեց» (Հովհ. 19. 30): Այս արտահայտությունը զանազան ձևերով ու իմաստներով էր գործածվում, ցույց տալու համար, թե ինչ-որ հաշիվ է վճարված, պարտականություն է ամբողջացած, զոհ է մատուցված և գլուխգործոց է ավարտված: Դրանցից յուրաքանչյուրն էլ վերաբերում էր Հիսուսի՝ Խաչի վրա մեր փոխարեն արածին: Թերևս սրա համար էր, որ Պողոս առաքյալը գրեց. «Սակայն քավ լիցի, որ ես պարծենամ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհն ինձ համար խաչված է, ես էլ՝ աշխարհի համար» (Գաղ. 6.14):

Մեր փոխարեն գործելու Հիսուսի կամեցողությունը ապացույցն է այն բանի, թե Աստված որքան է սիրում մեզ:

Աղոթք - Յայր, երբ նայում եմ Յիսուսի՝ իմ փոխարեն արած զոհողությանը, խոնարհվում ու երախտապարտ եմ լինում:

Շնորհակալ եմ Յիսուսի և խաչի համար: Ամեն:

«Ամեն բան կատարվեց» խոսքը հավասար է Տեր Յիսուսի Խաչին: Իսկ ի՞նչ նշանակություն ունի այն քե՛զ համար:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ | Դատավորներ 16-18 և Դուկաս 7.1-30

Զորությունների՝ Տեր Աստված, ո՞վ է քեզ նման. հզոր ես դու, Տե՛ր, և ճշմարտությունդ քո շուրջն է: (Սաղմ. 88. 9)

ՆԱՎԱՐԿԵԼ ԱԼԻՔՆԵՐՈՒՄ

Մինչ ամուսինս Հավայան կղզու հորիզոններով զմայլված՝ նկարում էր դրանք, ես նստեցի ծովափի մի քարի վրա և սկսեցի մտածել իմ առողջական խնդիրների մասին: Հետագա քայլերս որոշելու համար ինձ խաղաղություն էր պետք: Ես նայում էի սև, ատամնավոր ժայռերին խփվող ալիքներին և հանկարծ դրանց մեջ ուշադրությունս գրավեց մի սև ստվեր: Տեսախցիկով մեծացրի այդ պատկերը և այն նմանեցրի ծովային մի կրիայի, որը հանդարտ լողում էր ալիքների վրա: Ես չկարողացա ժպիտս թաքցնել:

«Երկինքը պիտի պատմի քո հրաշագործությունը, Տե՛ր» (Սաղմ. 88.6): Մեր ամենագոր Աստվածը «տիրում է ծովի զորություններին և նրա ալիքների խռովքը հանդարտեցնում» (Հմ.10): «Քոնն է երկինքը և քոնն է երկիրը, աշխարհն իր մեջ եղածով դո՛ւ հաստատեցիր» (Հմ.12): Նա ստեղծեց ամեն ինչ, ինքն է ամեն ինչի Տերն ու տնօրինողը, ինքն է նպատակադրում և դրանք օգտագործում իր փառքի և մեր հաճույքի համար:

Կանգնելով մեր հավատքի հիմքերի վրա, որն է մեր անփոփոխ սերը Հոր հանդեպ, մենք կկարողանանք «քո երեսի լույսով ընթանալ» (Հմ.16): «Նա քո անվամբ պիտի ցնծա գիշեր-ցերեկ, ու քո արդարությունք բարձր պիտի լինի» (Հմ.17): Հոգ չէ, թե ինչպիսի ցավեր ենք մենք դիմագրավում, Աստված մեզ պահում է, երբ ալիքները մոլեգնում են:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ զորացնում ես ինձ, որպեսզի, խարսխված Քո ապացուցված հավատարմությամբ, կարողանամ արիաբար ու հավատով նավարկել կյանքի ալիքներում: Ամեն:

Կյանքում հարկ է լինում դժվարություններ հաղթահարել: Աղավիհելով մեր երկնավոր Հորը՝ կկարողանանք դրանց դեմ դուրս գալ:

Մարիամ Մագդաղենացին գալիս, աշակերտներին պատմում է, որ տեսել է Տիրոջը: (Յովհ. 20.18)

ՊԱՐՏԵԶԻ ՄԵԶ

Հայրս սիրում էր հին հոգևոր երգեր երգել: Եվ մենք նրա սիրած երգերից մեկը՝ «Պարտեզի մեջ»-ը կատարեցինք իր հուշարկավորութայան ժամանակ: Կրկներգը շատ պարզ է.«Նա քայլում է ինձ հետ և խոսում է ինձ հետ: Նա ասում է, որ ես իրենն եմ, և մեր կիսած ուրախութայան մասին ոչ ոք չգիտե»:

Այս երգը, ինչպես հորս էր ուրախացնում, այնպես էլ ինձ: Երգի հեղինակ Օսթին Մայլսը պատմում է, որ այն գրել է 1912-ին, երբ կարդացել է Հովհաննու Ավետարանի 20-րդ գլուխը: «Երբ կարդում էի այն, ասես մասնակցելիս լինեի այն տեսարանին, երբ Մարիամը ծունկի իջավ Տիրոջ առաջ և բացականչեց՝ «Վարդապետ»:

Հովհաննու 20-ում Մարիամ Մագդաղենացին լալիս է Տեր Հիսուսի գերեզմանի մոտ: Այնտեղ հանդիպում է մի մարդու, որը հարցնում է լացի պատճառը: Կարծելով, թե նա պարտիզպան է, Մարիամը խոսում է հարություն առած Փրկչի հետ և իմանում ճշմարտությունը: Նրա սուգը փոխվում է ուրախության, և շտապում է աշակերտների մոտ՝ հայտնելու, որ «տեսել է Տիրոջը» (հմ.18):

Մենք էլ ունենք այդ երաշխիքը, որ Հիսուսը հարություն է առել: Հիմա նա երկնքում է՝ Հոր հետ, բայց մեզ մենակ չի թողել: Քրիստոսին հավատացողներս կրում ենք Նրա հոգին, և իր միջոցով այն երաշխիքն ու ուրախությունը, թե նա մեզ հետ է, և մենք «իրենն ենք»:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, այնքա՛ն երախտապարտ ու շնորհակալ եմ, որ Դու կենդանի ես և ապրում ես մեր մեջ: Ամեն:

Մխիթարվի՛ր ու հանգսացի՛ր՝ իմանալով, որ կյանքի դժվարությունները միայնակ չես դիմագրավելու, որովհետև Ինքը քեզ հետ է:

Նրան իշխան պիտի կարգեմ հաստատուն մի տեղ: (Ես. 22.23)

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ ԽԱՐՍԽՎԱԾ

Մենք ապրում ենք մոտ հարյուրամյա մի գեղեցիկ տան մեջ: Մասնագետ շինարարը ինձ խորհուրդ տվեց, որ նույնիսկ պատին մի նկար փակցնելիս շատ զգուշ լինեմ կամ օգտագործեմ հատուկ կախիչ, որովհետև այն կարող է ընկնել, փշրվել, իսկ պատի վրա անցք գոյանալ:

Եսայի մարգարեն նման հաստատուն գամի մասին է գրել՝ նկարագրելով Եղիակիմ անունով սովորական մի մարդու: Վերջինը վստահում էր Աստծուն և ոչ թե կաշառակեր Սոմնասի (Ես.22. 15-19) կամ Իսրայելի ժողովրդի նման՝ իր ուժին (Հմ.8-11): Եվ զորությունների Տերը Եղիակիմին խոստանում է բարձր պաշտոն. «Նրան իշխան պիտի կարգեմ հաստատուն մի տեղ (Ես. 22.23): Աստծո ճշմարտության ու շնորհքին ամուր խարսխված լինելով՝ ամբողջ ընտանիքին ու ժողովրդին օգնական պիտի լինի (Հմ. 22-24):

Եսայի մարգարեն սթափեցնող մի հիշեցում է անում այն մասին, թե ոչ մեկը չի կարող գերագույն ապահովություն դառնալ իր բարեկամների կամ ընտանիքի համար, քանի որ բոլորս էլ սայթաքում ենք (Հմ. 25): Մեր կյանքի միակ անվերապահորեն վստահելի խարիսխը Տեր Հիսուսն է (Սաղմ. 61. 5-6, Մատթ. 7. 24): Երբ մենք, հոգատարություն ցուցաբերելով այլոց հանդեպ՝ նրանց բռն ենք թեթևացնում, նրանց նաև ուղղորդենք դեպի Հիսուսը, այն խարիսխը, որը բնավ չի ձախողելու:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ խարիսխ ես: Որպես Քո զավակը՝ գիտեմ, որ հաստատապես ցանվել եմ Քո մեջ:
Ամեն:

Եթե հաստատապես խարսխված ես Իրեն, կկարողանաս օգնել կյանքի բեռան Տակ կֆածներին:

Գոհանում եմ իմ Աստծուց ամեն անգամ, որ ձեզ հիշում եմ: (Փիլիպ, 1.3)

ՔՐԻՍՏՈՍՈՎ ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐ

Գափահասների զարգացման մասին Հարվարդի ուսումնասիրությունը տասնամյակների մի ծրագիր է, որն օգնում է ավելի լավ հասկանալ առողջ հարաբերությունների կարևորությունը: Հետազոտությունն սկսվել է 1930-ին՝ քոլեջի երկրորդ կուրսի 268 ուսանողներով և հետագայում ծավալվել՝ ներառելով նաև Բոստոնի 456 բնակիչների: Հետազոտողները հանդիպել են ծրագրի բոլոր մասնակիցներին, քննել նրանց բժշկական արձանագրությունները և հայտնաբերել, որ ուրախություն ու առողջության կարևորագույն գործոնը մտերիմ հարաբերություններն են: Եզրակացությունն այն է, որ եթե մեզ չըջապատենք ճիշտ մարդկանցով, հնարավոր է, որ ուրախության ավելի մեծ փորձառություն ունենանք:

Ասվածը արտացոլված է նաև Պողոս առաքյալի՝ փիլիպեցիներին ուղղված նամակի առաջին գլխում: Բանտից գրած նամակում նա ասում է. «Ամեն ժամանակ իմ բոլոր աղաչանքներում ձեր բոլորի համար աղոթք եմ անում ուրախությամբ» (Հմ.4): Սակայն նրանք սոսկ բարեկամներ չեն, այլ քույրեր ու եղբայրներ են՝ Հիսուսով, որոնք «հաղորդակից ու գործակից են եղել ավետարանին» (Հմ.7): Նրանց հարաբերությունը Աստծո սիրով ու Ավետարանով ձևավորված փոխադարձ բաժնեկցում ու ճշմարիտ հաղորդակցություն էր:

Այո՛: Բարեկամները շատ կարևոր են: Սակայն Քրիստոսով ընկերները, հավատակիցները ավելի ճշմարիտ ու խոր ուրախության կրողներ են:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ բարեկամության պարգևի համար: Օգնիր, որ իմ շնորհակալությունը հայտնեն նրանց, ովքեր հավատարիմ ընկերներ են եղել: Տու՛ր ինձ իրենց գորացնելու և քաջալերելու շնորհքը: Ամեն:

Ասծո սլած շնորհով կարող եմ մեր շուրջը հավաքել ընկերների ու բարեկամների և ծոխացնել մեր ուրախությունը:

Տիրոջ ամալը ցերեկները կանգնում էր խորանի վրա, իսկ գիշերները խորայեւացիների առաջ դրա վրա կրակ էր վառվում: (ԵԼՔ 40. 36)

ՐԱՍՏԻ ՈՒ ԲԱՐԱԿԻ ՄԻՋԵՎ

1 986թ. հունվարի 28-ին Միացյալ Նահանգների Չելենջեր տիեզերանավը թռիչքից ըոպեններ անց խորտակվեց: Ժողովրդին ուղղված ցավակցական խոսքում նախագահ Ռեյդանը մեջբերում կատարեց «Բարձր թռիչք» ոտանավորից, որում երկրորդ համաշխարհային պատերազմի օդաչու հեղինակը՝ Ջոն Գիլբեյս Մեգին, գրել էր «տիեզերքի անգերազանցելի սրբության» մասին և նկարագրել այն զգացողությունը, թե ձեռքդ մեկնելով՝ ասես հպվում ես «Աստծո դեմքին»:

Թեև տառացիորեն չենք կարող դիպչել Աստծո դեմքին, սակայն երբեմն ունենում ենք բնության գրկում միայնակ խորհրդածելու առիթներ, երբ մեզ թվում է, թե Նա մեզ շատ մոտ է: Ոմանք այս պահերը կոչում են «նուրբ տեղեր»: Այդպիսի պահերին երկինքն ու երկիրը բաժանող սահմանն ասես փոքրանում է կամ վերանում, և Աստված ավելի մոտ է թվում: Իսրայելցիները նույնպես հավանաբար անապատում ունեցել են այդ «նուրբ տեղերի» փորձառությունը, երբ զգացել են, որ Աստված իրենց մոտ է: Աստված նրանց առաջնորդելու համար ցերեկը տվեց ամպի, իսկ գիշերը՝ կրակի սյուն (ԵԼՔ 40. 34-36): Այդպիսով նրանք վստահ էին, որ ողջ երթի ընթացքում Աստված իրենց հետ էր:

Վայելելով Աստծո ստեղծագործության սքանչելի գեղեցկությունը՝ գիտակցենք, որ Աստված ներկա է ամեն տեղ: Երբ աղոթքով խոսում ենք Իր հետ կամ կարդում ենք Աստվածաշունչը, վայելում ենք Իր հետ որևէ վայրում և որևէ պահի հաղորդակցվելու պատեհությունը:

Աղոթք - Հայր, օգնիր, որ կարողանամ փնտրել ու գտնել քեզ, նույնիսկ երբ կորած լինեմ անապատում: Ամեն:

Մենք կարող ենք Աստծո հետ հանդիպելու հասուկ տեղ ունենալ, սակայն Նա մի՞հոս և ամենուր է:

Լավ է միս չուտել և գինի չխմել ու այն բանը չանել, որից քո եղբայրը գլորվում է, գայթակղվում , կամ տկարանում է: (Յոթն. 14.21)

ՍԱՆՁՈՂ ՍԵՐ

Սամոացի պատանիների մեծ մասը ձեռքերին դաջվածքներ են անում՝ ի նշան իրենց ժողովրդի ու պետությունից ղեկավարի հանդեպ ունեցած պատասխանատվության: Բայց դա նաև դժվարություններ է առաջացնում: Օրինակ Ճապոնիա մեկնող մարզիկները, իմանալով, որ այնտեղ իրենց դաջվածքները լավ չէ ընդունվելու, ստիպված էին մարմնագույն երկարաթև շապիկներ հագնել: Դա բարեկամություն ազնիվ արտահայտություն էր:

Անձնական ցանկություններն ու նախասիրություններն արտահայտելիս շատ կարևոր է ինքնասահմանափակման երևույթը, որ Պողոս առաքյալը նկարագրել է հռոմեացիներին ուղղված նամակում: Նա գրում է այն մասին, որ սերը երբեմն պահանջում է հանուն ուրիշների հրաժարվել որոշ բաներից, գնալ գոհողության: «Մեկը հավատում է, թե ամեն ինչ կարող է ուտել, բայց տկարը բանջար է ուտում»(Հռոմ. 14.2): Առաջին դարում սա կարող էր փոքր հարց դիտարկվել, բայց Հին Կտակարանի՝ ուտելիքի վերաբերյալ օրենքներին հավատարմությունը վիճելի էր: Պողոսը բոլորին թելադրեց, որ «այլևս իրար չդատեն» (Հմ.13) և իր խոսքը եզրափակելուց առաջ ասաց. «Լավ է միս չուտել և գինի չխմել ու այն բանը չանել, որից քո եղբայրը գլորվում է, գայթակղվում, կամ տկարանում է (Հմ. 21):

Միշտ էլ ուրիշին սիրելը նշանակում է սահմանափակել քո ազատությունը:

Աղոթք - Հայր, ուզում եմ լավ սիրել: Օգնիր ինձ՝ տեսնեմ, թե որտեղ պետք է ուրիշներին քաջալերեմ ազատություն ունենալ և որտեղ իմ ազատությունը սահմանափակեմ: Ամեն:

Մեր ազատությունը սանձելով կարողանանք ամրացնել ուրիշների հեռ մեր կառքերը:

Ողորմի՛ր ինձ, Աստված, ողորմի՛ր ինձ, քանզի քո թևերի հովանուն պիտի ապավինեմ: (Սաղմ. 56.2)

ՄԵՐԺԱԾԻՆ ԱՊԱՎԵՆ

Ջ որջ Ուայտֆիլդը տաղանդավոր ու ազդեցիկ քարոզիչն էր: Բայց նրա կյանքը հարթ չի ընթացել: Մեծ լսարան հավաքելու նպատակով բացօթյա քարոզներ անցկացնելու նրա սովորությունը քննադատության է արժանացել: Իր քննադատներին քարոզչի պատասխանների վրա լույս է սփռում Ուայտֆիլդի հետևյալ գրառումը. «Իմ նկարագրի մաքրության համար ես պատրաստ եմ սպասել մինչև Դատաստանի օրը և մեռնելուց հետո ուզում եմ ունենալ հետևյալ տապանագիրը. «Այստեղ հանգչում է Ջորջ Ուայտֆիլդը: Թե ինչպիսի մարդ էր նա, մեծ օրը հայտնի կդառնա»:

Հին Կտակարանում, երբ Դավիթին քննադատում էին, նա վստահեց Աստծուն: Երբ Սավուղ թագավորը նրան հանիրավի մեղադրեց, թե ինքը ապստամբություն է առաջնորդում, նա ստիպված էր թաքնվել քարանձավում: Իր այդ վիճակը նա այսպես է նկարագրում. «Գազանների մեջ էի: Մարդկանց որդիների ատամները գենք և նետ են, իսկ նրանց լեզուները՝ ինչպես սուր սուսեր» (Սաղմ. 56.4): Բայց այդ դժվարին կացության մեջ նա դարձավ Աստծուն և Նրա մեջ գտավ իր հանգիստը. «Քո ողորմության մեծությունը հասավ մինչև երկինք, և քո ճշմարտությունը՝ մինչև ամպերը» (Հմ. 11):

Եթե ուրիշները մեզ սխալ հասկանան կամ մերժեն, Աստված է մեր «ապավինը» (Հմ.2): Թող Նա հավիտյան փառավորվի՛ իր անխախտ ու ողորմած սիրո համար:

Աղոթք - Հայր, փառաբանում եմ Քեզ, որ կարողանամ հավիտյան ընդունելի լինել Քեզ համար, Քո Որդու համար: Քո կատարյալ սիրո մեջ ապաստան ունեմ: Ամեն:

Հուսահատության ու նեղության ժամանակ Ասված է մեր աղալենն ու զորությունը: Ուսի լսենք Նրան:

Ես պիտի ուրախանամ Տիրոջով: (Ամբ. 3.18)

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երբ բրիտանական հայտնի գրող Ք. Լուիսն իր կյանքը առաջին անգամ հանձնեց Հիսուսին, դիմադրեց Աստված պաշտելուն՝ այն համարելով «գայթակղություն»: Բայց նա հետագայում անդրադարձավ այն հարցին, որ «պաշտելու ընթացքում Աստված իր ներկայությունն է հայտնում» իր ժողովրդին: Մենք էլ «Աստծո հետ կատարյալ սիրով» ուրախություն ենք գտնում իր մեջ, ճիշտ այնպես, ինչպես «Հայելու մեջ արտացոլված պայծառությունը անբաժան է իր պայծառությունից»:

Դարեր առաջ այս եզրակացությունն էր հանգել Ամբակում մարգարեն: Հուգոյի ժողովրդին պատուհասած չարիքի համար Աստծուց գանգատվելուց հետո նա տեսավ, որ Աստծուն պաշտելը ուրախության է տանում: Ոչ թե այն բանով, որ Աստված է անում, այլ այն գիտակցմամբ, թե ինքը ո՛վ է: Հետևաբար, նույնիսկ ազգային կամ համաշխարհային ճգնաժամերի ժամանակ Աստծո գորությունը մեծ է: Ինչպես մարգարեն է հայտարարում. «Եթե անգամ թզենին իր պտուղը չտա, որթատունկը ծնունդ չունենա, ձիթենին բերք չտա, դաշտերը կերակուր չտան, հոտերը դադարեն արածելուց, և մսուրների մեջ եզներ չլինեն, ես պիտի ուրախանամ Տիրոջով, ուրախանամ իմ փրկիչ Աստուծով» (Ամբ. 3. 17-18):

Ինչպես Ք. Լուիսն է եզրակացնում «Ամբողջ աշխարհը փառաբանությանը է հնչում», այդպես էլ Ամբակումն է հանձնվում մշտապես Աստծուն փառաբանելուն՝ մեծ ուրախություն գտնելով Նրա մեջ, «որի ընթացքը հավիտենական է» (Հմ. 7):

Աղոթք - Սիրո՞ղ Աստված, նույնիսկ դժվար պահերին սրտիս մեջ և շրթունքներիս վրա դի՛ր ուրախությամբ Քեզ փառաբանելու հարուստ հոգին: Ամեն:

Ասծո բարության մասին մտածելիս հիշի՛ր երեք բան, որոնց համար կկարողանաս փառաբանել Իրեն:

Բազմաթիվ խորհուրդներ կան մարդուս սրտում, բայց Աստու խորհուրդը մնում է հավիտյան: (Առ. 19. 21)

ԱՆԿԱՏԱՐ ԾՐԱԳՐԵՐ

Նորակառույց համայնքային կենտրոնի նկուղում տեղակայված գրադարանում էի, երբ վերևից մի բարձր ձայն լսվեց, ու ամբողջ սենյակը ցնցվեց: Մի քանի ըոպե անց նույնը կրկնվեց, հետո էլի ու էլի: Զայրացած գրադարանավարը հայտնեց, որ ուղիղ մեր վերևում մարզասրահ է, որտեղ ծանրամարտիկներն են պարապում: Եվ ամեն անգամ ծանրածոլը զցելիս է այդ ցնցումը լինում: Ծարտարապետները այս շենքը նախագծելիս ամեն ինչ հաշվի առել էին, սակայն մոռացել էին գրադարանը հեռու պահել մարզասրահից:

Կյանքում նույնպես մեր ծրագրերը հաճախ են խաթարվում: Անտեսում ենք կարևոր նկատառումներ: Հաճախ լինում են չնախատեսված հանգամանքներ կամ անակնկալներ: Թեև գործողությունները ծրագրելը կօգնի խուսափել նյութական կամ ժամանակի կորուստներից, սակայն ամենամանրակրկիտ ռազմավարությունն անգամ չի կարող մեր կյանքից ջնջել բոլոր խնդիրները: Մենք ապրում ենք դրախտից դուրս եղող աշխարհում:

Աստու օգնությունը, սակայն, կարող ենք ապագա քայլերը խելամտորեն հաշվարկել և հավասարակշռություն գտնել (Առ. 6. 6-8) և դժվարությունները հաղթահարել: Աստված միշտ էլ կյանքում մեզ տված դժվարությունների մեջ նպատակ ունի: Նա կարող է դրանք օգտագործել մեր մեջ համբերություն զարգացնելու, մեր հավատը մեծացնելու և պարզապես մեզ իրեն մոտեցնելու համար: Աստվածաշունչը հիշեցնում է.«Բազմաթիվ խորհուրդներ կան մարդուս սրտում, բայց Աստու խորհուրդը մնում է հավիտյան» (Առ.19. 21):

Աղոթք - Հայր, հավատում եմ, որ ամեն ինչ Քո հսկողության ներքո է: Օգնիր, որ կարողանամ կյանքս շարունակել՝ Քեզ հանձնելով բոլոր ծրագրերս: Ամեն:

Կլինեն զհաղթ, երբ մեր ծրագրերը չեն իրականանա մեր ակնկալիքների նման, կարևորը Աստուն վստահելն է:

Թագավորն էլ կպատասխանի ու նրանց կասի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք»: (Մատթ. 25. 40)

ԾԱՌԱՅԵԼ «ՓՈՔԻ ՄԱՐԴԿԱՆՑ»

Անունը Սպենսեր է, բայց նրան բոլորը Սպենս են կանչում: Միջնակարգ դպրոցների վազքի չեմպիոնն էր: Հետո բարձր կրթաթոշակով ուսումը շարունակեց համալսարանում: Այժմ ապրում է Ամերիկայի խոշոր քաղաքներից մեկում և քիմիական ճարտարագիտությունից բնագավառի հայտնի մասնագետ է: Բայց եթե Սպենսին հարցնելու լինես, թե որն է մինչև հիմա իր ունեցած ամենամեծ հաջողությունը, նա հուզմունքով կպատմի ոչ թե իր գիտական հաջողությունների, այլ Նիկարագուա կատարած իր այցերի մասին, երբ գնում է ստուգելու իր օգնությունը անցկացված դասավանդման ծրագրի մասնակից փոքրիկների և նրանց ուսուցիչների վիճակը: Եվ կասի, թե իր կյանքը որքան է հարստացել նրանց ծառայելով:

«Փոքրերից մեկին» արտահայտությունը հաճախ են մարդիկ գործածում: Հիսուսն այն օգտագործեց նկարագրելու համար այն մարդկանց, ովքեր շատ քիչ ունեն կամ բոլորովին ոչինչ չունեն փոխհատուցելու մեր մատուցած ծառայությունից դիմաց: Նրանք այն կանայք, տղամարդիկ ու երեխաներն են, որոնց աշխարհը, եթե նույնիսկ չի մոռանում, գոնե անտեսում է: Սակայն Հիսուսը հենց այդ մարդկանց վիճակն է բարելավում, երբ ասում է. «Քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ի՛նձ արեցիք» (Մատթ. 25.40): Քրիստոսի ասածը հասկանալու համար պետք է համբավավոր համալսարանի դիպլոմ ունենալ: «Փոքրին» ծառայելը նույնն է, թե իրեն ես ծառայում: Իսկ դրա համար պետք է միայն կամեցող սիրտ ունենալ:

Աղոթք - Չիսու՛ս Թագավոր, խոսքդ հստակ է, կոչ ես անում պատրաստ լինել Քո անունով նույնիսկ ամենափոքրից ծառայել իմ շրջանակում: Ինձ քաջություն տու՛ր կատարելու դա: Ամեն:

Մեր շուրջը շատ «փոքր մարդիկ» կան, հարկավոր է նրանց թեստելու աջ և ծառայելու սիրտ ունենալ:

Միտքս բերելով այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ նախ քո Լորդա տասի ու քո Եվնիկե մոր մեջ բնակվեց. համոզված եմ, որ այն քեզանում էլ է. (Բ.Տիմ. 1.5)

ՀԱՎԱՏՔԻ ՍԱՌՆԱՓՐՓՈՒՐ

Ուսումնական տարվա նախօրյակին ես ու թոռնիկս զնացինք շուկա՝ համազգեստ զնելու: Ինչպես բոլոր երեխաները, թոռնիկս ևս շատ ոգևորված էր, և ես որոշել էի նրա ուրախությունը հրճվանքի վերածել: Վերջերս տեսել էի սուրճի մի գավաթ, որի վրա գրված էր.«Տատիկները մայրիկներ են՝ շատ սառնափրփուրներով»: Սառնափրփուրը զվարճության, հրճվանքի ու փայլի արտահայտություն է: Եվ դա իմ, որպես տատիկի, գործի իսկական սահմանումն էր: Այո՛, նույնիսկ ավելին:

Իր հոգեզավակ Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակում Պողոսը հիշում է նրա անկեղծ հավատքը և զնահատում նրա կապը իր Լորդա տատի և Եվնիկե մոր հետ (Բ.Տիմ. 1.5): Այդ կանայք այնպես էին ապրել իրենց հավատքը, որ Տիմոթեոսը ևս հավատացել էր Հիսուսին: Վստահաբար, Լորդան ու Եվնիկեն սիրել են Տիմոթեոսին, հոգացել նրա կարիքները: Սակայն նրանք դրանից ավելին էլ են արել: Պողոսը մատնանշում է նրանց մեջ բնակվող հավատքը, որ հետագայում փոխանցվել է Տիմոթեոսին:

Որպես տատ՝ իմ գործը դպրոցական համազգեստի «սառնափրփուրի» պահն ապահովելն էր: Բայց ես «սառնափրփուրային» այլ պահեր էլ եմ ունենում, երբ ճաշելիս, խաղալիս կամ Հիսուսի մասին երգ լսելիս հավատքով եմ կիսվում նրա հետ: Թող որ մենք էլ Լորդայի ու Եվնիկեի օրինակով ոգևորվենք ու մեր հավատքը կյանքի ցանկալի «սառնափրփուր» դառնա շատերի համար:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, օգնի՛ր, որ կարողանամ կյանքս անցկացնել հավատքս ապրելով և ուրիշների համար օրինակ դառնալով: Ամեն:

Մեր հավատքը դեռ է այնպես ամրաց, որ այն այլոց համար օրինակ լինի:

Դոգու պտուղը ամենայն բարությանը է, արդարությանը և ճշմարտությանը: (Եփ. 5.9)

ԱՊՐԻՐ ԱՍԵՍ ԱՌԱՎՈՏ Է

Երբ ճամփորդելու եմ լինում տարբեր ժամային գոտիներում, ամեն ջանք գործադրում եմ, որպեսզի խուսափեմ հոգնածությունից: Մի առիթով որոշեցի նույնացնել օդանավի և իմ հասանելիք վայրի ժամանակացույցը և փոխանակ մյուս ուղևորների հետ ընթրելու՝ շարունակեցի ֆիլմ դիտել և փորձեցի քնել: Չուտելը դժվար էր, բայց փոխարենը տեղ հասնելուց առաջ մեզ մատուցված նախաճաշը շատ ցանկալի եղավ: Փորձարկումն արդյունավետ էր: Օրգանիզմս վարժվեց նոր ժամային գոտուն:

Պողոսը գիտեր, որ եթե Հիսուսին հավատացողներն ուզեն Նրան ճշմարտապես արտացոլել իրենց կյանքում, պետք է իրենց շրջապատող աշխարհից այլ կերպ ապրեն: Նրանք մի ժամանակ «խավար էին», բայց հիմա «լույսի որդիներ են» (Եփ. 5.8): Պողոսը պատկերն ամբողջացնելու համար շարունակում է. «Հոգու պտուղը ամենայն բարությունն է, արդարությունն է և ճշմարտությունն է» (Հմ.9):

Ընթրիքի ժամանակ քնելը կարող է տարօրինակ թվալ նույն չվերթի մյուս ուղևորների համար, բայց մենք, որպես հավատացյալներ, կոչված ենք նույնիսկ գիշերը ապրել այնպես, ասես առավոտ է: Սա կարող է դժգոհություն առաջացնել, բայց Տեր Հիսուսի մեջ մենք կարող ենք «քայլել սիրո ճամփով»՝ հետևելով այն Մեկ օրինակին, որը «մեզ սիրեց ու իր անձը մեզ համար մահվան մատնեց՝ Աստծուն անուշահոտ ընծա և զոհ լինելու» (Հմ.2):

Աղոթք - Տեր Հիսուս, արթնացրու՝ ինձ Քեզանից եկած նոր օրով: Լցրու՝ ինձ Քո զորությամբ, որպեսզի կարողանամ ապրել «նույն ժամային գոտում»: Բաց աչքերս, որպեսզի կարողանամ ընտրել բարությունը, արդարությունն ու գեղեցկությունը: Ամեն:

Թեև աղոթում եմ այս աշխարհում, բայց մեր մեջ դեռ է ունենանք բարության, արդարության և գեղեցկության դիմումները:

Նրան սիրի՛ր քո անձի պես, որովհետև դուք էլ պանդուխտ եղաք եգիպտացիների երկրում: (Ղևտ. 19.34)

ՈՒՂԵԲԵՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ դպրոցի ուսուցիչ Կարենը մի ծրագիր ստեղծեց, որով իր աշակերտներին սովորեցնում էր, թե ինչպես կարելի է իրար լավ հասկանալ: Ծրագիրը նա կոչեց «Ուղեբեռի գործունեություն»: Էությունն այն էր, որ աշակերտները գրում էին իրենց կրած զգացական բեռների, իրենց հուզող հարցերի մասին, ապա անանուն այդ գրությունները տալիս էին միմյանց: Արդյունքն այն եղավ, որ աշակերտները շուտով իմացան միմյանց դժվարությունների մասին, և դասարանը լցվեց փոխադարձ հարգանքի ու կարեկցության զգացումներով: Աստվածաշնչում Աստված միշտ էլ Իր ժողովրդին հորդորում էր միմյանց հանդեպ պատվով լինել և փոխհարաբերություններում՝ կարեկից (Հռոմ. 12.15): Ղևտացիների գրքում Աստված իսրայելցիներին ուղղեց հատկապես օտարների հետ ունեցած հարաբերություններում կարեկից լինելու մասին խորհուրդը. «Նրան սիրի՛ր քո անձի պես, որովհետև դուք էլ պանդուխտ եղաք եգիպտացիների երկրում» (Ղևտ. 19.34):

Երբեմն մեր կրած դժվարությունները՝ բեռները, մեզ պատճառում են միայնություն ու բարեկամների շրջանում սխալ հասկացված լինելու զգացողություն: Մենք միշտ էլ, մեր մեջ ունենալով պանդուխտների, իսրայելցիների փորձառություն չենք ունենում: Սակայն դեռ կարող ենք հարգանք ու կարեկցական կեցվածք ունենալ նրանց հանդեպ, որոնց Աստված դրել է մեր ճանապարհին:

Աղոթք - Աստված, գիտես սրտիս ծանրությունը և շնորհքովդ կվերցնես բեռներս, երբ Քեզ վստահեմ: Օգնի՛ր, որ կարողանամ հոգածություն ու կարեկցանք ցուցաբերել ուրիշներին: Ամեն:

Մեր շուրջը կլինեն կարեկցամի կարոս մարդիկ: Ասված մեզ լիցավիրում է հոգասար լինել նրանց հանդեպ:

Եթե քո եղբայրը քո դեմ մեղանջի, նրան հանդիմանի՛ր, ու եթե ապաշխարի, նրան ների՛ր: (Պուկ. 17.3)

ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՁՏՈՒՄ

Անդրադառնալով այն հարցին, թե ինքը ինչպես ներեց Ռուանդայի ցեղասպանությունից ժամանակ իր ամուսնուն ու որդիներին սպանող Մանասեին, Բեաթան պատասխանեց. «Իմ ներելը հիմնված է Տեր Հիսուսի ասածի վրա: Նա իր վրա վերցրեց չարիքի պատիժը: Իր խաչը միակ տեղն է, որտեղ հաղթանակ ենք գտնում»: Մանասեն բանտից քանիցս զբել էր Բեաթային, ներում խնդրել նրանից ու Աստծուց նրան պատճառած ցավի համար: Ասել էր, որ ինքը տանջվում է իր գործածի համար: Սկզբում կինը չէր կարողացել խղճալ, ասել էր, որ ատում է նրան: Բայց հետո «Հիսուսը միջամտել էր իր խորհուրդներով» և Աստծո տված օգնությամբ մոտ երկու տարի անց ներել էր:

Իր այս քայլում Բեաթան հետևեց Հիսուսի՝ աշակերտներին տված խորհրդին՝ ներել ապաշխարողներին: Հիսուսն ասում է. «Եթե քո դեմ օրը յոթ անգամ մեղանջի ու յոթ անգամ քեզ մոտ դառնա և ասի՝ ապաշխարում եմ, նրան ների՛ր» (Պուկ. 17.4): Բայց ներելը դյուրին չէ՝ դատելով Հիսուսի աշակերտների ասածից. «Մեր հավատն ավելացրո՛ւ» (Հմ.5):

Բեաթայի հավատն ավելացավ, երբ աղոթքով պայքարեց ներելու իր անկարողության դեմ: Եթե մենք էլ նրա նման պայքարենք ներելու համար, կկարողանանք խնդրել Աստծուց, որ Իր Հոգու միջոցով մեզ էլ օգնի նույնը կատարել: Մեր հավատքը կավելանա և Նա կօգնի մեզ՝ ներել ուրիշներին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Քո խաչվելով ինձ ազատում ես մեղքերից: Փառաբանում եմ Քեզ: Ամեն:

Եթե քեզ մոտ որևէ մեղսագործ գղջա, դասրաս եղի՛ր Հիսուսի անունով ներել նրան:

Ուրախությամբ պիտի ելնեք և ցնծությամբ պիտի սովորեք: (Ես. 55.12)

ՊԱՏՈՒՅԱՆՆԵՐ

Քրոսաշրջիկը Հիմալայան լեռների ստորոտում զարմանքով նկատեց առանց պատուհանի տների մի շարք: Էքսկուրսավարը բացատրեց, որ այդ գյուղերի բնակիչները վախեցել են, որ քնած ժամանակ իրենց տները կարող են ոգիներ մտնել, և կառուցել են անպատուհան տներ: Սակայն եթե մեկը սկսի հետևել Հիսուսին, այդ մասին շուտով կիմացվի, որովհետև նա կսկսի պատուհաններ դնել, որպեսզի լույսը ներս թափանցի:

Նման փոփոխություն կարող է լինել նաև մեր մեջ, որը մենք նույն ձևով կարող ենք նաև չտեսնել: Մենք ապրում ենք ահագողու և ծայրահեղ ժամանակներում: Սատանան ու իր չար ոգիները մեզ պարտադրում են դառնազին բաժանումներ, երբ միմյանցից հեռանում են ընտանիքներն ու բարեկամները: Ես էլ հաճախ ունենում եմ պատի ետևում թաքնվելու ցանկություն, բայց Հիսուսն ուզում է, որ ես պատուհան բացեմ: Իսրայելի ժողովուրդն ուզում էր պատսպարվել բարձր պատերի ետևում, սակայն Աստված ասաց, որ իրենց ապահովությունը միայն Իր մեջ է: Նա իշխում է երկնքից և Իր Խոսքն է տիրում ամեն բանի վրա (Ես.55.10-11): Եթե Իսրայելի ժողովուրդը վերադառնար դեպի Ինքը, Աստված «պիտի ողորմար» (Հմ.7) իրենց ու վերականգնե՞ր՝ որպես Իր սեփական ժողովուրդը և գործածեր նրանց աշխարհը օրհնելու համար (Ծնն.12.1-3): Նրանց պիտի բարձրացներ ու առաջնորդեր հաղթական երթի «Եվ դա պիտի լինի հանուն Տիրոջ և ի նշան հավիտենականության ու չի նվազելու» (Ես. 55.13): Երբեմն պատերը անհրաժեշտ են: Բայց լավագույնը լուսամուտներով պատերն են: Դրանք աշխարհին ցույց են տալիս, որ մենք վստահում ենք Աստծուն:

Աղոթք - Ամենագոր Յայր, ողողի՛ր սիրտս Քո սիրո հանդեպ վստահությամբ: Ամեն:

Պաշտամունքի համար մի քանի պարիփ կա: Բայց կարևոր է, որ դրանք պատուհաններ ունենան, որպեսզի կարողանանք ցեսնել Տիրոջը:

Օրհնեալ լինի Տերը: (Ռոմ. 4. 14)

ԿԱՐԾՐ ՀՈՂ ԵՎ ՔՆՔՈՒՇ ՈՂՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Ջեյմսը վեց տարեկան էր, երբ իր ավագ եղբայր Դեյվիդը չմշկասահքի վթարի հետևանքով իր 14-ամյակի նախօրերին մահացավ: Դրանից հետո Ջեյմսը ամեն ինչ անում էր մխիթարելու իր մորը՝ Մակբեթին, որը չէր հաշտվում այն մտքի հետ, որ իր ավագ որդին կյանքից այդքան վաղ հեռացավ: Տասնամյակներ անց էլ Ջեյմսի մտքում պտտվում էր չձեռացող երեխայի գաղափարը, որը պետք է դառնար մանուկների սիրած հերոս Փիթեր Փենը, որը, ըստ պատմության, երբեք չի ծերանում:

Որքա՛ն մխիթարական է այդ խորհուրդը, թե Աստված իր հավիտենական ստեղծագործությունը կարող է ամենադժվարին իրավիճակներում նույնիսկ բարին առաջացնել: Դրա ամենագեղեցիկ օրինակը մենք տեսնում ենք Հին Կտակարանի Հռութի պատմության մեջ, որտեղ Նոոմինը կորցրեց իր երկու որդիներին: Իսկ այրի հարսը որոշեց նրա հետ մնալ և իր Աստծուն ծառայել (Հռութ. 1.16): Եվ Աստված նրանց անակնկալ ուրախություն պարգևեց. Հռութն ամուսնացավ ու որդի ունեցավ: «Նրա անունը Օբեդ դրին: Նա Դավթի հոր՝ Հեսսեի հայրն է» (4.17): Նրա անունը նաև Հիսուսի ազգատոհմում կա (Մատթ. 1.5): Աստծո քնքուշ ողորմությունը հասնում է մեր գիտակցության հնարավորություններից անդին և հանդիպում է մեզ զարմանալի տեղերում: Շարունակի՛ր որոնել: Գուցե հենց այսօր տեսնես այն:

Աղոթք - Սիրող Հայր, շնորհակալ եմ, որ մի օր բոլոր արցունքներս սրբելու ես: Որովհետև Դու ավելի մեծ ես իմ դիմագրավելիք որևէ ցավից ու տագնապից: Ամեն:

Փորձություններն ու նեղությունները անդակաս են մեր կյանքում, սակայն Աստված դրանց մեջ գտնում է բարին:

Աստծու արքայությունը խնդրեցեք: (Պուկ. 12.31)

ՎԱԽՈՎ ՄԱՔՐՎԱԾ

2020-ին կորոնավիրուսի բռնկումը աշխարհը մատնեց սարսափի: Մարդիկ ու երկրները պարտադրվեցին մեկուսացման, փակվեցին ճանապարհները, չեղյալ հայտարարվեցին թուիչքներն ու ծրագրերը: Իսկ նրանք, ովքեր ապրում էին այնպիսի վայրերում, որտեղ այդ վարակը դեռ չկար, վախենում էին, որ իրենք էլ կվարակվեն: Հոգեբան Գրասամ Դեյվին վստահ է, որ բացասական շեշտադրմամբ հաղորդումները մարդուն դարձնում են ավելի տխուր ու մտահոգ: Սոցիալական ցանցերում մի նյութ էր շրջանառվում, որում մարդկանց հարցնում էին, թե ինչպես կարելի է չմտահոգվել: Որպես պատասխան՝ նույն սենյակում գտնվող մեկ ուրիշը շրջեց հեռուստացույցի ալիքը և ասաց, որ իր պատասխանն է՝ ուշադրությունը շեղել այդ թեմայից, հետևել այլ նյութերի:

Ղուկասի Ավետարանի 12-րդ գլուխը չմտահոգվելու համար ևս մեկ խորհուրդ է տալիս. «Աստծու արքայությունը խնդրեցեք» (Հմ.31): Իսկապես, երբ կենտրոնանում ենք իր հետևորդներին տրվելիք երկնային ժառանգությունների վրա, Նրա արքայությունն ենք խնդրում: Դժվարություններ դիմագրավելիս կարող ենք փոխել մեր կենտրոնացման ուղղությունը և հիշել, որ Աստված տեսնում է ու գիտե մեր կարիքները (Հմ.24-30): Հիսուսը քաջալերում է իր աշակերտներին՝ ասելով. «Մի՛ վախեցիր, փո՛քր հոտ, որովհետև քո Հայրը հաճեց արքայությունը տալ ձեզ» (Հմ.32): Աստված ուրախանում է մեզ օրհնելով: Եկե՛ք պաշտենք իրեն՝ իմանալով, որ Նա մեզ համար հոգում է երկնքի թռչուններից ու դաշտի շուշաններից ավելի (Հմ.22-29):

Աղոթք - Սիրող Հայր, օգնիր ինձ, որ փոխանակ վախի ու մտահոգության մեջ ապրելու՝ կարողանամ կենտրոնանալ Քո հոգատարության վրա: Ամեն:

Վախե՛ր ու մտահոգություններ մի՛ս էլ կլինեն, բայց կարևորը Աստ՞ծո թագավորությունը խնդրելն է:

Ձեզ ուրիշ Մխիթարիչ կտա, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի: (Յոզի. 14. 16)

ՀԻՍՈՒՄԻ ԽՈՍՏՈՒՄԸ ՔԵՉ

Ձեյտոնը լացեց, երբ ծնողները իրեն հանձնեցին էյմիլին: Երկու տարեկան երեխայի համար մանկամսուր գնալը առաջին փորձությունն էր: Դաստիարակչուհին նրան բազում գայթակղիչ խոստումներ տվեց, խաղալիքներով ու գրքերով փորձեց հրապուրել, բայց իզուր: Երեխան ճշում էր: Այդ ժամանակ էյմիլն նրա ականջին շշնջաց. «Ես քեզ հետ եմ մնալու», և երեխան խաղաղվեց:

Հիսուսը իր խաչելության շաբաթվա ընթացքում բարեկամներին նման մխիթարական խոսքեր էր ասում. «Ձեզ ուրիշ Մխիթարիչ կտա, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի: Ծշմարտության Հոգին» (Հովհ. 14. 16-17): Իսկ հարությունից հետո նա այս խոստումը տվեց. «Ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20): Հիսուսը շուտով երկինք պիտի համբառնար, բայց Հոգին ուղարկելու էր «մնալու» և ապրելու իր ժողովրդի մեջ:

Մենք Հոգու մխիթարության ու խաղաղության փորձառություն ենք ունենում, երբ մեր արցունքները հոսում են: Ստանում ենք իր առաջնորդությունը, երբ խորհում ենք, թե ինչ ենք անելու (Եփ. 1.17-20): Նա օգնում է մեզ մեր տկարության պահին և աղոթում մեզ համար (Հռոմ. 8.26-27):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, որքա՜ն շնորհակալ եմ, որ Դու իմ կողքին ես մնում: Քեզ կարոտ եմ, Տեր: Ամեն:

Վախի, ցավի ու կասկածի մեջ հիփի՛ր Տեր Հիսուսի խոսումը. «Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վերջը»:

Սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրույթը, բայց խիստ խոսքը բարկություն է հարուցում: (Առ. 15.1)

ԴԺՎԱՐ ՄԱՐԴԻԿ

Լյուսի Ուորսլին բրիտանացի պատմաբան է և հեռուստահաղորդավար: Բոլոր հանրային մարդկանց նման նա էլ է երբեմն զգվելի նամակներ ստանում: Նրա պարագայում դրանք հիմնականում վերաբերում են իր արտասանությունը, խոսքի հնչերանգին և այլն: Մեկը ուղղակի գրել էր. «Լյուսի, խնդրում եմ՝ աշխատի՛ր ճիշտ արտաբերել «ր» հնչյունը կամ բացառի՛ր այն քո խոսքում: Չկարողացա ամբողջ հաղորդմանը հետևել, որովհետև նյարդայնացա: Հարգանքով՝ Դերեն»:
Որոշ մարդիկ այսպիսի նամակին նույնպիսի կոշտ պատասխան կտային: Բայց Լյուսին այսպես պատասխանեց. «Օհ, Դերեն, կարծում եմ, որ կեղծ անունով ես հանդես եկել՝ ասելու համար մի բան, որ երեսիս չես կարողանա ասել: Խնդրում եմ վերանայիր քո ոչ այնքան ազնիվ խոսքերը: Լյուսի»:

Հաղորդավարի այս հավասարակշռված խոսքերն ազդեցություն ունեցան: Դերենը ներողություն խնդրեց և երգվեց այլևս երբեք որևէ մեկին նման նամակ չուղարկել:

«Սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրույթը, - ասում է Առակների գիրքը, - բայց խիստ խոսքը բարկություն է հարուցում» (Առ. 15.1): «Ձայրացկոտ մարդը կռիվ է հարուցում, բայց համբերատարը խաղաղեցնում է այն» (Հմ.18): Երբ որևէ գործընկերոջից, ընտանիքի անդամից կամ անձանոթից ստանանք քննադատական ակնարկ կամ դիտողություն, կարող ենք ընտրել՝ բարկություն խոսքերով պատասխանել, որը հրահրիչ ու գրգռիչ կլինի, թե՞ մեղմորեն, որը կմարի ու կհարթի խնդիրը:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, ինձ կարողություն տու՛ր, որ սադրիչ մարդկանց համբերատար ու ազնիվ խոսքերով պատասխանեմ: Ամեն:

Մեր դեմ վաս խոսողներ մի՛ս էլ կլինեն, կարևորը նրանց հանդեմ ազնիվ ու համբերատար վերաբերմունք ունենալն է:

Մեր բոլոր նեղությունների ժամանակ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են: (Բ.Կորնթ. 1.4)

ԲՈԼՈՐ ՄՆԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԸ

Ռազամես անունով կատվին, որին տերը հանձնեց կենդանիների ապաստարան, որովհետև կարծում էր, որ անհույս հիվանդ է: Բայց կատուն բուժվեց և դարձավ ապաստարանի մշտական բնակիչներից:

Այս պատմությունը մի փոքր պատկեր է այն մասին, թե ինչ է անում մեր սիրո Աստվածը մեզ համար, և ի պատասխան մենք ինչ կարող ենք անել ուրիշներին: Նա հիվանդություն ու դժվարություն ժամանակ հոգում է մեր մասին և հանգստացնում իր ներկայությունը: Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված երկրորդ նամակում մեր Աստծուն անվանում է «գլխությունների Հայր և ամեն մխիթարություն Աստված»(Հմ.1.3): Երբ հուսահատ ենք, ճնշված ու վատ վերաբերմունքի արժանացած, ինքը մեզ մոտ է լինում՝ մեզ օգնելու համար: Երբ աղոթքով դառնում ենք իրեն, «մեր բոլոր նեղությունների ժամանակ մխիթարում է մեզ» (Հմ.4):

Սակայն 4-րդ համարը դրանով չի պարտվում: Պողոսը, որ ծանր տառապանքի միջով էր անցել, շարունակում է. «որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, ա՛յն մխիթարությունը, որով մենք մխիթարվում ենք Աստծուց» (Հմ.4): Մեր Հայրը մխիթարում է մեզ, և մենք զգալով այն ունենում ենք ուրիշներին մխիթարելու կարողություն:

«Որովհետև ինչպես որ Քրիստոսի չարչարանքները մեր մեջ ավելանում են, այնպես էլ Քրիստոսի միջոցով մեր մխիթարությունը շատանում է» (Հմ.5):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ ցավի ու նեղության պահերին Քո մխիթարող ներկայության համար: Օգնի՛ր, որ ես էլ իմ հերթին ուրիշներին կարողանամ մխիթարել: Ամեն:

Եթե ունեն՛ս Ասծո մխիթարությունը, դասրաս լինեն՛ս Տիրոջ շնորհով ուրիշներին մխիթարելու միջոց լինել:

Միայն ձեր անձի շահերին չնայեք, այլ ամեն մեկն իր ընկերոջն էլ: (Փիլիպ. 2.4)

ՏԵՍՆԵԼ ՆՈՐՈՎԻ

Տեսախաղերում հարյուրավոր խաղացողներ են մասնակցում մրցմանը: Նրանք հերթով դուրս են գալիս խաղից, մինչև որ մնում է մեկը: Ամբողջ ընթացքում խաղից դուրս եկողները կարող են շարունակել հետևել մյուսների քայլերին և խաղը դիտարկել նրանց տեսանկյունից: Ինչպես թղթակիցներից մեկն է գրել.«Երբ մտնում ես ուրիշ խաղացողի կոշիկի մեջ և ունենում ես նրա ապրումները, զգացական արձանագրությունը ինքնապաշտպանությունից վերափոխվում է հավաքական գորակցություն: Եվ դու սկսում ես հասկանալ քո կողքինին»:

Նման վերափոխում է լինում այն ժամանակ, երբ մենք ցանկություն ենք հայտնում տեսնել ուրիշների փորձը, զգալ այլոց ցավը, վախը կամ հույսը: Երբ հետևենք Հիսուսի օրինակին և «ոչ մի բան չլինի հակառակությունը և ոչ էլ սնապարծությունը, այլ խոնարհությունը մեկը մյուսին իր անձից ավելի լավ համարելով» (Փիլիպ. 2.3), կտեսնենք բաներ, որ մինչ այդ չէինք նկատել: Այդպիսով մեր մտահոգություններն ու հարցերը կավելանան: Միայն մեր խնդիրներով զբաղվելու փոխարեն կսկսենք այլոց կարիքների մասին էլ հիշել, «մեր անձի շահերին նայելուց բացի, մեր ընկերոջ մասին էլ մտածել» (Հմ.4): Մեր հաջողություններով ուրախանալուց բացի՝ կսկսենք նաև ուրիշների զարգացմամբ ուրախանալ: Վերափոխման այս երևույթը մեզ կպարզևի կարեկից հոգի և մենք մեր ընտանիքը սիրելու նոր միջոցներ կգտնենք:

Աղոթք - Տե՛ր, հաճախ միայն իմ վախերի ու ցավերի մասին եմ մտածում: Օգնի՛ր, որ կարողանամ տեսնել նաև քույրերիս ու եղբայրներիս: Ուզում եմ իրապես տեսնել ու սիրել իրենց: Ամեն:

**Աստված մեզ հրավիրում է, որ կարողանանք ուրիշներին
սեսնել մեր սեսանկյունից:**

Անգագամն ասաց իր սրտում, թե չկա Աստված: (Սաղմ. 13.1)

ԱՍՏՎԱԾ ԱՅՍՏԵՂ Է՝ ՄԵՉ ՀԵՏ

«Ու՞ր էր Աստված Մեծ եղեռնի ժամանակ: Ու՞ր էր 2020-ի սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան պատերազմի ժամանակ, երբ մենք հազարավոր զոհեր տվեցինք, և մեր քաղաքներն ու գյուղերը կործանվեցին»: Այս հարցը մենք հաճախ ենք տալիս, երբ հայտնվում ենք այս կամ այն ծանր կացություն մեջ, երբ մեր ազգը դիմազրավում է թշնամական ծանր արհաժիրքը: Որպես ճշմարիտ հավատացյալներ՝ մենք էլ ընդվզումով նույն հարցն ենք տալիս և խորհում ենք, թե Աստված լքել է մեզ: Եվ ողբում, թե ինչո՞ւ է այս ճակատագիրը բաժին ընկել առաջին քրիստոնյա ժողովրդին: Սակայն կան նաև հավատացյալներ, որոնք զարմանալիորեն ասում են, թե մեր տառապանքի ու ազգի նահատակության պահին Աստված մեզ հետ էր: Նման հավատքի տեր մարդկանց թիվը բավական մեծ է: Մեծ եղեռնի «մահվան ստվերների ձորով» անցած ու վերապրածներից յուրաքանչյուրն ունի փրկության իր պատմությունը, որը վկայում է, որ Աստված ինչ-որ կերպ կողքին է եղել իր տառապանքի մեջ: Արցախի ռազմաճակատում մարտնչող երիտասարդը, Հիսուսի անունը շուրթերին, պաշտպանում էր հող հայրենին: Վերապրող հավատացյալների համոզմամբ՝ Աստված այնտեղ էր՝ քանդված տաճարներում, ավերված գյուղերում, որբանոցներում, ամենուրեք: Մեզ զորացնող ու քաջալերող Աստվածը մեռելներից հարուստուն տվեց ցեղասպանությանը զոհ զնացած հայոց ազգին: Այնտե՛ղ էր մեր Աստվածը ու հիմա էլ մեզ հետ է: Մենք իր շնորհիվ պիտի համառորեն ապրենք:

Աղոթք - Հայր Աստված, Դու՛ ես մեր հույսը, վստահությունն ու ապավենը: Որտեղ էլ լինենք, Դու մեզ հետ ես, մեր կողքին: Ամեն:

Երբ քեզ հարցնեն, թե «Ո՞ւր եր Աստված», վստահ դասասխանի՛ր. «Այնտեղ եր՝ մեզ հետ»:

Արդոյք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատվիրել էի, որ չուտես: (ԾՆՈ. 3.11)

ԲՈՒԺԻՉ ԾԱՌԸ

300 հազար դուլարով կարող ես Մաքլարեն մակնիշի սպորտա-
յին շքեղ ավտոմեքենա գնել: Եվ բնականաբար, կուզենաս
փորձել 710 ձիաուժ հզորությամբ մեքենայիդ բոլոր հնարավոր-
ությունները: Այդպես Վիրջինիա նահանգից մեկը փորձեց և
տեսավ, որ իր Մաքլարենն այնքան «արագընթաց» էր, որ մեկ
օրում շքեղ ավտոսրահից հասավ մետաղի ջարդոնի վայր:
Առաջին իսկ օրը նա մեքենայով հարվածեց ծառին, և բարե-
բախտություն էր, որ ինքը ողջ մնաց:

Աստվածաշնչի առաջին իսկ էջերում, դեռ երրորդ գլխին
չհասած, տեսնում ենք, թե ինչպես մի սխալ ընտրությունն
աղավաղեց Աստծո ամբողջ ստեղծագործությունը: Ադամն ու
Եվան կերան այն մեկ ծառի պտուղը, որից չպետք է ուտեին
(ԾՆՈ.3.11):

Պատմությունը նոր-նոր էր սկսվել, և դրախտը նզովվեց (Հմ.
14-19): Մեկ ուրիշ ծառի դերակատարմամբ էլ պետք է այդ
նզովքը վերանար: Այդ ծառը խաչն է, որ Հիսուսն կրեց մեր
փոխարեն: Իր մահով նա փրկեց մեր՝ իր հետ ունենալիք ապա-
գան (Բ.Օր.21.23, Գաղ. 3.13):

Նոր Կտակարանի վերջին գրքում կարդում ենք «կենաց ծա-
ռի» մասին, որն աճում է «մաքուր գետի մոտ, կենդանի ջրի
բյուրեղի նման փայլուն»(Հայտ. 22.1-2): Հովհաննեսն ասում է,
որ այդ ծառը լինելու է «ազգերին բժշկելու համար» (Հմ.2) և
վստահեցնում, որ «Այլևս նզովք բնավ չի լինի» (Հմ.3): Աստծո
պատմությունը գալիս է մեր երազած «ուրախ կյանքի» հա-
մար:

Աղոթք - Հայր, մի՛ թող, որ մոռանամ այն մեծ գինը, որ
վճարեց Քո Որդին՝ նզովքը վերացնելու և մեզ կրկին դրախտ
առաջնորդելու համար: Ես պարզապես շնորհակալ եմ լինելու
և կյանքս տալու եմ Քեզ: Ամեն:

**Սեր Տեր Հիսուսը խաչի վրա Իր կյանքը սվեց մեզ համար:
Քեզ և ինձ մնում է մեր կյանքը հանձնել Իրեն:**

Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով իրար համբերելով: (Եփ. 4.2)

ՄԵՐ ԱՄԵՆԱՎԱՏ ՎԻՃԱԿԻ ՄԵՁ

«Տանելի է, սակայն բավարար չափով գեղեցիկ չէ ինձ փորձելու համար»: Զ. Օստինի «Հպարտություն և նախապաշարում» վեպի հերոս միստր Դարսիի այս խոսքը և այդ գրքի ազդեցությունն ինձ վրա ես երբեք չեմ մոռանա: Որովհետև այդ նախադասությունը կարդալուց հետո որոշեցի, որ ես չեմ սիրում այդ հերոսին:

Բայց ես սխալվում էի: Օստինի հերոսուհի Էլիզաբեթ Բեննեթի նման ես էլ դժկամորեն, բայց աստիճանաբար սկսեցի փոխել միտքս: Նրա նման ես էլ չէի կամենում ճանաչել միստր Դարսիի ամբողջ նկարագիրը և կառչում էի այդ մեկ պահից: Վեպն ամբողջությամբ կարդալուց հետո սկսեցի մտածել, թե կյանքում ում հանդեպ եմ նույն սխալն արել: Ի՞նչ բարեկամություններ անելու առիթներ եմ կորցրել, որովհետև չեմ ուզել հրաժարվել ուրիշներին կտրուկ դատելուց:

Հիսուսին հավատալու գլխավոր կռվանը մեր ամենավատ վիճակում Իր կողմից տեսնվելու, սիրվելու և ողջագուրվելու մեջ է (Հռոմ.5.8, Ա.Հովհ. 4.19): Մենք կարող ենք մեր հին ու սխալ կյանքը Քրիստոսին հանձնել (Եփ. 4. 23-24) ու երջանկություն ունենալ հասկանալու, որ այլևս մենակ չենք, այլ Աստծո ընտանիքի մի մասն ենք, «մի մարմին», որի անդամները սովորում են քայլել «իսկական ու անվերապահ սիրո ճանապարհով» (Հմ.5.2): Հիշելով, թե Քրիստոսն ինչ է արել մեզ համար (Հմ.2), ինչպե՞ս կարող ենք չջանկանալ ուրիշներին տեսնել այնպես, ինչպես Ինքն է մեզ տեսնում:

Աղոթք - Հայր, իսկապես դժվար է երբեմն հրաժարվել քննադատելու և ուրիշների հետ համեմատվելու մղումն: Օգնիր, որ կարողանամ փոխել դա իմ մեջ և հիշել, որ ես սիրված եմ այնպես, ինչպես որ կամ: Ամեն:

Շատ հեշտ է սխալ դասողություններ անել ուրիշների մասին: Սակայն դրանից կարելի է ձերբազատվել Տիրոջ շնորհով:

Իմաստունի սիրտը իր աջ կողմն է, հիմարի սիրտը՝ իր ձախ կողմը: Երբ հիմարը ճանապարհի գնա, պիտի երևա, որ խելքը պակաս է, և ինչի մասին էլ նա մտածի՝ ամբողջն անմտություն է: (Ժող. 10. 2-3)

ՍՈՎՈՐԵԼ ԱՆՏՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Ավստրալիայում մի մարդ մտնում է խանութ և վաճառողին խնդրում իր 20 դոլարանոցը մանրել: Բայց երբ աշխատակիցը դարակը բացում է, որ փողը մանրի, այցելուն գենքը պահում է նրա վրա և պահանջում ամբողջ գումարը: Խանութի աշխատակիցը կատարում է նրա պահանջը: Նա, դարակի վրա թողնելով իր 20 դոլարանոցը, վերցնում է մյուս գումարը և հեռանում: Իսկ դարակի մեջ ընդամենը 15 դոլար էր:

Մենք էլ, թեկուզ ոչ այդ գողի նման, բայց հաճախ ենք հիմարություններ անում: Ելքը մեր հիմար քայլերից դասեր քաղելն է: Մեր խեղճ ու չմտածված ընտրությունները կարող են սովորություն դառնալ, որոնք բացասաբար կձևավորեն մեր նկարագիրը: Մենք էլ կարող ենք «անմիտ լինել, որը խելապակասություն է» (Ժող. 10.3):

Երբեմն դժվար է ընդունել մեր սխալը, որովհետև դա հավելյալ ջանքեր է պահանջում և բացի դրանից՝ նաև կարող է ցավազին լինել: Բայց ճիշտը խոստովանելն է, որ դա եղել է մեր թեթևամտության պատճառով և հաջորդ անգամ ավելի զգուշ լինել նույնը չկրկնելու համար: Ինչ էլ լինեն պատճառները, մեր անմիտ քայլերը չպետք է անտեսենք:

Բարեբախտաբար, Աստված կարող է, մեր անմտությունները կարգավորելով, ձևավորել մեզ: Այդ կարգավորումները երբեմն կարող են «հաճելի չլինել», բայց հետագայում բարի պտուղ են տալիս (Եբ. 12.11): Ընդունենք մեր Երկնավոր Հոր կարգավորումները և խնդրենք Իրենից, որ մեզ դարձնի Իր փափագած զավակների նման:

Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ հիմարությունս օգտագործում ես ինձ մարգելու համար: Թող որ ընդունեն Քո կարգավորումները, երբ շարունակում ես ինձ դաստիարակել: Ամեն:

Անմտություններն ու հիմար քայլերը բացառված չեն: Բայց կարևորը այդ սխալներից դասեր առնելն է:

Դարձի՛ր, հոգի՛դ իմ, դեպի հանգիստը քո, քանզի Տերն օգնեց քեզ:
(Սաղմ.114.7)

ԳՐԿԱԽԱՌՆԿԵԼ

Դուստրս խնդրեց, որ կարդամ իր համար: Խնդրանքն անսովոր է, իհարկե, մանկան համար: Բայց աղջիկս տասնմեկ տարեկան է, և հիմա հազվադեպ է նման բան խնդրում: Ես ուրախությամբ համաձայնեցի և նստեցի իր կողքին:

Երբ սկսեցի կարդալ «Մատանու ընկերակցությունից» մի հատված, նա գրկեց ինձ: Դա երջանկության պահ էր ինձ համար, որովհետև զգում էի Հոր՝ մեր հանդեպ ունեցած կատարյալ սերը և Նրա փափազը՝ Իր ներկայությամբ գրկախառնվելու:

Այդ պահին հասկացա, որ ես շատ նման եմ տասնմեկամյա դստերս և ավելի շատ կենտրոնացած եմ իմ անկախ լինելու վրա: Հեշտ է հեռու մնալ Աստծո՝ մեր հանդեպ սիրուց: Սեր, որը քնքուշ է ու պաշտպանող, ինչպես Սաղմոս 114-ում է նկարագրված.«գլխառատ է ու արդար» (ճմ.5): Այնպես որ, ես էլ աղջկաս նման կարող եմ Նրան գրկել ու ինձ ապահով զգալ:

114-րդ սաղմոսի 7-րդ կետը թելադրում է, որ կարիք ունենք Աստծո բարի սիրո մասին մշտական հիշեցման և Իր սպասող բազուկներին փարվելու. «Դարձի՛ր, հոգի՛դ իմ, դեպի հանգիստը քո, քանզի Տերն օգնեց քեզ»: Այո՛, նա միշտ էլ օգնել է մեզ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ իմ հանդեպ Քո կատարյալ սիրո համար: Օգնի՛ր, որ հիշեմ այդ սերը և հանգստանամ Քո բարությամբ:

Մեր երկնավոր Հոր սերը մեծ է ու ջերմ: Արժե մոտենալ Իրեն ու փարվել Իր բազուկներին:

Եթե այս բանն անես, Աստված կզորացնի քեզ, դու կկարողանաս տոկալ, և ողջ ժողովուրդը խաղաղությամբ կվերադառնա իր տեղը: (Ել.18. 23)

ԳՈՐԾԵԼ ՄԻԱՍԻՆ

Ջոն օրը տասներկու ժամից ավելի աշխատում է, երբեմն առանց հանգստանալու: Բարեսիրական գործի բնույթն է այդպիսին է, մարդուց պահանջում է շատ ժամանակ ու ջանք, ինչի հետևանքն այն է լինում, որ ընտանիքին համար շատ քիչ ժամանակ է մնում: Տեղական ծանրաբեռնվածությունից պատճառով Ջոն հիվանդանոց ընկավ: Բարեկամներից մեկն առաջարկեց նրան օգնելու համար խումբ կազմել: Թեև նա սկզբում խուսափում էր ընդունել առաջարկը, սակայն ի վերջո համաձայնեց, որ չի կարող այդպես շարունակել: Նա համաձայնեց վստահել ընկերոջն ու Աստծուն և պարտականությունների մի մասը տվեց այդ խմբին: Մեկ տարի անց Ջոն հասկացավ, որ բարեսիրությունն ու իր ընտանիքը չպիտի կարողանային զարգանալ, եթե ինքը մերժած լիներ Աստծո՝ իրեն տրամադրած օգնությունը: Աստված մարդկանց չձևավորեց, որ ծաղկեն առանց սիրո շրջանակի օժանդակություն: Ելքի 18-ում Մովսեսն անապատում առաջնորդում էր Իսրայելի ժողովրդին և փորձում նրանց ծառայել թե՛ որպես ուսուցիչ, թե՛ խորհրդատու, և թե՛ դատավոր: Երբ նրա աները՝ Յոթորը, այցելեց իրեն և տեսավ, թե միայնակ ինչ ծանր աշխատանք է կատարում, ասաց. «Սոսկալի տանջանքներով ես տանջվում դու և քեզ հետ եղող ամբողջ ժողովուրդը: Քեզ համար ծանր է այդ գործը, դա միայնակ անել չես կարող» (Ել.18.18): Եվ խորհուրդ տվեց Մովսեսին այդ հսկայական բեռը կիսել իր հավատարիմ մարդկանց հետ: Մովսեսն ընդունեց օգնությունն ու ամբողջ ժողովուրդն օգտվեց դրանից: Վստահ լինելով, որ Աստված գործում է բոլոր մարդկանց մեջ ու միջոցով և միասին գործելով՝ մենք կգտնենք իսկական հանգիստ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ: Չես ուզում, որ կյանքի դժվարությունները դիմագրավեմ առանց Քո կամ ուրիշների օգնության: Ամեն:

Մեր ուսերին դրված դարձականությունը երբեմն կարող է ծանր լինել, սակայն Աստված փափագում է, որ ամեն ինչ անենք Իր և մեր քաղաքսի օժանդակությամբ:

Պինդ կերակուրը կատարյալների համար է: (Եբ. 5.14)

ՍԿԶԲՈՒՄ ԿԱԹԸ

Յոթերորդ դարում Անգլիայում բազում թագավորություններ կային, որոնք հաճախ պատերազմում էին միմյանց դեմ: Երբ Նորտոմբերիայի թագավոր Օսվալդը հավատաց Հիսուսին, հրավիրեց մի միսիոների, որպեսզի նա ավետարանի բարի լուրը տարածի իր երկրում: Քորման անուհուով մեկին ուղարկեցին, սակայն ամեն ինչ այնքան էլ հարթ չընթացավ: Տեսնելով, որ անգլիացիները «համառ» են «բարբարոս» և հետաքրքրված չեն իր քարոզչությամբ, նա հեռացավ այդտեղից: Այդան անուհուով մի վանական միսիոներին բացատրեց, թե նա իր անուս ունկնդիրների համար շատ ծանր էր: Նորտոմբերիայի ժողովրդին փոխանակ «դյուրին վարդապետության կաթը» տալու, Քորմանը բարդ ուսուցումներ էր մատուցել, որոնք բնականաբար չէին ընկալվել: Հետո այդ վանականն ինքը գնաց նույն ժողովրդի մոտ, հարմարեցրեց ուսուցման իր ձևը այդ մարդկանց հասկացողության մակարդակին, և հազարավոր մարդիկ հավատացին Հիսուսին:

Այդանի՝ միսիոներության այս մոտեցումը Ավետարանից է գալիս: Պողոսն ասում է. «Ձեզ կաթ խմեցրի և ոչ թե կերակուր կերցրի, որովհետև դեռևս չէիք կարող ընդունել, ու հիմա էլ դեռ չեք կարող» (Ա.Կորնթ. 3.2): Եբրայեցիներին ուղղված նամակն ասում է, որ նախքան մարդկանցից ճիշտ ապրելակերպ ակնկալելը, պետք է Հիսուսի, փրկության ու մկրտության մասին մատչելի ուսուցանում (Եբ. 5.13, 6.2): Մինչև հասունության պահը (5.14) չպետք է կարգը խախտել: Մարդիկ չեն կարող հնազանդվել այն ուսմունքին, որը չեն հասկանում: Այդանի նման երբ Ավետարանը բաժնեկցենք ուրիշների հետ, կհանդիպենք մարդկանց այնտեղ, որտեղ որ են:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, շնորհակալ եմ, որ ինձ մոտենում ես հասկանալի ձևերով: Ամեն:

Ավետարանի բարի լուրը հասկանալու համար նախ Աստուծանախարհախ կաթի և նոր միայն տինդ կերակուրի կարիք ունեն՛:

Ծնրադրում եմ Տիրոջ առջև...Որպեսզի իր հարուստ փառքի համեմատ տա ձեզ, որ իր Դոգու միջոցով ներսի մարդու մեջ զորությունը հաստատվեք: Որպեսզի Քրիստոսը ձեր սրտերում հավատով բնակվի: (Եփես. 3. 16-17)

ԲՆԱԿՎԻ ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ

Երբեմն երեխաների ասածները կարող են մեզ օգնել ավելի խոր հասկանալու Աստծո ճշմարտությունները: Երբ դուստրս դեռ փոքր էր, իրեն բացատրեցի քրիստոնեական հավատքի այն խորհուրդը, թե Աստված Իր Որդու և Հոգու միջոցով ապրում է Իր զավակների մեջ: Եվ աղջկաս դնելով իր անկողինը՝ ասացի, որ Հիսուսը նաև իր հետ ու իր մեջ է: «Նա փորիկիս մեջ է», -հարցրեց: «Դու Նրան կուլ չես տվել, բայց Նա այնտեղ է՝ քեզ հետ», -պատասխանեցի:

Աղջկաս պարզունակ հարցը ինձ հիշեցրեց այն պահը, երբ ես Հիսուսից խնդրեցի լինել իմ փրկիչը, և Նա եկավ ու իմ մեջ բնակություն հաստատեց:

Պողոս առաքյալն այս խորհուրդն էր ակնարկում, երբ աղոթում էր, որ Սուրբ Հոգին զորացնի Եփեսոսի հավատացյալներին, որպեսզի «Քրիստոսը ձեր սրտերում հավատով բնակվի» (Եփ. 3.17): Հիսուսին իրենց մեջ բնակեցնելով՝ նրանք կհասկանան, թե ինչքա՛ն խորն է Նա սիրում իրենց: Այդ սիրով լցված՝ կաճեն իրենց հավատքում և հեզությունը կսիրեն ուրիշներին՝ սիրով խոսելով ճշմարտության մասին (4, 2, 25):

Իր հետևորդների մեջ Հիսուսի բնակվելը նշանակում է, որ Նրա սերը բնավ չի լքում՝ Նրան իրենց կյանքի մեջ ընդունողներին: Նրա սերը, որ ամեն գիտությունից վեր է (3.19), մեզ արմատավորում է Իր մեջ, օգնում հասկանալ, թե որքան խորապես է սիրում Նա մեզ:

Փոքրիկների համար զբված բառերը լավագույնս կարող են հաստատել.«Այո՛, Տեր Հիսուսը սիրում է ինձ»:

Աղոթք - Դայր, Դու հեռու չես, այլ ընդհակառակը՝ մոտ ես ինձ: Թող որ ուրախանամ Քո սիրով ու այն բաժնեկցեմ այլոց հետ: Ամեն:

Երբ արժանեմ, որ Դիսուսը աղոթի մեռ մեջ, կգորանամ:

Չավատն էլ հուսացված բաների հաստատումն ու չերևացող բաների ապացույցն է: (Եբր. 11.1)

ԻՆՉ ՈՐ ԱՆԿԱՐԵԼԻ Է ՏԵՍՆԵԼ

Պատմաբանների վկայությամբ՝ *ատոմական շրջանն սկսվել է 1945-ի հուլիսի 16-ին, երբ առաջին միջուկային զենքը պայթեց Նյու Մեխիկոյի անապատներից մեկում: Բայց հույն փիլիսոփա Դեմոկրիտը ատոմի գոյությունն ու ուժը հետազոտել էր դեռ դարեր առաջ: Այսինքն՝ Դեմոկրիտը հասկացել էր տեսնելու իր կարողությունից շատ ավելին, և ատոմական տեսությունը եղավ նրա աշխատանքի արգասիքը:*

Աստվածաշունչն ասում է, թե հավատքը անտեսանելի բաների ապացույցն է: Եբրայեցիներին ուղղված նամակի 11.1-ը հաստատում է, որ «Հավատն էլ հուսացված բաների հաստատումն ու չերևացող բաների ապացույցն է»: Երաշխիքը ցանկալի և դրական մտածելակերպի արդյունքը չէ: Աներևույթ Աստծո վստահությունն է, որի գոյությունը, սակայն, ճշմարիտ իրականությունն է, Իր աներևույթ նկարագրի ու ձևերի հայտնությունն է Իր Որդու՝ Հիսուսի մեջ, որ եկավ ցույց տալու Հոր սերը (Հովհ. 1.18):

Սա է այն Աստվածը, որի միջոցով «հավատով ենք ընթանում և ոչ թե երևույթով» (Բ.Կորնթ. 5.7): Մենք մենակ չենք ընթանում, որովհետև աներևույթ Աստվածը մեր ամեն քայլափոխին մեզ հետ է:

Աղոթք - Չայր, երբեմն դժվար է հավատալ աներևույթ ինչ-որ բանի: Սակայն Դու խոստացել ես, որ Քո հավատարիմ սերն ու խոստումը մեզ բնավ չի թողնելու: Օգնիր, որ այդ ճշմարտությանը հավատարիմ մնամ: Ամեն:

Դյուրին չէ հավասալ ու վստահել աներևույթ Ասծուն, բայց հնարավոր է, եթե լսենք Իրեն:

Քեզանից բան ուզողին տո՛ւր: (Մատթ. 5.42)

ՀԻՍՈՒՄԻ ԱՆՍՈՎՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Տասնհինգ տարի շարունակ Մայք Բըրդենն իր հուշանվեր- ների խանութը վերածել էր մի հավաքատեղիի, որտեղ ատելությամբ լի հանդիպումներ էր անցկացնում: Սակայն երբ կինը սկսեց կասկածել իր գործունեությունը, նրա սիրտը փափկեց: Սկսեց մտածել, թե որքան սխալ էին իր ազգայնա- կան տեսակետները և ցանկություն հայտնեց արմատապես փոխվել: Նախկին համախոհները վրեժ լուծեցին՝ նրա ընտանի- քը դուրս շարտելով վարձակալած բնակարանից:

Մայքը տեղացի սևամորթ հովիվ Քենեդիից օգնություն խնդրեց: Հովիվն ու եկեղեցին որոշ ժամանակի համար տուն և ուտելիք հայթայթեցին: Երբ հովիվին հարցրին, թե ինչու համա- ձայնեց օգնել, նա պատասխանեց. «Տեր Հիսուսը անսովոր բա- ներ է արել: Ու երբ ժամանակն է օգնելու, անում ես այն, ինչ Աստված է ուզում, որ անես»: Այնուհետև Մայքը հանդես եկավ Քենեդիի եկեղեցում և ներողություն խնդրեց սևամորթներից՝ ատելություն տարածելու իր բաժնի համար:

Հիսուսը Լեռան քարոզում որոշ անսովոր գաղափարներ ու- սուցանել է. «Քեզանից բան ուզողին տո՛ւր... Ձեր թշնամիներին սիրեցե՛ք, ձեզ չարչարողների ու հալածողների համար աղոթեցե՛ք» (Մատթ. 5. 42. 44): Դա մեզ համար Աստծո մտա- ծելակերպի գլխիվայր շրջված տարբերակն էր, որին պետք է հետևեինք: Թեև դա թուլություն կարող է թվալ, սակայն ընդ- հակառակը՝ կատարված արարք է, որն առաջ է եկել Աստծո գո- րությունից: Նա, ով սովորեցնում է մեզ, Ինքն էլ ուժ է տալիս գլխիվայր շրջված այս կյանքն ապրել այնպես, ինչպես Ինքն է խնդրում մեզանից:

Աղոթք - Հայր, օգնիր ինձ, որ կարողանամ սիրել ուրիշներին, ինչպես Դու ես ինձ սիրում: Ցույց տու՛ր, թե ինչպես կարելի է այդ անել: Ամեն:

Ասված ակնկալում է, որ մենք ամրենք ու գործենք Հիսուսի սված ցուցումների համաձայն, եթե նույնիսկ դրանք անսովոր թվան:

Մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, կարող է փրկել մեզ բորբոքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից: Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում: (Դան. 3.17-18)

ԿՐԱԿՈՎ ՅՐԱՅՐՎԱԾ

Երբ հոգնած ու մրոտ երկու հրշեջները մտան ճաշարան, սպասարկող կինը ճանաչեց ամբողջ գիշերը պահեստներից մեկում կրակների դեմ պայքարող մարդկանց, որոնց տեսել էր լրատվական թողարկումներում: Եվ նրանց իր գնահատանքը ցույց տալու համար հաշվեկտրոնի վրա գրեց. «Ձեր նախաճաշն այսօր իմ հաշվին է լինելու: Շնորհակալ եմ, որ ծառայում եք ուրիշներին ու մտնում այնպիսի տեղեր, որտեղից մարդիկ փախչում են: Դուք հրահրված եք կրակով ու մղված քաջությամբ, դուք իսկական օրինակ եք բոլորի համար»:

Հին Կտակարանում քաջության մի օրինակ ենք տեսնում երեք երիտասարդներին՝ Սեդրակի, Միսաքի և Աբեղնազովի արձանի առջև խոնարհվելու հրամանին՝ այս երիտասարդները արիաբար ցուցաբերեցին իրենց սերը Աստծո հանդեպ: Որպես պատիժ՝ նրանց նետեցին հնոցի մեջ: Բայց նրանք անդրդվելի էին և ասացին. «Մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, կարող է փրկել մեզ բորբոքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից: Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արձանին» (Հմ.17-18):

Աստված ազատեց նրանց և նույնիսկ նրանց հետ քայլեց կրակի մեջ (Հմ. 25-27): Մեր հրեղեն փորձությունների ու խնդիրների մեջ մենք էլ ունենք այդ երաշխիքը, որ Աստված մեզ հետ է: Նա այդ կարող է:

Աղոթք - Ամենակարո՛ղ Աստված, շնորհակալ եմ, որ ինձ հետ ես՝ կրակի մեջ և Քո ներկայությամբ մխիթարում ես ինձ: Ամեն:

Ցավերը, նեղություններն ու մարտահրավերներն անդակաս են, բայց այդ բոլորի մեջ մեր Աստվածը մեզ հետ է:

Ամեն ինչ էլ վնաս եմ համարում իմ Տեր Յիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար: (Փիլ. 3.8)

ԿԱՐԵՎՈՐՆ ԱՅՆ Է, ԹԵ ՈՒՄ ԳԻՏԵՄ

2019-ի սկզբին ութսուն տարեկանում մահացավ Չարլի Վանդերմիրը, որը տասնամյակներ շարունակ հայտնի էր որպես ռադիոյի «Մանուկների Աստվածաշնչի ժամ» ծրագրի հաղորդավար Անգլ Չարլի: Մահից մեկ օր առաջ նա բարեկամներից մեկին ասաց.«Կարևոր է, թե դու ինչ գիտես: Կարևորն այն է, թե ո՛ւմ գիտես: Բնականաբար, ես խոսում եմ Քրիստոսի մասին»: Կյանքի վերջին պահին էլ նա շարունակում էր խոսել Հիսուսի և Նրան որպես Փրկիչ ընդունելու կարևորության մասին:

Պողոս առաքյալը Տեր Հիսուսին ճանաչելը դարձրել էր իր կարևոր պարտականությունը. «Ամեն ինչ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն ինչից զրկվեցի, և աղբ եմ համարում, որպեսզի Քրիստոսին շահեմ և նրա մեջ գտնվեմ»(Փիլ. 3.8-9): Իսկ ինչպե՞ս կարող ենք Հիսուսին ճանաչել.«Եթե Հիսուսին բերանովդ Տեր դավանես և սրտովդ հավատաս, որ Աստված նրան մեռելներից հարույթուն տվեց, կփրկվես» (Հռոմ. 10.9):

Կարող ենք Տեր Հիսուսի մասին իմանալ որոշ ճշմարտություններ, եկեղեցու մասին՝ ամեն բան, նույնիսկ կարող ենք ծանոթ լինել Աստվածաշնչին: Սակայն Իրեն որպես Փրկիչ ընդունելու միակ միջոցը Իր Փրկություն ձրի պարգևն ընդունելն է: Ինքը Նա է, որի հետ հարկավոր է ծանոթանալ:

Աղոթք - Հայր Աստված, աղոթում եմ բոլոր նրանց համար, ովքեր Յիսուսին կհավատան՝ ընդունելով Նրա մատուցած զոհաբերությունը: Ու եթե ես դեռ չեմ ընդունել Յիսուսին որպես Փրկիչ, թող բերանովս խոստովանեմ, որ Յիսուսը Տեր է այսօր: Ամեն:

Տեր Յիսուսի հետ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՄԱՆԱՎ, ԹԵ ԻՆՏՐ ՈՎ Է ԵՆ ՈՎ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵՆ ԲԵՁ ԽԱՄԱՐ:

Իմ փրկության Տեր Աստված: (Սաղմ. 87.2)

ԾԱՆՐ, ՍԱԿԱՅՆ ՀՈՒՅՍՈՎ ԼԻ

5 *Օ տարի շարունակ ամերիկյան մամուլում հայտնի գետնա-նուշ-կոմիքսներից մեկը ներկայացնում է ձեռներեց Լուսիին՝ հետևյալ ծանուցմամբ: «Հոգեբուժական օգնություն՝ հինգ դահեկանով»: Լայնսը շտապում է Լուսիի գրասենյակ և ներկայացնում իր բողոքները: Երբ հարցնում է, թե ինչ կարող է անել իր ճնշված վիճակից դուրս գալու համար, Լուսին արագ պատասխանում է: «Դու՛րս եկ այդ վիճակից: Բարի եղի՛ր, հինգ դահեկանը վճարի՛ր»:*

Իհարկե, կարող է մի պահ ժպիտ առաջանալ, սակայն իրականում մռայլ տրամադրությունից ու տխրությունից ձերբազատվելն այդքան դյուրին չէ: Դրանք իրական են, և հաճախ կարիք ունեն մասնագիտական ուշադրության:

Լուսիի խորհուրդը իսկական տառապանքի ժամանակ օգտակար չէր: Բայց 87-րդ սաղմոսի հեղինակը ամոքիչ ու օգտակար բան է առաջարկում: Նա բազում խնդիրներ ուներ և անկեղծորեն բացեց սիրտը Աստծո առաջ. «Հոգիս չարչարանքով լցվեց, և կյանքս դժոխքին մերձեցավ... բարեկամներիս ու ծանոթներիս հեռացրի ինձնից »(Հմ.4, 19): Մենք լսում, զգում ենք սաղմոսերգուի ցավը, ինչ-որ իմաստով նաև նույնանում նրա հետ: Եվ դա էլ ամենը չէ: Նրա ողբը հույսով լի է: «Իմ փրկություն՝ Տեր Աստված, գիշեր-ցերեկ քե՛զ կանչեցի: Թող աղոթքս հասնի քե՛զ, Տե՛ր, ականջդ թող մոտենա խնդրանքիս» (Հմ.2-3):

Ծանր բաներ են լինում մեզ հետ և կարիք ենք ունենում գործնական քայլերի, բժշկական օգնության կամ խորհրդի: Այդպիսի պահերին երբեք չկորցնենք մեր հույսը Աստծուց:

Աղոթք - Հայր, օգնիր, որ բոլոր պարագաներում կարողանամ տեսնել Քո բաց ու ողջագուրող բազուկները: Ամեն:

Ցավեր, ցեղություններ ու քառադասեր մի՞տ էլ կունենանք, կարևորը չհուսահատվելն ու Աստուծն աղափինելն է:

Աղոթք արեք ինձ համար էլ, որպեսզի իմ բերանը բաց անելիս ինձ խոսք տրվի, որ Ավետարանի խորհուրդը համարձակ հասկացնեմ: (Եփ. 6.19)

ԾԻՇՏ ԲԱՌԵՐ

Անցյալ տարի Հոգևոր գերականության հեղինակները հավատացյալներին հորդորեցին թարմ հայացք գցել հավատքի «բառամթերքին»: Նրանք մասնավորապես շեշտում էին, որ նույնիսկ աստվածաբանական հարուստ բառապաշարը կարող է իր ազդեցությունը կորցնել, Ավետարանի և Աստծո գիտության խորութիւնը նվազեցնել չափից ավելի հաճախ գործածվելու հետևանքով: Այդ դեպքում մենք կարիք կունենանք դարձյալ սովորելու «հավատի լեզուն», հրաժարվելու մեր համոզմունքներից, մինչև որ կարողանանք բարի լուրը տեսնել այնպես, ասես առաջին անգամ է պատահում:

«Աստծո մասին խոսելու» հրավերն ընդունելը հիշեցնում է Պողոս առաքյալին, որն իր կյանքը նվիրեց «ամենքի համար ամեն ինչ իրենելուն...ավետարանի համար» (Ա.Կորնթ. 9.22-23): Հիսուսի արածները հաղորդելու համար Պողոսը բնավ չէր ենթադրում ամեն ինչ իմանալ: Փոխարենը վստահեց մշտական աղոթքին և հորդորեց իր հավատակիցներին, որ իր համար էլ աղոթեն, որպեսզի ինքն էլ կարողանա գտնել «ճիշտ բառերը» (Եբ. 6.19) և հայտնել բարի լուրը:

Առաքյալը կարևորում էր նաև, որ յուրաքանչյուր հավատացյալ խոնարհ մնա և գիտակցի Քրիստոսի շնորհքից իր կախվածությունը, որպեսզի ճիշտ բառեր գտնի հայտնելու սքանչելի լուրն այն մասին, թե ինչ է արել Տերը մեզ համար:

Աղոթք - Սիրո՛ղ Յայր, ների՛ր ինձ, որ հաճախ Քո շնորհքն ու բարությունը բնական բան եմ համարում: Օգնի՛ր կարողանամ ամեն օր խորանալ Քո շնորհքի ու սիրո գիտակցության մեջ և գտնեմ ճիշտ բառեր դրա մասին ուրիշներին հայտնելու: Ամեն:

Աղոթե՛մ, որ մե՛նք էլ կարողանանք ավետարանը նորովի տեսնել ու գիտակցել, որ Աստծո շնորհքին կարո՛ս ենք:

Որդեգրութեան հոգին ընդունեցիք, որով աղաղակում եմք. «Աբբա՛, Յայր»։ (Յոնն. 8.15)

ՕՐԻՆԱԿԱՆ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Լիզը շատ ուրախացավ, երբ ինքն ու ամուսինը ստացան իրենց որդեգրած մանկան ծննդյան վկայականն ու անձնագիրը, որով որդեգրութիւնը օրինական էր դառնում։ Այդպիսով Մելինան մշտապես դառնալու էր իրենց աղջիկն ու ընտանիքի անդամը։ Լիզն այս օրինական գործողութիւնը համեմատեց «ճշմարիտ փոխարկման» հետ։ Դա պատահում է, երբ մենք էլ Հիսուսի ընտանիքի անդամն ենք դառնում։ «Այլևս ստորացած կամ մեղքի զգացումով չենք լինում», այլ ընդհակառակը՝ օրինականորեն մտնում ենք Աստծո թագավորութեան մեջ և որդեգրվում որպէս Իր զավակները։

Պողոսի ժամանակ, եթե հռոմեացի ընտանիքը երեխա էր որդեգրում, նրա իրավական վիճակը լիովին փոխվում էր։ Իր հին կյանքի պարտքերն ամբողջովին ջնջվում էին, և ինքն ստանում էր նոր ընտանիքի բոլոր իրավունքներն ու առանձնաշնորհումները։ Պողոսն ուզում էր, որ Հռոմի հավատացյալները հասկանան, թե այդ նոր վիճակն իրենց համար էլ է կիրարկելի։ Որ նրանք այլևս կապված չեն մեղքի ու դատապարտութեան կապանքներով, այլ այսուհետ ապրելու են «Հոգու համաձայն» (Հռոմ.8.4)։ Իսկ նրանք, ում առաջնորդում է Հոգին, որդեգրված են որպէս Աստծո զավակներ (հմ.14-15)։ Նրանց իրավական վիճակը փոխվում է, երբ նրանք ունենում են երկնային հպատակութիւն։ Եթե մենք ստացել ենք փրկութեան պարգևը, ուրեմն մենք Աստծո զավակներն ենք, Իր թագավորութեան ժառանգորդները և միացած ենք Քրիստոսին։ Մեր պարտքերը ջնջված են Հիսուսի զոհաբերութեան պարգևով։ Մենք այլևս կարիք չունենք ապրելու վախի ու դատապարտութեան մեջ։

Աղոթք - Յայր Աստված, Դու ինձ ստեղծեցիր մորս որովայնում, Դու ճանաչում ու սիրում ես ինձ։ Ես բնավ չեմ կասկածում Քո սիրուն։ Ամեն։

Եթե Աստված որդեգրել է մեզ, ուրեմն մենք Իր օրինական զավակներն ենք։

Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որ ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ ամբարների մեջ հավաքում, և ձեր երկնավոր Դայրը նրանց կերակրում է: (Մատթ. 6.26)

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՏԵԼ

Բարեկամիս հետ այցելեցիք իմ նախասիրած քայլերու վայրը: Ուժեղ քամու դեմ մագլցելով բլուրը՝ անցանք ծաղկավետ դաշտով ու մտանք խիտ սոճուտը: Հետո իջանք հովիտ, որտեղ մի պահ կանգ առանք: Փափուկ ամպերն անցնում էին մեր գլխավերևով, լսվում էր առվակի մեղմ քչքչոցը, և միակ բարձր ձայնը թռչունների դայլայլն էր: Ես ու Ջեյսոնը տասնհինգ ըոպե այդպես լուռ ու ներշնչված մնացինք:

Հետազոտողները պարզել են, որ նրանք, ովքեր մի պահ կանգնում են բնությունը զգալու համար, ավելի մեծ ուրախություն, ավելի քիչ անհանգստություն են ունենում և ավելի հոգատար են լինում երկրի, բնության հանդեպ: Անտառում քայլելը բավարար չէ, հարկավոր է դիտել ամպերը, նայել թռչուններին: Այսինքն կարևորը ոչ թե ուղղակի բնության մեջ լինելն է, այլ այն տեսնելը, զգալը:

Արդյո՞ք կա հոգևոր որևէ դաս հօգուտ բնության: Պողոսն ասում է, թե բնությունը Աստծո գորությունն ու բնույթն է հայտնում(Հռոմ.1 .20): Աստված Հորին ասաց, որ նայի ծովին, երկնքին ու աստղերին՝ որպես փաստ իր ներկայություն (Հռբ.38-39): Հիսուսն ասաց, թե «երկնքի թռչունների» ու «դաշտի շուշանների» մասին մտածելը կառաջացնի Աստծո հոգատարությունը և կպակասեցնի մեր մտահոգությունը (Մատթ.6.25-30): Աստվածաշնչի համաձայն՝ բնությունը նկատելը հոգևոր գործընթաց է: Գիտնականները փորձում են մեկնաբանել, թե ինչու է բնությունը մեզ վրա ազդում այդ կերպ: Հնարավոր է՝ բնությունը տեսնելով՝ մենք հպանցիկ հայացք ենք ձգում Աստծոն, Նրան, ով ստեղծել է այն՝ նկատի ունենալով մեզ:

Աղոթք - Երկնքի, երկրի, առվակների ու թռչունների երգի Աստված, Քե՛զ եմ պաշտում այսօր: Ամեն:

Քո բազմազբաղ առօրյայում մի դրահ կա՛նգ առ և նկատի՛ր բնության սեր ու սիրական Աստծուն:



Ուրախ կլինի քո մեջ զվարճությամբ: (Սոփ. 3.17)

ՄԵՋ ՀԱՍԱՐ Է ԵՐԳՈՒՄ

Երիտասարդ հայրը, տղային գրկած, մեղմ երգում էր և օրորում: Երեխան լսողություն խնդիր ուներ, հետևաբար չէր լսում հոր երգը: Բայց դա չէր խանգարում, որ հայրը երգի քնքուշ ու ջերմագին: Նրա ջանքը արդյունք տվեց. մանկան դեմքին ժպիտ երևաց:

Երեխա-հայր այս պատկերը հետաքրքիր նմանություն ունի Սոփոնիա մարգարեի այն բառերի հետ, երբ նա ասում է, թե Աստված ուրախությամբ կերգի իր զավակներին՝ Իսրայելի ժողովրդի համար (Սոփ. 3.17): Աստված հրճվում է, երբ բարիք է գործում իր սիրելի ժողովրդի համար.«վերացնում է անիրավությունները, փրկում թշնամիների ձեռքից» (Հմ.15): Նրանք այլևս պատճառ չունեն վախենալու, - ասում է Սոփոնիան,- այլ ընդհակառակը պետք է ցնծան:

Մենք էլ, որպես Հիսուս Քրիստոսի զոհողությամբ փրկված Աստծո զավակներ, երբեմն լսելու դժվարություն ենք ունենում: Չենք կարողանում կամ չենք կամենում լսել Աստծո՝ մեծ սիրով մեզ համար երգած երգերը: Իսկ Նրա քնքուշ արտահայտությունները նման են այն երիտասարդ հոր ջերմ երգին, որ կատարում էր չլսող որդու համար: Իր երգով Նա նաև մեզ հեռացնում է անիրավությունից և պարզեում ուրախություն: Գուցե մենք էլ ավելի մոտիկից նայենք՝ լսելու համար Նրա ձայնում հնչող այդ ուրախության երգը: Հա՛յր, օգնի՛ր մեզ, որ կարողանանք լսել Քո սիրո մեղեդին՝ վստահ լինելով, որ Քո հզոր թևերի մեջ ենք:

Աղոթք - Հա՛յր, շնորհակալ եմ, որ ուրախանում ես ինձանով: Թող որ ես միշտ լսեմ Քո ձայնը, երբ Դու ցնծությամբ երգում ես ինձ համար: Ամեն:

Աստծո ձայնը չլսելու տարբեր դասեր ունենի: Սակայն կարելի է մեր ականջները լարել՝ որդեսգի կարողանանք լսել Իրեն:

Անմիտներին իրենց ճանապարհները թվում են ուղիղ, իսկ իմաստունն ունկնդիր է լինում խրատին: (Առ. 12.15-16)

ՀԵՏԵՎԵԼ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՐԱՏԻՆ

Ա մերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակ նախազահ Աբրահամ Լինքոլնը քաղաքական գործիչներից մեկին գոհացնելու համար հրաման արձակեց բանակի զնդերը տեղափոխել: Ռազմական քարտուղար էդվին Ստանտոնը մերժեց այն կատարել ու ասաց, որ նախազահը հիմարի մեկն է:

Երբ Լինքոլնին հայտնեցին Ստանտոնի ասածի մասին, նա պատասխանեց. «Եթե Ստանտոնն է ասել, ուրեմն ես իրոք հիմար եմ, որովհետև ինքն ընդհանրապես ճիշտ մարդ է: Հետևաբար, ես պետք է քննեմ այդ հարցը»: Նրանք խոսեցին իրար հետ, նախազահն ընդունեց, որ իր որոշումը սխալ էր, և անվարան չեղարկեց իր հրամանը: Չնայած Ստանտոնը նախազահին հիմար էր անվանել, բայց Լինքոլնը ապացուցեց, որ բավական իմաստուն է, որովհետև համառորեն չպնդեց իր դիրքերը: Փոխարենը լսեց իրեն տրված խրատը ու փոխեց միտքը:

Երբեք հանդիպե՞լ ես այնպիսի մեկին, որը պարզապես չի լսում իմաստուն խրատ (տե՛ս .Թագ. 12.1-11): Դա վրդովեցուցիչ բան է: Իսկ պատահե՞լ է, որ դու՛ ես անտեսել քեզ տրված խրատը: Ինչպես Առ. 12. 15-16-ում է ասվում.«Անմիտներին իրենց ճանապարհները թվում են ուղիղ, իսկ իմաստունն ունկնդիր է լինում խրատին»: Հնարավոր է, որ մարդիկ երբեմն սխալվեն: Մեզ հետ նույնպես կարող է դա պատահել: Թող աստվածային իմաստնությունը վարվենք և լսենք ուրիշների տված իմաստուն խորհուրդները: Նույնիսկ եթե ի սկզբանե համաձայն չենք նրանց հետ: Երբեմն Աստված ճիշտ այդպես է վարվում մեզ հետ՝ հենց մեր օգտի համար(Հմ.2):

Աղոթք - Իմաստնության Աստված, սովորեցրու՛ ինձ խուսափել հիմարությունից: Շնորհակալ եմ, որ իմ կյանքում դնում ես ուրիշների, որոնք կարող են օգտակար խրատներ տալ ինձ: Ամեն:

Ասծուց խնդրի՛ր շնորհ, որ կարողանաս լսել իմաստուն խրատներ:



Սիրտս ամրացավ իմ Տիրոջ շնորհիվ, գլուխս բարձր եմ պահում Տիրոջ շնորհիվ: (Ա.Թագ. 2.1)

ՆՈՐՈԳՎԱԾ ՏԵՍԻԼՔ

Ա չքի թեթև վիրահատությունից հետո բժիշկս հանձնարարաբեց տեսողությունս ստուգել: Վստահորեն փակելով աջ աչքս՝ դյուրությունս կարգացի ցուցակի բոլոր տողերը: Բայց երբ մյուս աչքս փակեցի, շունչս կտրվեց: Ինչպե՞ս կարող էի չիմանալ, որ գրեթե չեմ տեսնում: Նոր ակնոց գործածելով՝ սկսեցի մտածել, թե ինչքան առօրյա փորձություններ են առիթ դարձել, որ ես հոգևոր կարճատեսություն ցուցաբերեմ: Կենտրոնանալով միայն ինձ մոտ եղածներին տեսնելու վրա, որոնք հիմնականում իմ ցավերն ու անփոփոխ պարագաներն էին, կույր եմ եղել և չեմ տեսել իմ հավիտենական ու անփոփոխ Աստծո հավատարմությունը: Նման սահմանափակ հեռանկարով հույսը միշտ էլ անհասանելի է եղել ու աղոտ:

Ա. Թագ. առաջին գլուխը ներկայացնում է մի կնոջ պատմություն, որը կենտրոնացել էր իր ներկա տառապանքի, անորոշությունից ու կորստի վրա և չէր տեսնում Աստծո վստահելի լինելը: Տարիներ շարունակ նա երեխա չէր ունենում: Նրա ամուսինը իրեն շատ էր սիրում, բայց հաջողությունը խուսափում էր իրենցից: Մի օր նա թախանձագին ու անկեղծ աղոթեց: Երբ Հեղի քահանան իմացավ Աննայի պարագան, ինքն էլ աղոթեց Աստծոն, որ պատասխանի իր խնդրանքին (Ա. Թագ. 1.17): Աննայի խնդիրը անմիջապես չլուծվեց, բայց նա հեռացավ վստահ հույսով (հմ.18): Աննայի ջերմագին աղոթքը հենց այդ շեղումն էր իր ունեցած կենտրոնացումից (Ա. Թագ. 2.1-2): Եվ նրա վիճակի բարելավումից շատ առաջ Աննայի նորոգված տեսիլքը արդեն փոխել էր իր հեռանկարն ու կեցվածքը: Նա ցնծում էր Աստծո՝ իր վեմի հանդեպ մնայուն հույսով:

Աղոթք - Հայր, խնդրում եմ՝ նորոգի՛ր տեսիլքս, որպեսզի կարողանամ կենտրոնանալ Քո անփոփոխ ներկայության վրա ու շարունակեմ կյանքս հավիտենական հեռանկարով: Ամեն:
Ծանր դարագաները հաճախ ճնշում են մեզ, սակայն կենսորոնանանք Աստծո բարության և ողորմության վրա՝ նորոգվելու տեսիլով:

Կհարվածես ժայռին, դրանից ջուր կբխի, և քո ժողովուրդը կխամի: (ԵԼՔ 17.6)

ԱՌԱՏ ՋՐԵՐ

Ա վատրալիայում կանխատեսվել էր բարձր ջերմաստիճանով, սակավ տեղումներով երաշտի տարի: Այդպես էլ եղավ: Կատաղի հրդեհներն այրեցին հսկայական տարածքներ, ձկները ոչնչացան, բերքն ու հունձքը պակասեցին միայն այն պատճառով, որ չկար սովորական ջուրը: Այն մենք բնական ենք համարում, բայց առանց որի կյանք չկա:

Իսրայելի ժողովուրդը հայտնվել էր շատ սարսափելի դրուժյան մեջ: Ժողովուրդը բանակ էր զարկել փոշոտ ու ամայի անապատում, «սակայն, ջուր չկար, որ ժողովուրդը խմեր» (ԵԼՔ 17.1): Մարդիկ վախեցան, որովհետև նրանց կոկորդները չորացան, գետնի ավազը ավելի տաքացավ ու նրանք ավելի ծարավեցին: Ժողովուրդը սարսափած սկսեց մեղադրել Մովսեսին՝ նրանից ջուր խնդրելով (Հմ.2): Բայց Մովսեսն ի՞նչ կարող էր անել: Նա կարող էր միայն Աստծուն դիմել:

Ու Աստված Մովսեսին հուշեց. «Ձեռքդ ա՛ն քո գավազանը... կհարվածես ժայռին, դրանից ջուր կբխի, և քո ժողովուրդը կխամի» (ԵԼՔ 17.6): Մովսեսն այդպես էլ արեց: Ջուրը գետի պես ժայթքեց, որը բավարարեց թե՛ մարդկանց, և՛ թե կենդանիներին: Այդ օրը Իսրայելն իմացավ, որ իրենց Աստվածը սիրում է իրենց:

Եթե երաշտի կամ անապատում հայտնվելու փորձույթյան ենթարկվես, իմացի՛ր, որ Աստված գիտի ու քեզ հետ է: Ինչի կարիք որ ունես, ինչ որ քեզ պակասում է, դրա հույսը թող որ գտնեսիր տված առատ ջրերում:

Աղոթք - Հայր, Քո ջրի ու նախատեսության կարիքն ունեն: Եթե ինձ չօգնես, չեմ կարծում, թե տեղ կհասնեմ: Խնդրում եմ տու՛ր ինձ անհրաժեշտ կենարար ջուրը: Ամեն:

Հաճախ մենք էլ անջրդի անադատում լինելու զգացողություն ենք ունենում, սակայն մեր հավասարիմ Աստվածը մեզ անհրաժեշտ սիրով է դարձնում:

Մարդը պատիվ ուներ և չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու նմանվեց նրանց: (Սաղմ.48. 21)

ՆԵՐՍ ԹՈՂՆՎԱԾ

Իմ ծեր շունը նստում է կողքիս ու շուրջն է նայում: Գիտեմ, որ նա չի մտածում իր մահվան մասին, որովհետև շները «չեն հասկանում»: Նրանք չեն մտածում նաև ապագայի մասին: Բայց մենք մտածում ենք: Անկախ այն բանից, թե ինչ տարիքի ենք կամ ինչ նյութաբարոյական վիճակում, բնականաբար, երբեմն մտածում ենք մահվան մասին: Որովհետև մենք անասուններից տարբերվում ենք հենց մտածելու, կամ ինչպես Սաղմոս 48-ի 21-ում է ասվում «հասկանալու» ունակությունը: Գիտենք, որ մենք մահկանացու ենք ու ոչինչ չենք կարող անել դրա դեմ: «Եղբայրն իր եղբորը չի փրկի, ոչ էլ մարդը կփրկի նրան. նա փրկանք չի տա Աստծուն, ոչ էլ իր հոգու փրկանքը» (Հմ.8): Նույնիսկ մեծ գումարները չեն կարող մարդուն գեղեցմանից փրկել:

Բայց վերջնական մահից ազատվելու մի միջոց կա: Սաղմոսերգուն շեշտում է. «Երբ դժոխքն ինձ ընդունելու լինի, Աստուած կփրկի իմ հոգին (Հմ.16. տառացիորեն՝ «Ինձ ներս կթողնի»): Ռոբերտ Ֆրոստն ասել է. «Տունն այն տեղն է, որտեղ երբ գնաս, քեզ ներս կթողնեն»: Աստված մեզ փրկել է մահից Իր Որդու միջոցով. «Իր անձը բոլորի համար փրկանք տվեց» (Ա.Տիմ.2.6): Ուստի Հիսուսը խոստացավ, թե երբ մեր ժամանակը գա, մեզ կողջունի ու իր մոտ կվերցնի (Հովհ. 14.3):

Երբ գա իմ ժամանակը, Հիսուսը, որ վճարել է իմ կյանքի գինը, գրկաբաց կողջունի ինձ Իր Հոր տան մեջ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Քո զավակներին տեղ ես տալիս: Հույսով եմ սպասում այն օրվան, երբ դառնալու եմ Քո տան անդամը: Ամեն:

Քույրս էլ մի օր մեռնելու եմ, բայց կարևոր է, թե ինչդեպ և որտեղ է անցնելու մեր հավիտենությունը: Այս մասին արժե լրջորեն մտածել:

Որպեսզի երևաք որպես աշխարհում լույս տվողներ՝ Կյանքի խոսքը պահելով: (Փիլ. 2.15-16)

ՓԱՅԼՈՂ ԱՍՏՂԵՐ

Ես կարող եմ աչքերս փակել մտոցի գնալ մանկություն: Հիշում եմ, թե ինչպես հորս հետ իր աստղադիտակով դիտում էինք երկնքում շողացող փայլուն կետերը: Ջերմությունից ու կրակից ծնված լուսավոր աստղերը մուգ թանաքագույն երկնահամարի վրա երևում են որպես սուր հակադրություն:

Դու քեզ համարում ես փայլող աստղ: Խոսքը մարդկային հաջողությունների ու բարձունքների մասին չէ, այլ որպես չարի ու մթույլի հակադրություն: Պողոս առաքյալը Փիլիպպեի հավատացյալներին ասաց, թե Աստված կփայլի իրենց մեջ և միջոցով, երբ նրանք հաստատ մնան՝ «Կյանքի խոսքը պահելով» և անտեսեն տրտունջն ու առարկությունը (Փիլ. 2.14-15):

Մեր միասնականությունը ուրիշ հավատացյալների հետ և մեր հավատարմությունը Աստծո հետ մեզ կարող է առանձնացնել աշխարհից: Բայց հարցն այն է, որ այս բաները հեշտ չեն գալիս: Աստծո հետ մտերիմ հարաբերությունները պահելու համար մենք մշտապես փորձություններ ենք հաղթահարում: Մեր քույրերի ու եղբայրների հետ ներդաշնակ լինելու համար պայքարում ենք եսասիրության դեմ:

Այնուամենայնիվ, դեռ հույս կա: Յուրաքանչյուր հավատացյալի մեջ կենդանի Աստծո Հոգին մեզ ուժ է տալիս լինելու համբերատար, հեզ ու հավատարիմ (Գաղ. 5.22-23): Մենք կոչ ունենք ապրելու մեր բնական կարողությունից անդին: Աստծո գերմարդկային օժանդակությունը հնարավոր է դարձնում դա (Փիլ.2.13):

Աղոթք - Սիրող Աստված, խնդրում եմ, որ Հոգիդ գորացնի ինձ, որպեսզի կարողանամ փայլել խավարում: Ինձ դարձրու՝ մեկը, որ հայտնի է ուրիշների հանդեպ իր սիրով և Քո հանդեպ իր հավատարմությամբ: Ամեն:

Թույլ չճանճ, որ չարը խափանի մեր լույսը: Այլ լինենք այն լույսը, որ Տեր Հիսուսն է ցուցանում:

Նրանք ցույց են տալիս, որ օրենքի պահանջն իրենց սրտերում է գրված: (Յոճ. 2.15)

ՀԱՆՑԱՆՔ ՈՒ ՆԵՐՈՒՄ

Ա մերիկացի մարդաբան Դոնալդ Բրաունը իր «Մարդկային ընդհանրություններ» գրքում սովորական մարդկանց 400-ից ավելի վարքագիծ է նկարագրում՝ նկատի ունենալով նրանց ամենատարբեր հակումներն ու նախասիրությունները: Նաև վստահ է, որ բոլոր մշակույթներում էլ ճիշտ ու սխալի հայեցակետը նույնն է. առատաձեռնությունը զնահատելի է, խոստումները՝ արժևորված, ստորությունն ու ոճրագործությունը՝ սխալ ու մերժելի: Անկախ նրանից, թե որտեղ ենք մենք, բոլորս էլ ունենք խղճի զգացում:

Պողոս առաքյալը նման տարբերակում էր արել դարեր առաջ: Երբ Աստված հրեա ժողովրդին տվեց տասը պատվիրանները, ճիշտը սխալից տարբերելու համար Պողոսը նշեց, որ հեթանոսներն էլ կարող են ճիշտն անել՝ հետևելով իրենց խղճին, Աստծո օրենքները ակնհայտորեն գրված են իրենց սրտերում (Հռոմ. 2.14-15): Բայց դա չի նշանակում, որ ժողովուրդը միայն ճիշտ քայլեր է կատարել: Հեթանոսները ապստամբեցին իրենց խղճի դեմ (1.32), հրեաները օրենքի դեմ էին գործում (Հմ.2.17-24): Սակայն Աստված արդարացնում է Հիսուսին հավատացողներին (Հմ.3.23-26, 6.23):

Քանի որ Աստված մարդուն ստեղծեց ճիշտ ու սխալի գիտակցությամբ, մեզանից յուրաքանչյուրը որոշ չափով մեղավորություն կարող է ունենալ իր սխալների կամ ձախողումների համար: Երբ խոստովանենք այդ մեղքերը, Աստված կների մեր հանցանքը: Ով էլ լինենք և որտեղից էլ որ եկած լինենք, մենք ուղղակի Իրենից պետք է խնդրենք:

Աղոթք - Տե՛ր, բարու ճանապարհին ձախողվեցի և սխալ կատարեցի: Ների՛ր ինձ: Շնորհակալ եմ, որ Դու մեռար իմ փոխարեն: Ամեն:

Մեր գործած սխալների համար մեղքի զգացում կունենանք, բայց Տիրոջ շնորհը կների մեզ:

Կարժանանան Տիրոջ փրկության: (Ռոմեոս. 2.10)

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՍԻՐՈՎ

Անգլիացի բանաստեղծ Ֆրանսիս Թոմբսոնը «Երկնքի հետապնդումը» բանաստեղծության մեջ, հակառակ թաքնվելու կամ նույնիսկ Աստծուց փախչելու իր ջանքերին, նկարագրում է Հիսուսի անվերջ հետապնդումը: Ի վերջո նա եզրակացնում է.«Ես այն եմ, որին Դու փնտրում ես»: Աստծո հետապնդող սերը նաև Հովնանի գրքի գլխավոր թեման է: Մարգարեն պարտականություն էր ստացել Իսրայելի տխրահռչակ թշնամի Նինվեի ժողովրդին ասելու Աստծոն վերադառնալու անհրաժեշտության մասին, սակայն նա, ընդհակառակը, «փախավ Աստծո ներկայությունից»: Նինվեի հակառակ ուղղությունամբ գնացող նավը նստեց, բայց մեծ փոթորիկ եղավ ծովում, և նավը խորտակվելու վտանգի մեջ էր: Անձնակազմին ազատելու համար Հովնանին, որպես մեղավորի, ծովը նետեցին և Տիրոջ հրամանով կետը կուլ տվեց նրան(Հմ.1.15-17, 2.1) :

Իր բանաստեղծության մեջ Հովնանը նշում է, որ հակառակ Աստծուց փախչելու իր ջանքերին՝ Աստված հետապնդում էր իրեն: Զգալով իր պարտությունը՝ Հովնանը աղոթքով դիմեց Աստծուն և նրա սիրուն(2.2,8): Աստված լսեց նրա աղերսը և ազատություն շնորհեց ոչ միայն նրան, այլև թշնամի ասորիներին նույնպես (3.10):

Երկու բանաստեղծություններում էլ նկարագրված է, որ լինում են ժամանակներ, երբ փորձում ենք Աստծուց փախչել: Սակայն նույնիսկ այդ պահերին Հիսուսը սիրում է մեզ և աշխատում նորոգել Իր հետ մեր հարաբերությունները (Ա. Հովհ.1.9):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ ազատություն շնորհելու համար սիրով ես հետապնդում: Ամեն:

Հաճախ մենք էլ եմք փորձում փախչել Աստուց, բայց նա մեզ հետադառնում է՝ ազատելու համար:

Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս: (Ես. 9.2)

ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ԽԱՎԱՐԸ

1 960-ական թվականներին մարդու հոգեբանությունը վրա մթու-
թյան ազդեցություն վերաբերյալ հետազոտությունը մասնակ-
ցող երկու մարդ մտան տարբեր քարանձավներ, և գիտնական-
ներն սկսեցին հետևել նրանց ուսուցում և քնելու գործողություն-
ներին: Նրանցից յուրաքանչյուրը կանխատեսել էր, թե որքան
կարող էր մնալ խավարում և սխալվել էին ամիսներով: Մեկը լի-
ակատար խավարում մնաց 88, մյուսը՝ 126 օր: Խավարը իրակա-
նությունից շեղելու հատկություն ունի: Աստծո ժողովուրդը
հայտնվել էր աքսորի սպառնալիքի առջև և անորոշության մեջ
սպասում էր: Մարգարեն, օգտագործելով խավարի այլաբանա-
կան պատկերը, այսպես խոսեց. «Ձեր հայացքը պիտի ուղղեք
դեպի վեր՝ երկնքին, պիտի նայեք դեպի վար՝ երկրին, և կարիքը,
տառապանքն ու խավարը, նեղությունը, անձկությունն ու մթու-
թյունը պիտի դիմավորեն ձեզ: Ոչ ոք չպիտի կարողանա տեսնել:
Եվ նա, ով նեղության մեջ լինի, չի տկարանալու, մինչև որ դա
ժամանակը» (Ես. 8.22): Եգիպտացիները արդեն իսկ ծանոթ էին
խավարի պատժին (Ել. 10.21-29): Այժմ իսրայելցիներն էին
հայտնվել նույն մթության մեջ: Սակայն մի լույս բացվելու էր:
«Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ
լույս. ձեզ համար էլ, որ բնակվում եք աշխարհում և մահվան
ստվերների մեջ, լույս պիտի ծագի» (Ես. 9.2): Ծնշումը կվերանա,
ապակողմնորոշումը կվերանա: Մի մանուկ կծնվի, «որի իշխա-
նությունն իր ուսերի վրա պիտի լինի. նա պիտի կոչվի Մեծ
խորհրդի հրեշտակ, Սքանչելի խորհրդակից, Աստված հզոր, Իշ-
խան, Հայր հանդերձյալ աշխարհի» (Հմ.6): Տեր Հիսուսը եկավ:
Ու թեև աշխարհում գոյություն ունեցող խավարը կարող է
ապակողմնորոշել, թող որ մենք ներումի և ազատության լույսի
փորձառությունն ունենանք, որը Քրիստոսի մեջ է:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Քո լույսը շողացրո՛ւ իմ կյանքում: Օգնի՛ր,
որ ապրեմ Քո գալստյան լույսի մեջ: Ամեն:

**Կարող եմք մեզ խավարում զգալ, սակայն Քրիստոսը խոսանում
է մեզ ազատել այդ մեղի խավարից:**

Դա ինչ որ ուներ, արեց. նախօրոք իմ մարմինն օծեց թաղման համար: (Մարկ. 14.8)

ԱՐԵՑ, ԻՆՉ ՈՐ ԿԱՐՈՂ ԷՐ

Երիտասարդ կինը մոտեցավ գանձապահին ու շարժական գոտու վրա դրեց կարկանդակների փոքր տուփը, տարեդարձի քարտը և զանազան չիպսերի տոպրակներ: Այդ պահին նրա գրկի երեխան սկսեց աղմկել, և երբ գանձապահը հայտարարեց վճարվելիք գումարի չափը, կինը հուզված հառաչեց. «Օ՛հ, կարծում եմ՝ ինչ-որ մի բան պիտի վերադարձնեմ, բայց այդ բոլորը երեխայի տարեդարձի համար է»:

Այս տեսարանը հիշեցնում է բեթանիացի Մարիամի մասին Հիսուսի խոսքերը. «Դա ինչ որ ուներ, արեց» (Մարկ. 14.8): Երբ Մարիամը թաղումից առաջ օծել էր Իրեն, Հիսուսի աշակերտները ծաղրել էին այդ արարքը: Բայց Հիսուսը ուղղեց իր աշակերտներին՝ նկատելով, որ կինը ոչ թե «արել է ամեն ինչ», այլ «այն, ինչ կարող էր»: Հիսուսի համար նույնպես գնահատելին ոչ թե անուշահոտ յուղերի արժեքն էր, այլ նրա ցուցաբերած գործնական սերը:

Այդ պահին երիտասարդ մոր հետևում կանգնած հաճախորդը մոտեցավ ու իր քարտը մեկնեց՝ վճարելու գնումների համար: Ծախսն այնքան էլ մեծ չէր, սակայն կնոջ համար այդ արարքն ամեն ինչ էր: Զուտ սիրո արտահայտություն անհրաժեշտ պահին:

Աղոթք - Դայր, բաց աչքերս, որ տեսնեմ, թե ինչպես ես հրավիրում կատարելու այն, ինչ կարող եմ անել այսօր: Ամեն:

Երբ ուժադիր լինենք, մեր շուրջը կեսնենք կարիքավորների: Եվ Դիսուսի ասածի լույսի ներքո մենք կանենք այն, ինչ կարող ենք:

Ողորմություն սիրել և պատրաստ լինել քո Տեր Աստծու հետևից գնալու: (Միք. 6.8)

ՈՉ ԹԵ ՎԱԶԻՐ, ԱՅԼ ՔԱՅԼԻՐ

Ամեն առավոտ նրան տեսնում էի արշալույսը դիմավորելիս: Նա մեր շրջանում բնակվող հզոր քայլողն էր: Երբ ես զավակներիս դպրոց էի տանում, նա ճամփեզրին էր լինում՝ մեծ ականջակալներն ականջներին, մինչև ծնկները բարձրացրած գունավոր գուլպաներով, ձեռքերի ու ոտքերի համաչափ շարժումներով՝ քայլում էր մի ոտքի վրա: Այս վարժուկները տարբեր է վազելուց և սովորական քայլելուց: Ուժեղ քայլելու այս մարզանքն իր մեջ պարունակում է վազելու բնական մղումը զսպող ճիգ: Այն պահանջում է ուժ, կենտրոնացում ու ջանք, ինչպես վազելն ու քայլելը, բայց նաև վերահսկում է:

Վերահսկող ուժ – սա է բանալին: Սուրբգրային խոնարհությունը այդպես քայլելու նման հաճախ իբրև թուլություն է դիտվում: Իրականում, սակայն, այդպես չէ: Խոնարհությունը չի պակասեցնում մեր ուժն ու կարողությունները, այլ ընդհակառակը՝ թույլ է տալիս, որ դրանք մտքի շնորհիվ զսպվեն թևերի ու ոտքերի մեջ: Ճիշտ առավոտյան քայլողի նման:

Միքիայի խոսքը խոնարհությամբ ընթանալու մասին ևս Աստծուց առաջ գնալու մեր հակումը զսպելու կոչ է: «Ողորմություն սիրել և պատրաստ լինել քո Տեր Աստծու հետևից գնալու» (Հմ.6.8), ինչը կարող է արագ գործելու ցանկություն բերել: Դա արդարացի է, հատկապես որ ամենօրյա անարդարություններն աշխարհում շատ են: Բայց մենք պետք է վերահսկենք ինքներս մեզ ու Աստծով առաջնորդվենք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, դյուրին չէ խոնարհությամբ Քեզ հետ քայլելը: Մարզիր ինձ, որպեսզի քայլես ցերդաշնակ լինեն Քեզ ու Քո կամքին: Ամեն:

Չաճախ եմք Աստծուց առաջ ընթանալու ցանկություն ունենում, բայց խոնարհությամբ կարելի է այդ թուլությունը հաղթահարել:

Լռի՛ր, հանդարտվի՛ր: (Մարկ. 4.39)

ԱՊԱՅՈՎ ԴԵՊԻ ԱՓ

Նորգվինեական կանդաս ցեղի մարդիկ անհամբերությամբ սպասում էին իրենց լեզվով Նոր Կտակարանի օրինակներին: Բայց նրանց գյուղ հասնելու համար դրանք բերողները փոքր նավերով պետք է հատեն օվկիանոսը:

Որտեղի՞ց այդ մարդկանց օվկիանոսում նավարկելու քաջություն: Բնականաբար, առաջինը նրանց մասնագիտական հմտությունն էր: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ նրանք գիտեին, թե ով է ստեղծել ծովերը: Նա, ով առաջնորդում է մեզանից յուրաքանչյուրին մեր կյանքի ալիքների ու խոր ջրերի մեջ:

Ինչպես Դավիթն է գրել. «Ո՞ւր գնամ ես քո հոգուց» (Սաղմ.138.7): «Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես դու: Եթե բնակվեմ ծովի եզերքին, այնտեղ էլ քո ձեռքն ինձ կառաջնորդի, և աջդ ինձ կընդունի» (Հմ.8-10):

Այս բառերը կարող են ծանոթ լինել կանդաս ցեղի մարդկանց, որոնք ապրում են մի կղզու վրա, որի արևադարձային խիտ անտառներն ու հին լեռները կոչվում են «Վերջին անորոշը»: Բայց, որպես իսկական հավատացյալներ, նրանք գիտեն, որ ոչ մի տեղ և ոչ մի հարց անհասանելի չէ Աստծո համար: Սաղմոս 138-ի 12-ում ասվում է. «Խավարը քեզ համար խավար չի լինի, և գիշերը լուսավոր ցերեկ կդառնա, ու նրա մթությունն ինչպես լույս կերևա»: Հետևաբար փոթորկալից ջրերի վրա մեր Աստվածն ասում է. «Լռի՛ր, հանդարտվի՛ր» (Մարկ. 4.39), և ալիքներն ու քամիները հնազանդվում են: Ուստի մի՛ սարսափիր կյանքի խոր ու ալեկոծ ջրերից: Մեր Աստվածը մեզ ապահով կառաջնորդի դեպի ափ:

Աղոթք - Երկնավոր Տեր, Դու ես իշխում կյանքի ալիքներին ու քամիներին, և ես շնորհակալ եմ, որ ինձ ապահով առաջնորդում ես դեպի ափ: Ամեն:

Մեր կյանքում մի՞ս էլ փոթորիկներ կլինեն, սակայն Տերը մեզ աղահով ափ կհանի:

Ով որ խմի այն ջրից, որ ես կտամ իրեն, նա հավիտյան չի ծարավի: (Յոզի. 4.13)

ՋՈՒՐ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ԴՐԱ ԿԱՐԻՔԸ ԿԱ

Աշխարհի ամենախոր լիճը՝ Բայկալը, որը Ռուսաստանի Սիբիրի շրջանում է, առավելագույն հայտնի է իր քաղցրահամ ու մաքուր ջրով: Բավական է ասել, որ ամբողջ աշխարհի մաքուր ջրերի մեկ հինգերորդն այս լճում է: Մինչ մեր մոլորակը քաղցրահամ ջրի չափազանց մեծ կարիք ունի, դրա այդպիսի մեծ մատակարարը մի այնպիսի վայրում է, ուր շատերը չեն կարող հասնել:

Բայկալ լիճը, այո՛, կարող է անհասանելի վայրում լինել, բայց կա կենարար ջրի մի անսպառ աղբյուր, որը հասանելի է բոլոր նրանց, ովքեր ունեն դրա կարիքը: Հիսուսը սամարացի մի կնոջ հետ խոսեց նրա հոգևոր ծարավի մասին, որի հագեցումը Հիսուսն Ինքն էր:

Ի հակադրություն այն ջրի, որ կինը եկել էր աղբյուրից տանելու, Հիսուսն առաջարկեց ավելի լավ մի բան. «Այդ ջրից ամեն խմող կրկին կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես կտամ իրեն, նա հավիտյան չի ծարավի: Իսկ այն ջուրը, որ ես նրան կտամ, նրա մեջ ջրի աղբյուր կլինի, որ հավիտենական կյանքի համար կբխի» (Հովհ. 4.13-14):

Շատ բաներ են մեզ խոստանում գոհացում տալ, բայց դրանք մեր սրտի ծարավն ամբողջովին չեն հագեցնում: Մեր հոգևոր ծարավը կարող է հագեցնել միայն Հիսուսն Ինքը, և իր նախատեսությունը բոլորի համար տրամադրելի ու ամենուր է:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ այն կյանքի համար, որ Դու ես պարգևում, և այն նպատակի ու իմաստի համար, որ տալիս ես ինձ: Սովորեցրո՛ւ ինձ, որ կարողանամ իմ ծարավի իսկական հագեցումը գտնել Քո և Քո սիրո մեջ: Ամեն:

Յոզևոս ծարավ ես զգում: Դիմի՛ր Հիսուսին, որովհետև միայն Նա կարող է ծարավդ հագեցնել:

Եթե Մովսեսին ու մարգարեներին ականջ չեն դնում, չեն էլ համոզվի, եթե մեռելներից մեկը հարություն առնի: (Ղուկ. 16.31)

ՉՏԵՍՆՎԱԾ ՊԱՏԿԵՐ

Ա շխարհի առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինը պարաշյուտով իջել էր ռուսական մի դաշտի վրա: Մի հողագործ կին, տեսնելով նարնջագույն համազգեստով աստղանավորդին, զարմացած հարցրել է. «Դու կարո՞ղ է տիեզերքից իջար»: Եվ Գագարինը պատասխանել է. «Փաստորեն՝ այո: Ծիշտ այդպես»: Դժբախտաբար, խորհրդային առաջնորդներն այդ պատմական թռիչքը դարձրին հակակրոնական քարոզչության առիթ: «Գագարինը գնաց տիեզերք, սակայն այնտեղ որևէ աստված չտեսավ», - հայտարարեց այն ժամանակվա վարչապետը: Իսկ Գագարինը նման բան չէր ասել: Ինչպես աստվածաբան Ս. Լյուխսն է նկատել. «Նրանք, ովքեր Աստծուն չեն գտնում երկրի վրա, դժվար թե գտնեն տիեզերքում»: Հիսուսը Աստծուն անտեսելու մասին զգուշացնում է՝ պատմելով երկու մարդու մահվան մասին: Հարուստի, որը ժամանակ չուներ Աստծո մասին հիշելու և աղքատ Ղազարոսի, որը հարուստ էր իր հավատքով (Ղուկ.16.19-31): Դժոխքում տանջանքի մեջ, հեռվից տեսնելով Աբրահամին՝ Ղազարոսին գրկած, հարուստ մարդը նրան խնդրում է օգնել իր եղբայրներին, որոնք դեռ ողջ են. «Աղաչում եմ, Հայր, Ղազարոսին իմ հոր տուն ուղարկես, եթե մեռելներից մեկը նրանց մոտ գնա, կապաշխարեն» (Հմ. 27, 30): Բայց Աբրահամը պատասխանում է. «Եթե Մովսեսին ու մարգարեներին ականջ չեն դնում, չեն էլ համոզվի, եթե մեռելներից մեկը հարություն առնի» (Հմ.31):

«Տեսնելը բնավ հավատալ չէ,- գրել է շոտլանդացի ավետարանիչ Օսվալդ Չեմբերսը: - Մենք մեկնաբանում ենք այն, ինչ տեսնում ենք մեր հավատացածի լույսի ներքո»:

Աղոթք - Հայր, աղոթում եմ նրանց համար, ովքեր դեռ չեն հավատում Քեզ: Քո Հոգու ազնիվ զորությամբ ու սիրով նրանց ձգիր դեպի Քեզ: Ամեն:

Եթե հավատում ես Աստծո գոյությանն ու Հիսուսի հարությանը, ի՞նչ ազդեցություն է թողնում հավաստի և առօրյա որոշումների վրա:

Մարդու սիրտը պիտի խորհի իրավունքի մասին, որպեսզի Աստված էլ ուղղի նրա ընթացքը: (Առ.16.9)

ԾՐԱԳԻՐ ՈՒՆԵՄ

Գեղընը 18 տարեկան էր և ուզում էր ընդունվել քոլեջ՝ ակադեմիական կրթանպաստով: Դեռ միջնակարգ դպրոցում սովորելիս ազատ ժամերին նա մասնակցում էր մի ծրագրի և գումար էր տնտեսել: Երբ ընդունվեց Համալսարան, վստահ էր, որ ամեն ինչ իր երազածի նման է ընթանալու:

Սակայն 2020-ի գարնանը Համալսարանում ճգնաժամը փոխեց ամեն ինչ: Համալսարանից տեղեկացրին, որ առաջին կիսամյակի դասերը հավանաբար առցանց են լինելու, հետևաբար ինքը պիտի ընդհատի մասնակցությունը մյուս ծրագրին: Դրա հետևանքով ընկերությունը փակվեց: Տեսնելով Գեղընի հուսահատությունը՝ նրա բարեկամներից մեկը հիշեցրեց Հայտնի բռնցքամարտիկի բառերը. «Այո՛, ամեն մարդ ունենում է իր ծրագիրը՝ մինչև այն պահը, երբ հարված է ստանում բերանին»:

Առակների 16-ը ասում է, որ երբ մեր գործերը հանձնենք Աստծուն, նա կհաստատի մեր ծրագրերը և կհարմարեցնի իր ծրագրերին (Հմ.3-4): Սակայն դա դժվար գործ է ու պահանջում է բաց սիրտ, բարի կամեցողություն և անկախ ամեն ինչից՝ ծրագրի իրագործման հաստատակամություն (Հմ.9.12.21):

Չիրակացած երազները կարող են մեզ հուսահատեցնել, բայց երբեք չեն կարող մրցակցել Աստծո ամենազեա ձևերի հետ:

Աղոթք - Սիրող ու իմաստուն Յայր, օգնիր, որ հուսախաբություններիս մեջ վստահեմ քեզ՝ իմանալով, որ Դու բարի ու հավատարիմ Աստված ես և իմ քայլերը կհաստատես: Ամեն:

Մեր ծրագրերի և աղազայի առնչությամբ հուսախաբություններ կլինեն, բայց էականը Ասծուն վստահելն է:

Կրակից հետո մեղմ օդի ձայն կլիմի: (Գ. Թագ. 19.12)

ՓՈՒՏԻՐ ՉԵՁՈՔԻ

Ավտուրվացման կայանում ինձնից առաջ կանգնած մարդը լարված էր: Մեքենայից իջավ, գնաց հետ, վերցրեց այնտեղ դրված զարդատուփը, որպեսզի վրձինների ուժեղ շարժին չխանգարի: Վճարեց լվացման գումարը և արագ քշեց մեքենան ու դուրս եկավ՝ մոռանալով փոխել մեքենայի ընթացքը: Սպասարկողը գոռաց. «Չեզո՛ք, չեզո՛ք», բայց քանի որ մեքենայի ապակիները փակ էին, նա արագ անցավ ուղիների վրայով, և մեքենան հազիվ թրջվեց:

Եղիան նույնպես լարված էր: Զբաղված էր Աստծուն ծառայելու տարբեր ձևերով: Նա Բահադի մարգարեներին հաղթել էր գերմարդկային մի ցուցադրույթյամբ, որը սպառել էր նրան(տե՛ս .Թագ.18.16-39), և կարիք ուներ չեզոք ժամանակի, այսինքն՝ հանգստանալու: Աստված Եղիային բերեց Բորեբ լեռը, որը տարիներ առաջ Մովսեսին էր երևացել: Աստված մեկ անգամ էլ շարժեց լեռը, բայց Նա քարեր ու ժայռեր փշրող քամու, երկրաշարժի ու կրակի մեջ չէր: Ընդհակառակը՝ Նա Եղիային մոտեցավ մեղմ ձայնով: «Երբ Եղիան լսեց Աստծու ասածը, իր կաշվե վերարկուով ծածկեց երեսը, եկավ ու կանգնեց քարայրից ներս» (Գ.Թագ.19.13):

Դու և ես նույնպես առաքելութուն ենք կատարում: Մեր կյանքը դնում ենք ուղիների վրա, որպեսզի մեծ բաներ անենք մեր Փրկչի համար: Բայց եթեմեր ընթացքը չփոխենք չեզոքի, կարող ենք կյանքի միջով շատ արագ անցնել և կորցնել իր Հոգու հորդահոս զորութիւնը: Աստված շնջում է. «Հանդարտվե՛ք ու իմացե՛ք, որ ես Աստվածն եմ» (Սաղմ.45.11): *Չեզո՛ք, չեզո՛ք:*

Աղոթք - Հայր, ես հանգիստ եմ, որովհետև Դու Աստված ես: Ամեն:

Մեր կյանքը մի՛ս արագ ընթացքի մեջ է, բայց անհրաժեշտ է մի յոթ կանգ առնել ու Տիրոջը սղասել:



Ձեր բոլոր գործերը թող սիրով լինեն: (Ա.Կորնթ.16.14)

ՔԱՋԱՐԻ ՍԵՐ

Չորս հոգևոր տեսուչները հայտնի «հերոսներ» էին, բայց 1943-ի փետրվարյան ցուրտ գիշերը, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իրենց փոխադրող նավը Գրենլանդիայի ծովափի մոտ ումբակոծվեց, չորսն էլ փորձեցին անել ամեն ինչ՝ հանգստացնելու համար հարյուրավոր խուճապահար զինվորներին:

Վերապրողներից մեկը հայտարարեց, թե նրանք իրենց հանդարտությամբ «քաջություն քարոզեցին» այն վիրավորներին, որոնք նավն ընկղմվելու պահին փորձում էին ցատկել փրկարար նավակների մեջ: Երբ փրկարար բաճկոններն սպառվեցին, տեսուչները հանեցին իրենց բաճկոններն ու տվեցին սարսափած երիտասարդներին: Նրանք վճռել էին նավի հետ խորտակվել, որպեսզի ուրիշները փրկվեն: Փրկվածներից մեկ ուրիշն էլ հիշում է. «Ամենալավ բանը, որ ես տեսել կամ հույս եմ ունեցել տեսնել, երկնքի այս կողմն է»:

Երբ նավն ընկղմվում էր, այս չորսը, բազուկները միմյանց փաթաթած, բարձրաձայն աղոթում էին՝ քաջալերելով նրանց, ովքեր իրենց հետ կործանվում էին:

Այդ մարդկանց վարքագիծը քաջության խորհրդանիշ է դարձել, իսկ սերն այն պարզեան է, որ տվեցին ուրիշներին: Բոլորի հանդեպ նման սեր դրսևորելու մասին էր խոսում Պողոս առաքյալը փոթորկի մատնված Կորնթոսի հավատացյալների հետ: Բախումներով խառնակված, ապականությամբ ու մեղքով լի Կորնթոսի եկեղեցու անդամներին նա խնդրեց. «Արթո՛ւն եղեք, հավատի մեջ հաստատ կացեք. արիացե՛ք ու զորացե՛ք» (Ա.Կորնթ.16.13): Հետո ավելացրեց. «Ձեր բոլոր գործերը թող սիրով լինեն»(Հմ.14):

Աղոթք - Տե՛ր, երբ սոսկումի մեջ լինեմ, ինչը հաճախ է պատահում, ավելացրու՝ քաջությունս, որպեսզի կարողանամ սեր ցուցաբերել ուրիշների հանդեպ: Ամեն:

Փոթորկալից իրավիճակներում դիմի՛ր Տիրոջը, որ զորացնի քեզ:

Որքան ճնշում էին նրանց, նրանք այնքան ավելի էին բազմանում ու անչափ հզորանում: (Ել.1.12)

ՆՈՐԻՑ ԾԱՂԿԵԼ

Բավարար արևի ու ջրի առկայությամբ դաշտային վայրի ծաղիկները գեղեցիկ գորգի նման փռվում են Կալիֆոռնիայի դաշտերում ու լեռների լանջերին: Իսկ ի՞նչ կլինի, եթե երաշտ պատահի: Գիտնականների ասելով՝ բնությունը հոգացել է այդ մասին. որոշ վայրի ծաղիկներ հողի տակ ամբարում են մեծ քանակով սերմեր, որոնք երաշտից հետո դուրս են գալիս հողից ու ծաղկում են:

Իսրայելի ժողովուրդը, հակառակ իր զիմազերաված դժվարություններին, Եգիպտոսում բարգավաճեց: Նրանց գործավորները պարտադրում էին, որ դաշտերում անդուլ աշխատեն ու աղյուս պատրաստեն: Դաժան վերակացուները նրանց ստիպեցին, որ փարավոնի համար քաղաքներ կառուցեն: Եգիպտոսի թագավորը նրանց թիվը պակասեցնելու համար նույնիսկ փորձեց երեխաներին սպանել: Բայց որովհետև Աստված պաշտպանում էր եգիպտացիներին, «որքան ճնշում էին նրանց, նրանք այնքան ավելի էին բազմանում ու անչափ հզորանում» (Ել.1.12): Աստվածաշնչի մասնագետների հաշվարկներով՝ Իսրայելի ժողովուրդը Եգիպտոսում ապրելու տարիներին աճեց ու հասավ երկու միլիոնի:

Աստված, որ այն ժամանակ խնայեց իր ժողովրդին, այսօր էլ մեզ է պահում: Նա մեզ օգնում է ամենատարբեր պարագաներում: Մենք կարող ենք մտահոգվել, թե ինչպես ենք զիմանալու տարվա ևս մեկ եղանակ, սակայն Աստվածաշունչը վստահեցնում է, թե Աստված. «Եթե դաշտի խոտը, որ այսօր կա, բայց վաղը փուռն է գցվում», կարող է հոգալ մեր բոլոր կարիքները (Մատթ. 6.30):

Աղոթք - Հայր, երբեմն դժվար է լինում առաջ գնալը: Խնդրում եմ՝ կարիքներս հոգա այսօր և օգնիր, որ Քո Սուրբ Հոգու զորությանը կարողանամ հարատևել: Ամեն:

Հակառակ մեր դիմագրաված դժվարություններին՝ Աստված մի՛ս հոգ է սանում մեր մասին:

Իմ ծիսածանը ...քող լինի իմ ու ողջ երկրի միջև հավիտենական ուխտի
նշանը: (ԾՆՆ. 9.13)

ԾԻԱԾԱՆԻ ՀՐՋԱՆԱԿԸ

Ադրիանը լեռներում թափառելիս հայտնվեց ամպերից
վերև: Արևն իր հետևում՝ նա մի պահ վերև նայեց ու
տեսավ ոչ միայն իր ստվերը, այլև դրա շուրջը ծիածանի օղա-
կի նման փայլուն մի շրջանակ: Այդպես պատահում է, երբ
արևի լույսը արտացոլվում է ներքևում գտնվող ամպերից: Ադ-
րիանն այն նկարագրեց որպես հրճվալից ու կախարդական
պահ:

Կարելի է պատկերացնել, թե որքա՛ն սքանչելի էր այն պա-
հը, երբ Նոյն առաջին անգամ տեսավ ծիածանը: Իր աչքերում
եղած հրճվանքից ավելի՝ բեկվող լույսն ու արտացոլված
գույները նրան հասան՝ որպես Աստծո խոստում: Ավերիչ
ջրհեղեղից հետո Աստված վստահեցրեց Նոյին ու «շնչավոր բո-
լոր էակերին», որ «այլևս ջրհեղեղ չի լինի, որպեսզի բոլոր
էակները չոչնչանան» (ԾՆՆ. 9.15):

Մեր երկրում ջրհեղեղներ ու փոթորիկներ դեռ կլինեն, որոնք
մեծաթիվ կորուստների պատճառ կդառնան, սակայն ծիածանի
գոտին խոստում է այն մասին, որ Աստված այլևս համաշխար-
հային ջրհեղեղով չի պատժի երկրագունդը: Հավատարմության
այդ խոստումը հիշեցնում է, որ մեզանից յուրաքանչյուրը
կունենա անձնական կորուստ, հիվանդություն կամ մահ: Բայց
մեր դիմագրաված դժվարությունների մեջ Աստված մեզ կպա-
րուրի՝ Իր սիրով ու ներկայությունով:

Ջրում արտացոլված արևի լույսը լավագույն հիշեցումն է Իր
հավատարմության և այն մասին, որ Նա մեր աշխարհը լցնում
է Իր պատկերը կրողներով ու Իր փառքը ուրիշներին ցույց
տվողներով:

Աղոթք - Զայր, շնորհակալ եմ դժվարության ու նեղության պա-
հին իմ՝ պահելու ու պաշտպանելու Քո հաստատակամության
համար: Օգնի՛ր, որ կարողանամ Քո փառքը ցույց տալ ու-
րիշներին: Ամեն:

**Աղեսներ ու նեղություններ մի՛ս էլ կունենանք, բայց Աստված
խոսանում է բոլոր դարազանքում մեզ հետ լինել:**

Բայց Դավիթը մնաց Երուսաղեմում: (Բ.Թագ.11.1)

ՄԱՅՎԱՆ ԳՈՏԻ

2019-ին մի լեռնագնաց, որ բարձրացել էր էվերեստի գագաթը, չգիմացավ այդպիսի բարձրությունը և մահացավ: Այդուամենայնիվ, մասնագետ բժիշկները լեռնագնացներին խորհուրդ են տալիս չմտածել, թե հաղթահարելիք հերթական գագաթը իրենց ճամփորդության ավարտն է: Չմոռանալով, որ «մահվան գոտում են», նրանք շարունակելու են բարձրանալ ու իջնել:

Դավիթը նույնպես բարձունքներ նվաճելու և հռչակ ունենալու վտանգավոր ընթացքի մեջ ողջ մնաց: Թագավոր դառնալու ճանապարհին նա սպանեց առյուծներ, արջեր, հսկա ողիաթին, խուսափեց Սավուղի նիզակից, հաղթեց մովաբացիներին ու ամոնացիներին: Իր հաջողության գագաթնակետին «Տերը հովանավորում էր Դավիթին ամենուրեք, ուր էլ որ նա գնում էր»(Բ.Թագ. 8.6): Բայց Դավիթը մոռացել էր, որ ինքը մահվան գոտում էր: Նա շնությունն արեց և սպանություն: Հաջորդ տարի, երբ բանակն ուղարկեց նոր հաղթարշավների, «ինքը մնաց Երուսաղեմում» (Հմ.11.1): Նա հաջողությամբ մենամարտել էր Գողիաթի հետ և այժմ ուզում էր հանգստանալ իր հաջողությունների գափնիների վրա:

Այո՛, դժվար է հաստատակամ ու ազնիվ մնալ, երբ վայելում ես Աստծո բարեհաճությունը, գնահատված ես ու առանձնահատուկ վերաբերմունքի արժանացած(7.11-16): Սակայն մենք պետք է այդ բարձունքներից իջնենք: Եթե հաջողություն ենք ունենում, կարող ենք շնորհավորանքներ ընդունել, բայց նաև գործել: Չմոռանանք, որ մենք մահվան գոտում ենք: Իջնենք լեռներից ու խոնարհություն մեծառայեք ուրիշներին՝ խնդրելով, որ Աստված պաշտպանի մեր սիրտն ու մեր քայլերը:

Աղոթք - Հայր, տուր ինձ հաջողություն և պաշտպանի՛ր դրա շատությունից: Օգնի՛ր գլուխս չկորցնել: Ամեն:

Հաջողություններ ունենալն ու բարձրանալը լավ է, բայց զգույս լինեն՛ք ու աշխատե՛նք Ասծուն աղավիհնե՛լ:

Սորթված Գառն արժանի է: (Քայտն. 5.12)

ԱՐԺԵ՞Ր, ԹԵ ԱՐԺԱՆԻ Է

Անգլիացի բժիշկ-միսիոններ Հելեն Ռոզվելլը աֆրիկյան Կոնգո երկրում ծառայելիս 1964թ. ապստամբութեան ժամանակ գերի ընկավ: Նա ամիսներ շարունակ մնալով բանտում՝ շատ տառապանքներ կրեց: Հետագայում նա հարցրեց ինքն իրեն, թե արժե՞ր արդյոք:

Երբ Հելենն սկսեց հետևել Հիսուսին, ստացավ նաև այդ հարցի պատասխանը: Տարիներ անց հարցազրույցներից մեկում նա պատմել է. «Երբ իմ կրած տառապանքներից ծնվեց այդ հարցը, զգացի, որ Տերն ինձ հորդորում էր փոխել հարցս. «Արժե՞ր արդյոք»-ի փոխարեն ասա՛. «Ես արժանի՞ եմ»: Հելենն այդպիսով եզրակացնում էր, որ այդ հարցի պատասխանը միշտ էլ դրական է:

Որովհետև Փրկիչն Իր կյանքը տվեց մեզ համար, և Նա արժանի է, որ Իրեն հետևենք, եթե նույնիսկ դրա համար ստիպված լինենք ցավ կրել: Հելենի «Նա արժանի է» բառերը ասես արձագանքն են Հայտնութեան գրքում Հիսուսի գահի շուրջ խմբավածների աղաղակների. «Նրանք բարձրաձայն ասում էին. «Մորթված Գառն արժանի է զորութիւն, հարստութիւն, իմաստութիւն, կարողութիւն, պատիվ, փառք և օրհնութիւն ստանալու» (Հմ.5.12):

Մեր Փրկիչը տառապեց, արյուն թափեց և մեռավ մեզ համար, Իրեն լիովին նվիրեց, որպեսզի մենք ձրի ստանանք հավիտենական կյանք և հույս: Նա արժանի է:

Աղոթք - Տե՛ր, Դու միշտ արժանի ես պաշտամունքի: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ կարողանամ շնորհակալ սրտով ապրել քո ներկայությամբ: Ամեն:

Գիտու՛մ Իր կյանքը սվեց մեզ համար, ուսի՛ նա արժանի է ամենայն փառքի ու զոհաբերության:

Ջգո՛ւյշ կացեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առաջ, նրանց երևալու համար չանեք: (Մատթ. 6.1)

ԾԱԾՈՒԿ ԵՎ ԻՐԱՏՈՒՆ

Տի իզրիկապես անաշխատունակ Քրիստոֆերի համար իր ամենօրյա գործերը սկսել էին ավելի ու ավելի դժվար ու ցավազին դառնալ: Անցորդները տեսնում էին, որ նա հատկապես դժվարանում էր բակի խոտը հին գործիքով հնձելիս:

Մի օր նա անձանոթ բարերարից ստացավ նամակ և խոտ հնձելու թանկարժեք սարք: Իսկ գաղտնի նվիրատուի համար գոհացում էր կարիքավորին օգնելու հնարավորությունը միայն:

Տեր Հիսուսը չի ասում, թե ողորմություն անելու մեր բոլոր արարքները ծածուկ լինեն, բայց հիշեցնում է, որ դրա դրդապատճառները լավ քննենք (Մատթ. 6.1): Նա ասում է. «Երբ ողորմություն անես, քո առաջ փող մի՛ հնչեցնի, ինչպես կեղծավորներն են ժողովարաններում և փողոցներում անում, որպեսզի մարդկանցից փառավորվեն» (Հմ.2): Երբ Աստված ակնկալում է մեր առատաձեռնությունը, քաջալերում է մեզ, որ խուսափենք գովք ու ճանաչում ստանալուց. «դու երբ ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե քո աջն ի՛նչ է անում» (Հմ.3)

Երբ գիտակցենք, որ ամեն բան Աստծուց է տրված, կկարողանանք նաև լինել ծածուկ նվիրատուներ, որոնք այլոց գնահատանքի ու ճանաչման կարիքը չունեն: Բոլոր բարիքների աղբյուր մեր ամենագետ Տերը հրճվում է Իր ժողովրդի իսկական առատաձեռնությունից համար: Եվ որպես Իր հաստատումի պարգևատրում՝ չի սպասում ոչ մի բանի:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, խնդրում եմ՝ օրհնի՛ր ինձ, որ տամ անշահախնդիր ու անճնվիրաբար, ինչպես Դու ես տվել ինձ: Ամեն:

Մեր հավաստի գործնականորեն ամրադնդելու համար կարևոր է ուրիշներին օգնելը, բայց դա դեմ է անել ծածուկ:

Ես ողորմությանդ վրա հույս դրի: (Սաղմ. 12.6)

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԸ

Հավանաբար, սա «քավության նոխազի» մասին ամենատար-
օրինակ պատմությունն է: Չիկագոյի 1871թ. մեծ հրդեհի
համար, որի պատճառով զոհվեց երեք հարյուր մարդ, և ան-
տուն մնաց քաղաքի բնակչության մեկ երրորդը, մեղադրվեց
տիկ. Օ. Լայրիի կողմ:

Տարիներ շարունակ մարդիկ հավատում էին, որ հրդեհի
պատճառն այն է եղել, որ կովը շրջել է խրճիթում վառված
լամպը: Սակայն 126 տարի անց քաղաքի ոստիկանությունն ու
հրշեջ հանձնաժողովը, դարձյալ անդրադառնալով հարցին, ար-
դարացրին կովին ու իր տերերին և առաջարկեցին քննել
նրանց հարևաններից մեկի արարքները:

Արդարությունն, առհասարակ, ժամանակ է պահանջում և
Աստվածաշունչն էլ է ընդունում, թե որքան դժվար է այդ ու-
ղին: 12-րդ սաղմոսում չորս անգամ կրկնվում է «մինչև ե՞րբ»
հարցը: «Մինչև ե՞րբ, Տե՛ր, պիտի մոռանաս ինձ իսպառ, մինչև
ե՞րբ պիտի շրջես երեսդ ինձնից: Մինչև ե՞րբ խռովք ունենամ
իմ հոգում և ամենօրյա ցավ՝ իմ սրտում: Մինչև ե՞րբ թշնա-
մին պիտի բռնանա ինձ վրա» (Հմ.1-3): Բայց իր ողբի մեջ Դա-
վիթը հույսի ու հավատի առիթ է գտնում. «Ես ողորմությանդ
վրա հույս դրի, Տե՛ր, սիրտս հրճվեց քո փրկագործությունք»
(Հմ.6):

Նույնիսկ եթե արդարությունն ուշանա, Աստծո սերը բնավ
չի ձախողեցնի մեզ:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, օգնի՛ր, որ կարողանամ վստահել Քեզ
նույնիսկ այն ժամանակ, երբ չեմ տեսնում արածդ: Երախտա-
պարտ եմ, որ կարող եմ հանգստանալ Քո բարության ու հավա-
տարմության մեջ: Ամեն:

**Հակառակ մեր բոլոր թերությունների՝ Աստված զանազան
ձևերով ցույց է սվել Իր սերը, և մեզ մնում է ցույց տալ Իր
հանդեպ ունեցած մեր վստահությունը:**

Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի՛ պահեցեք: (Ա.Պետ. 2.12)

ՈՒՇԱԳՐԱՎ ԿՅԱՆՔ

Ավստրալացի վիրաբույժ Քեթրին Հեմլինի մասին իմացա, երբ կարգացի նրա մահախոսականը: Քեթրինն ու իր ամուսինը Եթովպիայում հիմնել են աշխարհում միակ հիվանդանոցը՝ բուժելու համար ծննդաբերության ժամանակ կանանց ունեցած ֆիզիկական ու հոգեկան ծանր ապրումները: Հետագայում նրա գործունեությունը գնահատելիս նշվել է, որ նա օգնություն է ցուցաբերել ավելի քան 60 հազար կնոջ:

92 տարեկանում էլ նա շարունակում էր աշխատել: Իր օրն սկսում էր մի գավաթ թեյով ու Աստվածաշունչ կարգալով: Միշտ շեշտում էր, որ ինքը սովորական մի հավատացյալ է, որը պարզապես կատարում է Աստծուց իրեն տրված գործը:

Ես ուրախ էի, որ ծանոթացել էի Հեմլինի կյանքի պատմությանը, որովհետև այն Աստվածաշնչի քաջալերանքը մարմնավորելու իսկական օրինակ է: Կյանքն ապրել այնպես, որ նույնիսկ Աստծուն մերժողները «մեր բարի գործերը տեսնելով՝ փառավորեն Աստծուն» (Ա.Պետ. 2.12):

Աստծո Հոգու գորությունը, որ մեզ հոգևոր խավարից կանչում է իր հետ հարաբերվելու(Հմ.9), որպես մեր հավատքի վկայություն՝ կարող է վերափոխել մեր գործերը կամ ծառայության ոլորտները: Միբով կամ Աստծո տված ձիրքով մենք կարող ենք այդ բոլորն անել այնպիսի ձևով, որն ի գորու կլինի մարդկանց առաջնորդելու դեպի Աստված:

Աղոթք - Տե՛ր, թող Քո սերն ու շնորհքը երևան խոսքերիս ու գործերիս մեջ: Ամեն:

**Աստված մեզ կանչել է որոշակի ծառայության համար:
Պեսնաբար, կատարենք այն Աստծո ամուճով:**

Աստված բարերար է նրանց հանդեպ, ովքեր իրենց հույսը դնում են նրա վրա: (Ողբ Երեմ. 3.25)

ՈՂԲԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ Է

Հավատում էի, որ Աստված սիրում է ինձ, ու հարկ եղած դեպքում հոգ կտանի իմ մասին, այնուամենայնիվ 2020-ի թագավարակի համաճարակի դաժան օրերին շատ հուսալքված էի և ծնկաչոք արտասպելով՝ հարցրի.«Աստված՝ իմ, ինչո՞ւ իմ մասին հոգ չես տանում»: Մոտ մեկ ամիս էր անցել, և անաշխատունակության դիմումիս մեջ մի սխալի պատճառով որևէ գումար չէի ստացել և ԱՄՆ-ի կառավարության խոստացած օժանդակությունը դեռ ինձ չէր հասել: Բայց ես համոզված էի, որ Աստված ամեն բան կդասավորի:

«Երեմիայի ողբը» մեզ հիշեցնում է, որ ողբը ընդունելի է: Համարվում է, որ գիրքը գրվել է բաբելոնացիների ձեռքով՝ Երուսաղեմի ավերումից հետո՝ Ք.Ա. 587թ. և նկարագրում է ժողովրդի կրած տառապանքները(3.1), կտտանքներն(1.18) ու սովը (2.20,4.10): Հեղինակը գրքի կեսին արդեն բացատրում է, թե ինքը ինչու է ապավինում Տիրոջը. «Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում: Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տե՛ր» (3.22-23): Այսինքն՝ հակառակ ավերածություններին՝ Աստված հավատարիմ է մնում:

Երբեմն անհավատալի է թվում, թե «Աստված բարերար է նրանց հանդեպ, ովքեր իրենց հույսը դնում են նրա վրա» (Հմ.25), հատկապես երբ մարդու տառապանքների վերջը չի երևում: Սակայն մենք կարող ենք աղերսել Իրեն ու վստահել, որ ինքը լսում է մեզ ու հավատարիմ կլինի մեզ առաջնորդելիս:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, հենց հիմա ունենմ Քո կարիքը: Խնդրում եմ՝ օգնիր ինձ՝ վստահ լինել, որ նեղության մեջ Դու ինձ հետ ես: Ամեն:

Երբեմն դժվար է լինում Ասծուն վստահելը, բայց կարելի է ողբը լսելի դարձնել:

Նրա բոլոր ուղիները օրինավոր են: (Բ.Օր. 32.4)

ԿԱՏԱՐՅԱԼ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

1 1983-ին երեք պատանիներ ձերբակալվեցին տասնչորս տարեկան մի տղայի սպանության մեղադրանքով: Տեղեկատվության համաձայն՝ «տղային սպանել էին մարզահագուստի պատճառով»: Հանցագործները մահվան դատապարտվեցին, սակայն երեսունվեց տարի բանտում անցկացնելուց հետո պարզվեց, որ իրական մեղավորը նրանք չէին: Դատավորը, նրանց ազատ արձակելուց առաջ ներողություն խնդրեց:

Այո՛, մարդկային արդարությունն ունի թերություններ: Մենք ամբողջ ճշմարտությունը երբեք չենք իմանում: Երբեմն անազնիվ մարդիկ են աղավաղում տվյալները, երբեմն մենք ենք սխալվում, ու այդպես տարիներ են պահանջվում, որ արդարությունը վերականգնվի, և դա կարող է լինել ոչ անպայման մեր կյանքի ընթացքում:

Բարեբախտաբար, ի տարբերություն մարդկանց, Աստված կատարյալ արդարություն է հաստատում: Մովսեսն ասում է. «Աստծո գործերը ճշմարիտ են, ու նրա ուղիները՝ օրինավոր: Աստված հավատարիմ է, և Նրա մեջ անիրավություն չկա» (Բ.Օր. 32.4): Աստված ամեն ինչ տեսնում է այնպես, ինչպես որ են: Եվ ժամանակի ընթացքում Նա կբերի վերջնական ու գերազույն արդարությունը:

Մարդիկ կարող են մտավախություն ունենալ, թե իրենց սիրելիների հանդեպ եղած անարդարությունը երբեք չի ուղղվի: Սակայն պետք է վստահել Աստծոն, որ մի օր (այս կամ հաջորդ կյանքում) Նա անպայման կհաստատի Իր արդարությունը:

Աղոթք - Տե՛ր, շուրջս՝ լուրերում, սոցիալական ցանցերում ու իմ հարաբերություններում, տեսնում եմ անարդարություն: Շնորհակալ եմ այն հույսի համար, որ կարող եմ ունենալ Քո և Քո արդար ուղիների հանդեպ: Ամեն:

Անարդարության դեմքեր կեսանենք, բայց արդարության համար կարող ենք դիմել Աստծուն:

Հոյսով ուրախացե՛ք, նեղությանը համբերեցե՛ք, մշտապես աղոթեցե՛ք: (Հռոմ.12.12)

ՀՈՒՅՍՈՎ ՍՊԱՍԵԼ

Մեր մեկշաբաթյա արձակուրդի ժամանակ Ռոջելիոն մեզ սպասարկողն էր: Խոսակցություններից մեկի ժամանակ նա երախտագիտություն հայտնեց Հիսուսին, որ ինքը հանդիպել է իր կնոջը՝ հավատավոր ու կարեկից Կելիին: Իրենց առաջին զավակին ունենալուց հետո Աստված նրանց առիթ տվեց հոգատարություն ցուցաբերել իրենց՝ Դաուդի համախտանիշով զարմուհու հանդեպ: Իրանից հետո Կելիի սկեսուրը կարիք ունեցավ խնամողի:

Ռոջելիոն ուրախությամբ էր հետևում կնոջ հոգատարությանը, երբեմն նաև աշխատում էր կրկնակի, որպեսզի կինը հասցնե՛ր օգնել իր հարազատներին: Երբ ես իմ հիացմունքն արտահայտեցի նրանց ընտանիքի մասին, նա ասաց.«Ես ուրախությամբ եմ ծառայում նրանց»:

Ռոջելիոյի կյանքը ցույց է տալիս առատաձեռնությամբ ու Աստծուց մեզ տրված հոգատարությամբ գործելու ուժը: Պողոս առաքյալը Աստծո ժողովրդին հորդորում է. «Իրար նկատմամբ զթասի՛րտ եղեք, պատիվ տալու մեջ իրարից առա՛ջ անցեք: Հույսով ուրախացե՛ք, նեղությանը համբերեցե՛ք, մշտապես աղոթեցե՛ք» (Հռոմ.12.10-12):

Մեր կյանքը ամեն վայրկյան կարող է փոխվել՝ մեզ կամ մեր սիրելիներին զցելով դժվարին կացության մեջ: Բայց երբ մենք պատրաստ լինենք ուրիշների հետ բաժնեկցել Աստծո տվածներով, կկարողանանք հասնել իր հավերժական սիրուն:

Աղոթք - Հայր, խնդրում եմ՝ օգնիր սիրել ուրիշներին, երբ սպասում եմ Քեզ, որ գործես իմ մեջ: Ամեն:

Թեև մեր նախասիրությունները հայցում են մեր ով լինելը, բայց մեզանից սղասվում է ավելի նմանվել Հիսուսին:

Բայց գիտենք, որ երբ նա հայտնվի, նրա նման կլինենք: (Ա. Յովհ. 3.2)

ՄԵՐ ԾՆՄԱՐԻՏ ԱՆՁԻՆՔ

Մեր ընտանեկան լուսանկարների ալբոմում մանկան մի պատկեր կա: Նա ունի կլոր դեմք, ուղիղ ու ոսկեգույն մազեր: Նա չի սիրում ավոկադո, նայում է մուլտֆիլմեր և ունի Աբբա խմբի ձայնապնակ: Մեկ այլ լուսանկարում երկար դեմքով, գանգրահեր մի պատանի է, որը սիրում է ավոկադո, մուլտֆիլմերի փոխարեն կինոնկար է դիտում և չի ընդունում, որ երբևէ լսել է Աբբայի կատարումները: Մանուկն ու պատանին շատ քիչ նմանություն ունեն: Եթե հավատարու լինենք գիտնականներին՝ այդ երեխաներն ունեն տարբեր մաշկ, ատամ ու ոսկոր: Իրականում, սակայն, այդ երկու լուսանկարում էլ ես եմ: Այս երևույթը շփոթեցրել է փրկիստփաներին, որովհետև մեր կյանքի ընթացքում մենք այնքան ենք փոխվում, որ նույնիսկ ինքներս չենք իմանում, թե որն ենք մենք իրականում:

Աստվածաշունչը տալիս է այս հարցի պատասխանը: Այն պահից սկսած, երբ Աստված սկսում է մեզ հյուսել մեր մոր որովայնում (Սաղմ. 138:13), մենք շարունակում ենք աճել մեր հատուկ պատկերով: Մենք չգիտենք, թե ինչպիսին ենք լինելու ի վերջո, բայց գիտենք, որ եթե Աստծո զավակներն ենք, Հիսուսի նման ենք լինելու (Ա.Հովհ.3.2): Մեր մարմինը կլինի Իր բնությամբ՝ մեր անձով, բայց Իր նկարագրով, մեր բոլոր պարգևները կշողշողան և մեր մեղքերը կմաքրվեն:

Մինչև Հիսուսի վերադարձի օրը մենք գնում ենք դեպի այս ապագա անձը: Իր գործով քայլ առ քայլ մենք կկարողանանք Նրա պատկերը շատ ավելի հստակ արտացոլել (Բ.Կորնթ. 3.18): Մենք դեռ այն չենք, ինչ լինելու ենք: Իսկ մինչ Նրան նմանվելը՝ մենք մեր ճշմարիտ անձերն ենք լինում:

Աղոթք - Տե՛ր, այսօր և ամեն օր ինձ ավելի նմանեցրու՝ Քեզ: Ամեն:

Թեև մեր նախասիրությունները հայցում են մեր ով լինելը, բայց մեզանից սղասվում է ավելի նմանվել Յիսուսին:

Իմաստուն կանայք շինում են իրենց տները, իսկ անզգամ կանայք կործանում են դրանք իրենց ձեռքով: (Առ. 14.1)

ԱՎԵԼԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՇԻՆԱՐԱՐԸ

Սոջորները թրուլթը՝ օրիորդական ազգանունը Իզաբելյա Բոմֆրի, 1797թ. ծնվել էր Նյու Յորքի արվարձանում՝ իբրև ստրուկ: Նրա գրեթե բոլոր երեխաները վաճառվել էին ստրկության, սակայն նրան հաջողվեց մեկ դստեր հետ ազատություն ստանալ և ապրել այն ընտանիքի հետ, որը համաձայնել էր վճարել իրենց փրկագինը: Ավելին, նա չհամակերպվեց իր ընտանիքի տարանջատման փաստի հետ և իրավական ճանապարհով վերադարձրեց նաև փոքր որդուն՝ Փիթերին: Աֆրոամերիկացի կնոջ այս քայլը այդ ժամանակների համար սխրանք դիտվեց: Գիտակցելով, որ առանց Աստծո օգնության ինքը չի կարողանալու զավակներին մեծացնել, նա հավատաց Քրիստոսին, անունը դարձրեց Սոջորներ թրուլթ ցույց տալու համար, որ իր կյանքը հիմնված է Աստծո ճշմարտության վրա: Սողոմոն թագավորը հայտարարում է՝ «Իմաստուն կանայք շինում են իրենց տները, իսկ անզգամ կանայք կործանում են դրանք իրենց ձեռքով» (Առ. 14.1): Շինելու փոխաբերությունը Աստծո բերած իմաստունությունն է ցույց տալիս նրանց, ովքեր ուզում են հետևել դրան: Ինչպե՞ս կարող է մեկը իմաստունությամբ տուն շինել: «Ձեր բերանից ոչ մի վատ խոսք դուրս չգա, միայն այն, որ բարի է, հավատի շինություն համար պիտանի, որ շնորհ տա լսողներին» (Եփ. 4.29, նաև Ա. Թես. 5.11): Իսկ «ինչպե՞ս կարող է կործանել» հարցի պատասխանը տալիս է Առ. 14-ը. «Հիմարների բերանները թշնամանքի գավազաններ են» (Հմ.3): Աստծո իմաստունության շնորհիվ փոթորկալից ժամանակներում Սոջորներն ուներ «խաղաղ ապավեն» (Հմ.26): Դու գուցե եկ կարիքը չունենաս զավակներին փրկել անարդարությունից: Բայց դու էլ կարող ես քո տունը կառուցել նույն հիմքի՝ Աստծո իմաստունության վրա:

Աղոթք - Հայր, Քո փառքի ժառանգությունը կառուցելու համար Քո իմաստնության կարիքն ունեմ: Ամեն:

Տերն ակնկալում է, որ մեր սները կառուցենք Աստծո հաստատուն հիմքերի վրա:

Ես իջա, որ նրանց փրկեմ եգիպտացիների ձեռքից: (ԵԼՔ 3. 8)

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

911 փրկարար ծառայությունը օգնություն կանչ ստացավ, և ոստիկանը մեքենայով արագ մոտեցավ երկաթուղուն ու լուսարձակի օգնություն տեսավ, որ ուղևորի վրա մեքենա է կանգնած, իսկ գնացքը մեծ արագությամբ մոտենում է: Առանց վարանելու նա վազեց դեպի մեքենան ու հազիվ հասցրեց մեքենայից դուրս բերել ուշազնաց վարորդին:

Աստվածաշունչը հայտնում է, որ Աստված է այդպիսի ճշգրտություն օգնություն հասնում ու փրկում, երբ ամեն ինչ կորսված է թվում: Եգիպտոսում կալանված ու ճնշումների ներքո գտնվող իսրայելցիները այլևս փրկության որևէ հնարավորություն չէին տեսնում: Ելքում, սակայն Աստված հուսադրում է.«Ես ականատես եղա եգիպտոսում գտնվող իմ ժողովրդի կրած տառապանքներին, լսեցի նրանց բարձրացրած աղաղակը, տեղյակ եմ նրանց վշտերին» (3.7-8): Աստված ոչ միայն տեսավ, այլև գործեց. «Ես իջա, որ նրանց փրկեմ եգիպտացիների ձեռքից (3.8): Նա ազատեց իսրայելը գերությունից, և դա աստվածային փրկություն էր:

Աստծո փրկագործությունը վկայում է Նրա սրտի ու զորության, կարիքավորներին օգնելու պատրաստակամության մասին: Որքան էլ մեր վիճակը ողբալի ու անելանելի լինի, կարող ենք մեր հայացքն ու սրտերը բարձրացնել ու նայել Նրան, ով սիրում է փրկել:

Աղոթք - Հայր, իրապես դժվարության մեջ եմ, և եթե Դու չօգնես ինձ, բարի ավարտ ես չեմ տեսնի: Կօզմես ու կազատե՞ս ինձ: Ամեն:

Երբ օգնության կարիք ունենանք, դառնանք Աստուն ու վստահենք Իրեն:

Քրիստոսի կատարյալ հասակի չափով կատարյալ մարդ լինենք: (Եփ. 4.13)

ՇԱՐԺՎԵԼ ԴԵՊԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Բնակչության շրջանում անցկացված հարցումներից մեկի թեման այն էր, թե երբ են մարդիկ իրենց հասուն զգացել: Իրենց մեծահասակ համարողները նաև դրա ցուցիչներն էին նշել: Ցուցակը գլխավորում էին բյուջե ունենալն ու տուն գնելը: Բայց կարևորվում էին նաև ընթրիք պատրաստելը, բժշկական այցելությունների ժամադրությունների ճշտումը, հանգստյան օրերին տանը մնալը և այլն:

Աստվածաշունչն ասում է, որ մենք էլ պետք է ձգտենք հոգևոր հասունություն: Պողոսը Եփեսոսի եկեղեցուն հորդորեց. «Քրիստոսի կատարյալ հասակի չափով կատարյալ մարդ լինենք»(Եփ. 4.13): Քանի դեռ «մանուկ ենք» մեր հավատքի մեջ, խոցելի ենք «վարդապետության» քամիներից (Հմ.14), որոնք պատճառ են դառնում բաժանման ու մոլորությունների: Դրան հակառակ՝ հոգևոր հասունության հասնելով ու հավատքի մեջ աճելով՝ կգործենք որպես մի մարմին «Քրիստոսի մեջ, որ գլուխն է» (Հմ.15):

Աստված մեզ տվեց Իր Հոգին, որպեսզի օգնի մեզ աճելու ու ամեն բան հասկանալու (Հովհ. 14.26): Հոգին զինում է մեզ, որ դառնանք առաքյալներ, ավետարանիչներ ու վարդապետներ և առաջնորդում մեզ դեպի հասունություն մեր հավատքի մեջ (Եփ. 4.11-12): Ճիշտ այնպես, ինչպես որոշ հատկանիշներ ֆիզիկական հասունության ապացույցներ են, մեր միությունը՝ որպես Իր մարմինը, մեր հոգևոր աճի ապացույց է:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, Դու ես իմ աճի ու հասունության հեղինակը: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ՝ տեսնել, թե դեռ որտեղ աճելու կարիք ունեմ: Ամեն:

Մենք հակված ենք մարդկանց խաբեության դաժառոտ երեւույթի, սակայն հոգևոր առումով աճելու համար կարելի է աղափինել Աստուծո՞ւն:

Առյուծացար ազգերի մեջ, վիշապի ցմանվեցիր ծովում: (Եզ. 32.2)

Ո՞Վ ԵՍ ԴՈՒ

Մեր առցանց հանդիպման ղեկավարը ողջունեց, ես պատասխանեցի, բայց չէի նայում նրան: Հայացքս էկրանի վրա երևացող իմ պատկերի վրա էր, և հանկարծ ինքս ինձ հարցրի.«մի՞թե այսպիսի տեսք ունեմ»: Ժողովի մասնակիցների ժպտացող դեմքերին նայելով՝ հասկացա, որ մազերս հարկավոր է մի փոքր կտրել և մի քիչ էլ նիհարել:

Իր մտքում Փարավոնը բավական մեծ էր. «Առյուծացար ազգերի մեջ, վիշապի նմանվեցիր ծովում» (Եզ. 32.2): Սակայն իր մասին Աստծո խոստացածը բոլորովին այլ էր. նրան խավարն է պատելու, նրա մարմինը կեր է դառնալու գազաններին, ձորերը լցվելու են նրա արյունով և նրա պատճառով «բազմաթիվ ազգեր ու նրանց թագավորները սաստիկ զարհուրելու են» (Հմ.10): Այսինքն՝ Աստծո հեռանկարում Փարավոնը իր մտածածից շատ հեռու էր:

Հնարավոր է, որ մենք էլ մտածենք, թե «հոգևոր առումով գեղադեմ ենք», քանի դեռ չենք տեսել մեր մեղքերը, որ Աստված է տեսնում: Համեմատվելով Իր հոգևոր չափանիշներին՝ նույնիսկ «մեր ամբողջ արդարությունը կեղտոտ շորերի է նմանվում» (Ես. 64.6): Սակայն Աստված այլ՝ ավելի ճշմարիտ բան էլ է տեսնում, Նա տեսնում է մեզ Հիսուսի մեջ:

Ինչպիսին լինելուդ համար հուսահատվում ես: Բայց հիշի՛ր, որ այդ դո՛ւ չես: Եթե վստահում ես Հիսուսին, ապա դու Իր մեջ ես և Իր սրբությունը ծածկում է քեզ: Հետևաբար, դու ավելի գեղեցիկ ես, քան պատկերացնում ես:

Աղոթք - Տե՛ր, ապավինում եմ քեզ: Քո սերն ու բարությունը կգեղեցկացնեն ինձ: Ամեն:

Թող մեր դասկերը Դիսուսը ցույց տա և մեզ դարձնի Իր դասկերը արժանապատիվ:

Որից չտեսած՝ սիրում եք, որից հավատացիք, թեև հիմա չեք տեսնում: (Ա.Պետ. 1.8)

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՔԱՆՉԵԼԻՔՆԵՐ

Իր կյանքի մայրամուտին տիկին Գուզրիչը, Միչիգանի ծովափնյա իր տան լուսամուտի մոտ նստած, նոթատետրում գրառում էր. «Ահա նստած եմ իմ սիրած աթոռին, ոտքերս՝ շեմին, սիրտս՝ օդում: Ջրի ալիքները անընդհատ շարժվում են, բայց ու՞ր են գնում՝ չգիտեմ: Սակայն շնորհակալ եմ, երկնավոր Հայր, Քո անթիվ պարգևների ու անմահ սիրո համար: Միշտ էլ հիացել ու զարմացել եմ, թե ինչպե՞ս է պատահում, որ սիրում եմ Նրան, ում չեմ տեսնում»:

Պետրոս առաքյալն էլ ընդունեց նման սքանչելիքի գոյությունը: Նա Հիսուսին տեսել էր, բայց իր նամակը կարդացողները հաստատապես տեսած չէին լինելու: «Որին չտեսած՝ սիրում եք, որին հավատացիք, թեև հիմա չեք տեսնում (Ա.Պետ.1.8): Մենք Հիսուսին սիրում ենք ոչ թե նրա համար, որ մեզ հրաման է տրված, այլ որովհետև Հոգու օգնությամբ (Հմ.11) սկսում ենք տեսնել, թե Նա մեզ որքան է սիրում:

Այդ մասին լսելուց ավելի կարևոր է Քրիստոսի տված խոստման, Իր անտեսանելի ներկայություն ու Հոգու սքանչելիքի փորձառություն ունենալը, այն մեր կյանքի բոլոր հանգրվաններում իրական դարձնելը:

Աղոթք - Երկնքում բնակվող Հայր, խնդրում եմ՝ օգնիր, որ կարողանամ Որդուդ մեջ տեսնել Քո սիրո ու ներկայության հրաշքը և հավատալ Քո Հոգուն: Ամեն:

Շահ անեստանելի ու դժվար հասկանալի բաներ կան մեր կյանքում, բայց մեր հավատի աչքերով դրանք մեզ համար կարող են դառնալ սփանչելիքներ:

Կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես: (Ես. 43.1)

ԳԻՏԻ ՔՈ ԱՆՈՒՆԸ

Մեր եկեղեցուց հեռանալուց երեք տարի անց ես ու ամուսինս որոշեցինք վերադառնալ, բայց մտավախուլթյուն ունեինք, թե ինչպես կընդունվեր մեր քայլը: Արդյո՞ք մեզ նորից կընդունեն, կսիրեն ու կներեն: Կիրակի առավոտյան մեր հարցերի պատասխանն ստացանք: Նոր էինք մոտեցել եկեղեցու դռներին, երբ լսեցինք. «Փե՛թ, Դե՛ն, ինչ լավ է, որ ձեզ կրկին տեսնում ենք»: Ինչպես մանկազիր Քեյթ դի Կամիլիոն է գրել իր հանրահայտ գրքում.«Այս տխուր աշխարհում ամենաքնքուշ բանն այն է, երբ լսում ես, որ մեկը կանչում է քեզ»:

Նույն երաշխիքը Իսրայելի ժողովրդի համար էլ էր ճիշտ: Նրանք հրաժարվել էին Աստծուց, սակայն Տերը պատրաստ էր դարձյալ ընդունել նրանց: Նա Եսայի մարգարեին ուղարկեց, որ այդ մասին վստահեցնի նրանց. «Մի՛ վախեցիր, որովհետև փրկեցի քեզ և կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես»(Ես. 43.1):

Այս աշխարհում երբ մեզ զգանք չնկատված, չգնահատված և նույնիսկ անձանոթ, վստահ լինենք, որ Աստված մեզանից յուրաքանչյուրին գիտի անուն առ անուն: «Ուստի թանկ եղար ինձ համար, իմ առաջ փառավորվեցիր, ու ես սիրեցի քեզ» (Հմ.4),- ասում է Աստված և խոստանում. «Եթե ջրերի միջով անցնես, քեզ հետ կլինեմ, և գետերը քեզ չեն խեղդի. եթե կրակի միջով անցնես, չես այրվի, և նրա բոցը քեզ չի կիզի» (Հմ.2): Այս խոստումը միայն Իսրայելի ժողովրդի համար չէ: Հիսուսն Իր կյանքը որպես փրկագին տվեց մեզ համար և գիտի մեր անունները: Որովհետև սիրով մենք Իրենն ենք:

Աղոթք - Տե՛ր, երբ հեռանամ Քո թևերից ու թողնեմ Քո ընկերակցությունը, իմձ ետ դարձրու: Որքա՞ն երախտապարտ եմ, որ Քոնն եմ: Ամեն:

Որքան էլ մենք Աստուց հեռանանք, Նա մեզ կսիրի ու գրկաբաց կստասի, որ դառնանք դեղի Ինքը: Նա մեզ մեր անուններով գիտի:

Աստծու արքայությունն այդպիսիներինն է: (Մարկ. 10.14)

ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մայրս իր կյանքում շատ բաների է նվիրվել, բայց նրա ամենամեծ ու անփոփոխ ցանկությունը մանուկներին Հիսուսին ներկայացնելն էր: Նա շուրջ 45 տարի եկեղեցում աշխատել է երեխաների հետ: Ու եթե երբևէ անհամաձայնություն է ունեցել, ապա դա եղել է այն պարագայում, երբ փորձ է արվել պակասեցնել մանուկների ծառայություն համար նախատեսված բյուջեն և այն հատկացնել «ավելի լուրջ ծախսերի»:

Մարկոսի Ավետարանի 10-րդ գլուխը մանուկների ու Հիսուսի մասին է; Մարդիկ երեխաներին բերում էին Հիսուսի մոտ, որ նա հպվի նրանց ու օրհնի: Սակայն աշակերտները փորձում են արգելել: Մարկոսը նկարագրում է վրդովված Հիսուսին, որը նախատում է իր աշակերտներին ու ասում. «Երեխաներին թո՛ւյլ տվեք, որ ինձ մոտ գան, ու զրանց մի՛ արգելեք, քանի որ Աստծու արքայությունն այդպիսիներինն է (Հմ.14):

Չարիզ Դիքքենսը գրել է. «Միրում եմ փոքրերին: Երբ հայտնի է, թե այդ մատղաշ ու Աստծուց տրված էակները սիրու՞մ են մեզ: Մենք լավագույնն ենք անելու, որ մանուկները բնավ զրկված չլինեն Հիսուսի առողջարար սիրուց»:

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանամ ցույց տալ Քո սերն ու ներկայությունը ամբողջ ժողովրդին, այդ թվում՝ նաև մանուկներին, որոնք հեշտությամբ են գալիս Քեզ մոտ: Ամեն:

Որո՞ղես ավագ հավասացյալներ՝ մեր դարձականությունն է ամեն դեպքում Տե՛ր Հիսուսին ներկայացնել մանուկներին:

Իմն օգնություն պիտի գա Տիրոջից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը: (Մաղմ. 120.2)

ԱՍՏԾՈ ՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռեբեկայի ու Ռասելի բժիշկներն ասացին, որ նրանք չեն կարող երեխա ունենալ: Բայց Աստված այլ ծրագրեր ուներ: Տասը տարի անց Ռեբեկան հղիացավ: Հղիությունը նորմալ էր ընթացել, բայց երբ երկունքի ցավերն սկսվեցին, բժշկուհին հասկացավ, որ անհրաժեշտ է կեսարյան հատում կատարել: Ռեբեկայի տագնապին նա պատասխանեց, որ հանգիստ լինի և Աստծուն աղոթի, որովհետև նա ավելին կարող է անել: Տասնհինգ բույս անց ծնվեց մի առողջ մանկիկ:

Բժշկուհին շուտ հասկացավ, որ իր գիտելիքների ու փորձառությունների հետ մեկտեղ հարկավոր է վստահել Աստծուն ու նրա գործությանը (Մաղմ. 120. 2):

Քաջալերական է հատկապես հմուտ մարդկանցից լսել, որ իրենք Աստծո աջակցության կարիքն ունեն, որովհետև բոլորս ունենք այդ կարիքը: Նա Աստված է, իսկ մենք՝ ոչ: Միայն նա «կարող է առատություն մամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք» (Եփ.3:20): Թող որ ունենանք հեզ սիրտ՝ Իրենից սովորելու և աղոթքով Իրեն վստահելու համար, « որովհետև Ինքը կարող է անել ավելին», քան մենք:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, իմ գործերի, հարաբերությունների ու որոշումների մեջ Քո իմաստնության ու զորության կարիքն ունեն: Ամեն:

Թեև մտածում եմ, որ շատ բաներ կարող եմ անել, գիտակցեմ, սակայն, որ առանց Աստծո ու Իր զորության՝ մեմ անկարող եմ:

Չէ՞ որ երկու ճնճղուկը մեկ մանրադրամի են ծախում, և նրանցից մեկն էլ առանց ձեր հոր կամքի գետին չի ընկնի: (Մատթ. 10.29)

ՄԵՐ ՀՈՐ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատուհանի ապակուն ինչ-որ բան կալավ: Նայեցի վերև ու տեսա, որ մի փոքրիկ թռչուն է թպրտում: Սիրտս ցավեց, ցանկացա օգնել փետրավոր էակին:

Մատթեոսի Ավետարանի 10-րդ գլխում Հիսուսը խոսում է թռչունների հանդեպ Իր Հոր հոգատարության մասին: «Իր տասներկու աշակերտներին իր մոտ կանչեց, պիղծ ոգիների վրա նրանց իշխանություն տվեց, որ դրանք հանեն, ամեն ցավ ու ամեն հիվանդություն բժշկեն» (Հմ.1): Նման բաներ անելը շատերի համար ուժերից վեր կարող էր լինել, ոմանք էլ կարող էին ուղղակի մերժել՝ լինելով հեղինակություններ և այլն (Հմ.16-28): Սակայն 29-31-ում Հիսուսը նրանց պատվիրեց չվախենալ դժվարություններից, որովհետև Աստծո հոգածությունից դուրս չեն մնալու: Նա հարցրեց. «Չէ՞ որ երկու ճնճղուկը մեկ մանրադրամի են ծախում և նրանցից մեկն էլ առանց ձեր Հոր կամքի գետին չի ընկնի... Ուրեմն մի՛ վախեցեք. դուք շատ ճնճղուկներից ավելի լավ եք»:

Ամբողջ օրը հետևում էի թռչնակին, ողջ էր, բայց անշարժ: Ուշ երեկոյան այլևս չկար: Աղոթեցի, որ փրկված լինի, թեև վատահ էի, որ ես այդքան հոգատար էի եղել, իսկ Աստված ավելի հոգատար էր լինելու: Հիմա պատկերացրու, թե Աստված իմ ութն հանդեպ ինչ հոգատար է:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ շարունակում ես հսկել ինձ ու հոգ տանել իմ մասին: Ամեն:

Նեղություններ, ցավեր, վեճեր ու փորձանքներ մի՛ս էլ կարող են լինել, սակայն մեր Հայրը մի՛ս մեզ հետ է ու հոգում է մեր մասին:

Եթե դուք իմ խոսքի մեջ մնաք, ճշմարտապես իմ աշակերտներն եք: (Յուկի. 8.31)

ՅՈՒՍՈՒՍ ԱԹՈՒՐ

Երբ իմ ընկեր Մարջը Սուրբ Գիրքը սովորելու ժամանակ հանդիպեց Թեմիին, նկատեց, որ շատ քիչ ընդհանուր բաներ ունեին: Այնուամենայնիվ նրանք բարեկամացան, ու Մարջը շատ կարևոր մի բան սովորեց իր նոր բարեկամից:

Թեմին Սուրբ Գրքի դասերին ներկա չէր եղել և դժվարանում էր հասկանալ խմբի կանանց ասածն այն մասին, թե Աստված իրենց հետ կապ է ստեղծել: Նա այդպիսի փորձառությունն չէր ունեցել: Բայց շատ էր ուզում լսել Աստծո մասին և հետաքրքիր քայլ արեց: Հետո նա Մարջին պատմեց, որ ինքը Սուրբ Գրքի դասերին մի կողմում գրել է փայտե մի աթոռ և հրավիրել, որ Հիսուսը գա ու նստի դրա վրա: Այնուհետև Աստվածաշնչի իրեն հետաքրքրած համարը նա կավիճով գրել է աթոռին: Այդպիսով այն դարձել է այսպես ասած «Հիսուս աթոռ»՝ պատված սուրբգրային պատգամներով:

Մարջը հասկացավ, որ «Հիսուս աթոռը» փոխել է Թեմիի կյանքը: Նրա հոգևոր աճը անկասելի էր, որովհետև Աստծո Խոսքը անձնական էր դարձել:

Խոսելով հրեա հավատացյալների հետ՝ Հիսուսն ասաց. «Եթե դուք իմ խոսքի մեջ մնաք, ճշմարտապես իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք, ու ճշմարտությունը կազատի ձեզ» (Հովհ. 8.31-32): Եկե՛ք հավատարիմ մնանք Նրա հուշումներին և իր խոսքերը սովորենք աթոռի վրա գրելով, ծածուկ կամ մեկ այլ կերպ և փորձենք գործադրել դրանք: Քրիստոսի պատգամի ճշմարտությունն ու իմաստնությունը կօգնեն մեզ իր մեջ աճելու ու մեզ ազատ արձակելու:

Աղոթք - Ո՛վ Աստված օգնի՛ր ինձ, որ կարողանամ Քեզ հետ ավելի կապվել Քո խոսքով տրված իմաստնությամբ: Եվ ապա օգնի՛ր, որ կարողանամ գործադրել դրանք: Ամեն:

Կարելի է գործնական միջոցներ գտնել Սուրբ Յոզու Ենթանշումով Ասծո Խոսքը հասկանալու համար:

Տերն ասաց Գեդեոնին. «Քեզ հետ եղող զորքը շատ է, չեմ ուզում մադի-
ամացիներին նրանց ձեռքը մատնել, որ չլինի թե Իսրայելն իմ առաջ
պարծեմա և ասի, թե՛ «Իմ ձեռքը փրկեց ինձ»։ (Դատ. 7.2)

ՀԱՎԱՏՔԻ ՈՒՂԻՆ

2 017-ի աշխարհի գավաթի առաջնության խաղին ԱՄՆ-ի հա-
վաքականը խաղում էր Տրինիդադի և Տոբագոյի թիմի հետ,
որը մրցաշարային աղյուսակում 56 տեղով ներքև էր իրենից:
Բայց դա չխանգարեց, որ այդ թիմը 2-1 հաշվով հաղթեց Մի-
ացյալ Նահանգների տղամարդկանց ազգային հավաքականին,
ինչի հետևանքով ԱՄՆ-ի թիմը դուրս մնաց 2018-ի մրցաշա-
րից:

Այդ հաղթանակը շատերի համար էր անսպասելի, որովհետև
ԱՄՆ-ի բնակչության ու հնարավորությունների համեմատ կա-
րիբյան այդ ազգը շատ փոքր էր: Բայց փաստորեն այդ ան-
պարտելի թվացող առավելությունները խաբուսիկ էին ու բա-
վարար չէին հաղթելու համար Սոկա ռազմիկներ կոչվող ուժեղ
թիմին:

Գեդեոնի ու մադիամացիների պատմությունը ևս նման մի
անակնկալ է ներկայացնում: Կռվողների մի փոքրիկ խումբ և
հսկա բանակ: Իսրայելի բանակն ուներ ավելի քան երեսուկ հա-
զար կռվող, բայց Տերը նրանց թիվը պակասեցրեց մինչև երեք
հարյուրի, որպեսզի ազգը սովորի, որ իրենց հաջողությունը
կախված է Աստծուց և ոչ թե իրենց բանակի թվից, ունեցած
Փինանսներից կամ առաջնորդների ձիրքերից (Դատ. 7.1-8):

Մեր վստահությունը տեսանելի ու չափելի բաների վրա
դնելը կարող է փորձություն դառնալ, բայց դա չէ հավատքի
ձևը: Եթե նույնիսկ դժվար լինի Աստծուն ապավինելը, բայց
«զորացե՛ք Տիրոջով ու նրա զորության կարողությամբ»(Եփ.
6.10): Նրա զորությունն ու ներկայությունը կարող է հիանալի
բաներ անել մեր միջոցով:

Աղոթք - Ամենակարո՞ղ Աստված, երբ մեր կյանքը լցվի մար-
տահրավերներով, օգնի՞ր, որ կարողանանք ապավինել քեզ,
Քո զորությանն ու շնորհքին: Ամեն:

**Հնարավոր է, որ մենք հաջողություններ արձանագրենք, բայց անհ-
րաժե՞ս է Աստծո նախատեսությունը նկատի ունենալ:**

Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Յիսուսով կպահպանի: (Փիլ.4.7)

ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔ

Ավստրալիայի Բերթ քաղաքում մի վայր կա, որը կոչվում է «Շալոմի տուն»: Տարբեր մոլուցքներ ունեցող մարդիկ այդտեղ փորձում են օգնություն գտնել, որովհետև այդ տանը նրանց սպասում են Աստծո շալոմը (եբր. խաղաղություն) ներկայացնող անձնակազմի հոգատար անդամները: Ալկոհոլի, թմրանյութի, մոլախաղերի և այլ քայքայիչ սովորությունների պատճառով խելված մարդիկ այդտեղ Աստծո սիրով վերափոխվում են:

Այդ վերափոխման կենտրոնում խաչի պատգամն է: Կործանման եզրին հայտնված մարդիկ Շալոմի տանը հայտնաբերում են, որ Հիսուսի հարություն միջոցով իրենք էլ կարող են իրենց կյանքը գտնել հարություն առած: Քրիստոսի մեջ մենք ստանում ենք ճշմարիտ խաղաղություն ու բժշկություն:

Խաղաղությունը պարզապես բախման բացակայությունը չէ, դա Աստծո ամբողջական ներկայությունն է: Բոլորս էլ խաղաղության կարիք ունենք, որ կարելի է գտնել միայն Քրիստոսի ու իր Հոգու մեջ: Դրա համար էր, որ Պողոսը գաղատացիներին ցույց տվեց Հոգու վերափոխումը: Երբ Սուրբ Հոգին գործում է մեր կյանքում, տալիս է իր պտուղը, որը պարունակում է սեր, ուրախություն, համբերություն և շատ ավելին (Գաղ. 5.22-23): Երբ Հոգին մեզ Աստծո խաղաղության մեջ ապրելու ուժ է տալիս, մենք սովորում ենք մեր կարիքների ու մտահոգությունների մասին հայտնել Երկնավոր Հորը: Դա էլ իր հերթին մեզ բերում է «Աստծո խաղաղությունը, որ «ամեն մտքից վեր է և մեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի» (Փիլ.4.7):

Աղոթք - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ Քո ցանկությունը ինձ խաղաղություն տալն է: Շնորհակալ եմ հանուն խաղաղության Հիսուսի կատարած գործի համար: Ամեն:

Կյանքի փոթորիկներում կարելի է Ասծո Հոգու խաղաղությունն ունենալ:

Ահա Բեռնոմյոսը, որին ես քեզ հետ ստեղծեցի* (Յոթ 40.15): (Աստվածաշունչ չՄատյան, Հայ. Աստված-ին ՂԱԿ-ուն, Երևան 2020 թ. էջ 639)

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ ՄԵԾ

Ինչպե՞ս եք պատկերացնում դիմողավրերին. մեծ ատամնե-րով, թեփուկավոր մաշկով, երկար պոչով: Արվեստագետ Կարեն Քարրը անհետացած այդ կենդանիներին կերտել է հըս-կա որմնանկարների միջոցով: Նրա համայնապատկերներից մեկն այնքան մեծ էր, որ Օկլահոմայի Սեմ Նոբլը բնության պատմության թանգարանում ցուցադրելու համար անհրաժեշտ եղավ մի ամբողջ անձնակազմ ներգրավել:

Բնականաբար, այդ աշխատանքի առջև կանգնողը իրեն նվաստ ու փոքր կզգա: Այդպիսի զգացում ունեցա, երբ կար-դացի Բեհեմոտիդ կոչված դազանի մասին Աստծո նկարագրու-թյունը.«Ահա նրա ուժը մեջքին է, զորությունը՝ որովայնի պոր-տի շուրջ: Իր պոչը նոճու պես տնկել է, ջլերն իրար են հյուս-ված, կողերը պղնձից են, ողնաշարը՝ ձուլյ երկաթից: Ապառաժ լեռան վրա հասնելով՝ տարտարոսում չորքոտանիների խրախ-ճանք է սարքել: Տեսակ-տեսակ ծառերի տակ է քուն մտնում: Նրա գլխավերևում հովանի են դառնում մեծամեծ ծառեր: Հե-ղեղ էլ լինի՝ նա չի զգա» (Հոթ.40.11-18): Ոչ մեկը չէր կարող նվաճել նրան, բացի իր ստեղծողից (հմ.19):

Աստված Հոթին այս ճշմարտությունը հիշեցրեց այն ժամա-նակ, երբ դժվարությունները նրա կյանքում չարագուշակ ստ-վերներ էին գցել: Աստծո պատասխանը Հոթին օգնեց ամեն ինչ տեսնել իրական չափերի մեջ: Աստված իր չլուծվող խնդիրնե-րից շատ ավելի մեծ էր, և Հոթը ընդունեց.«Գիտեմ, պատում է ուժդ ամեն ինչի» (42.2):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, հավատում եմ, որ իմ դիմագրաված բո-լոր դժվարություններում կարող ես ինձ օգնել: Օգնի՛ր, որ նեղության մեջ բաց լինեմ Քո ուժի ու բարության առջև: Ամեն:

Անլուծելի ու հսկայական թվացող խնդիրներ կլինեն: Սակայն Ասված դրանցից շատ ավելի մեծ է:

Իսկ նա անապատ տեղեր էր քաշվում և աղոթք էր անում: (Պուկ. 5.16)

ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՍՏԾՈՒ ՅԵՏ

Նորման Մաքլինի «Նրա միջով մի գետ է հոսում» նովելը պատմություն է երկու եղբոր մասին, որոնք իրենց եկեղեցական հոր հետ ապրում էին Մոնտանայում: Կիրակի առավոտները նրանք գնում էին եկեղեցի՝ լսելու հոր քարոզը: Երեկոյան մեկ այլ պաշտամունք կար, որին ևս հայրը մասնակցում էր: Այդ երկուսի միջակայքում նա հանգստանում էր, պատրաստվում հաջորդ քարոզին: Իսկ տղաները զբոսնում էին բնություն գրկում:

Ավետարաններում տեսնում ենք, որ Հիսուսը մեծ բազմություններին սովորեցնում է լեռների վրա ու քաղաքներում, բուժում է իր մոտ բերած հիվանդներին: Այդ բոլոր ծառայությունները համապատասխանում են Մարդու Որդու առաքելությանը. «Մարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի» (Ղուկ. 19.10): Բայց նաև նշված է, որ Նա հաճախ էլ «ամայի տեղեր էր քաշվում և աղոթք էր անում» (5.16): Նա այնտեղ ժամանակն անցկացնում էր իր Հոր հետ հաղորդակցվելով, թարմանում էր, վերականգնում ուժերը, որպեսզի դարձյալ շարունակեր իր առաքելությունը:

Ծառայելու մեր հավատարիմ ջանքերում պետք է հիշել, որ «Հիսուսը» հաճախ ետ էր քաշվում: Եթե այդ սովորությունը կարևոր էր Նրա համար, ապա որքա՛ն ավելի կարևոր պիտի լինի մեզ համար: Թող որ կանոնավոր կերպով ժամանակ անցկացնենք մեր Հոր հետ, որը կկարողանա մեզ դարձյալ հորդելու աստիճան լցնել:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ հիշեցման համար, որ Քեզ հետ հանդիպելու ժամանակն է: Քո շնորհքի ու գործության կարիքն ունեմ, որ նորոգվի իմ հոգնած հոգին: Ամեն:

Մեր առօրյա խճողված աշխատանքների ժամանակ կամ դրանց ավարտվելուց հետո հարկավոր է առանձնանալ Աստծո հետ՝ գործություն ստանալու և թարմանալու համար:

Երիվարը պատրաստվում է պատերազմի օրվա համար, բայց Տիրոջից է գալիս հաղթանակի օգնությունը: (Առ. 21.31)

ԻՆՔՐ ՔԵՉ ՀԱՄԱՐ Է ԿՈՎԵԼՈՒ

Թեթև բրիգադի գրոհի ժամանակ անգլիացի 112 զինվորներին կրող ձիերից մեկը՝ Դրամըր Բոյը, նույնիսկ վերափոխված, այնպիսի արիություն ցուցաբերեց, որ բրիգադի հրամանատար, հարյուրապետ Սալիսը որոշեց, որ իր ձին, ինչպես իր քաջ զինվորները, չքանչանի է արժանի: Այդպես էլ եղավ, հակառակ այն բանի, որ ռազմական այդ գործողությունը ձախողվել էր: Հեծելազորի դերը այնքան մեծ էր պատերազմական այդ դրվագում, որ այն համարվում է Բրիտանիայի ռազմական պատմության փայլուն էջերից և մինչև այսօր նշվում է:

Այս պատմությունը ցույց է տալիս սուրբգրային առակներից մեկի իմաստնությունը. «Երիվարը պատրաստվում է պատերազմի օրվա համար, բայց Տիրոջից է գալիս հաղթանակի օգնությունը» (Առ. 21.31): Աստվածաշունչը հստակ հաստատում է այս սկզբունքը: «Որովհետև մեր Տեր Աստածը ձեզ հետ գնում է ձեր առջևից, որպեսզի ձեզ հետ պատերազմելով ձեր թշնամիների դեմ՝ փրկի ձեզ» (Բ.Օր. 20.4): Իսկապես, նույնիսկ մահվան նշանի դեմ Պողոս առաքյալն ասաց. «Բայց շնորհակալություն՝ Աստծուն, որ մեզ հաղթություն տվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Ա.Կորնթ. 15.57):

Որևէ առաքելություն հաստատելու համար մենք սովորում ենք, գործում ու աղոթում: Գեղարվեստի գործ ստեղծելու համար զարգացնում ենք մեր հմտությունը: Լեռներ մագլցելու համար ապահովում ենք մեր գործիքները և հավաքում մեր ուժերը: Սակայն այդ պատրաստված հաղթողներից ավելի ուժեղ ենք լինում Քրիստոսի հզոր սիրո միջոցով:

Աղոթք - Երկնավոր Հայր, կյանքիս կարևոր շրջափուլերում, մեծ փորձությունների շեմին ներշնչի՛ր ինձ, որ պատրաստեմ սիրոս, որպեսզի Դու տանես հաղթանակը: Ամեն:

Պատերազմների ու կռիվների ժամանակ մեր հաղթանակը Աստծո մեջ է:

Եթե Տեր Աստված ինձ հետ լինի ...ուրեմն թող նա լինի ինձ Տեր Աստված: (ԾՈՆ. 28.20-21)

ԱՍՏՎԱԾ ԱՅՆՏԵՂ Է

Օբբին բրդյա վերարկու էր գնել ծեր մոր համար, բայց նա չհասցրեց հագնել այն, մահացավ: Օբբին քաջալերական մի գրություն և 20 դուլար դրեց վերարկուի գրպանում և այն հանձնեց բարեգործական մի կենտրոնի:

90 կմ հեռու մի վայրում, չդիմանալով ընտանեկան անհաշտությանը, տասնինը տարեկան Կելին տնից հեռացավ՝ առանց նույնիսկ վերարկու հագնելու: Նա գիտեր, որ միակ վայրը, որտեղ իրեն ապահով կարող էր զգալ տատի տունն էր: Ժամեր անց նա տատիկի ջերմ գրկում էր: Կելին տատի հետ գնաց բարեգործական կենտրոնի խանութ՝ վերարկու գնելու: Երբ փորձում էր իր հավանածը, գրպանում գտավ Օբբիի գրությունն ու դրամը:

Հակոբը փախավ իր ընտանիքից՝ վախենալով իր կյանքի համար (Ծնն. 27.41-45): Գիշերը նրա երազում Աստված հայտնվեց. «Ես ահա քեզ հետ եմ, որ պահպանեմ քեզ քո բոլոր ճանապարհներին, որոնցով գնալու ես(28.15): Եվ Հակոբն ուխտեց.«Եթե Տեր Աստված ինձ հետ լինի ...ուրեմն թող նա լինի ինձ Տեր Աստված» (Հմ.28.20-21):

Հակոբն այնտեղ կառուցեց մի խորան և այն կոչեց «Աստծո տուն»(Հմ.22): Կելին ուր որ գնում էր, իր հետ վերցնում էր Օբբիի գրությունն ու գումարը: Դրանք հիշեցնում էին, որ ուր էլ գնանք, Աստված այնտեղ է:

Աղոթք - Հայր, Դու ես ես, որին ես կարող եմ միշտ դիմել:
Օգնիր ինձ, որ նախ դառնամ դեպի Քեզ: Ամեն:

Վստահ լինեմք, որ մեր կյանքի բոլոր դարազանքերում Աստված մեր միակ լույսն է:

Նոր երկինք ու նոր երկիր պիտի ստեղծեն: (Ես. 65.17)

ՊԱՏԿԵՐԱՑՆԵՆՔ ԱՅՍՊԵՄ

Տան վերանորոգման մասին հեռուստատեսային հաղորդման ժամանակ հաղորդավարը հաճախ է օգտագործում «Պատկերացնենք այսպես» արտահայտությունը՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող են փոխվել ու մաքրվել մոլթ ու գորշ պատերը, հին իրերը: Հաղորդումներից մեկի ժամանակ, տեսնելով կատարված աշխատանքը, տանտերն այնքան ոգևորվեց, որ երեք անգամ կրկնեց՝ ի՛նչ գեղեցիկ է:

Աստվածչնչում պատկերացնելու հատվածներից է Եսայի 65.17-25-ը, որտեղ ներկայացվում են Աստծո խոստումները երկնքի ու երկրի ապագայի մասին (Հմ.17): Եվ դրանք միայն արտաքին փոփոխություններ չեն լինելու, այլ խոր ու իրական, կյանք փոխող ու կյանք պահպանող. «Տներ պիտի շինեն եւ իրե՛նք պիտի բնակվեն, այգիներ պիտի տնկեն և նրանց պտուղն իրե՛նք պիտի ուտեն (Հմ.21): Բուսությունը անցյալում է մնալու. «Մարդիկ չեն մեղանչելու և չեն վնասելու իմ սուրբ լեռան վրա» (Հմ.25):

Եսայի 65-ի հակադարձումները իրականություն են դառնալու ապագայում, Աստված, որ ղեկավարելու է համաշխարհային վերանորոգումը, հիմա կյանք փոխելու աշխատանքներով է զբաղված: Պողոս առաքյալը վստահեցնում է. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ.Կորնթ. 5.17): Հիսուսի միջոցով եղած կյանքի փոփոխությունը իրական է ու գեղեցիկ և նախատեսված է նրանց համար, ովքեր հավատում են ու խնդրում:

Աղոթք - Վերանորոգման ու վերականգնման Հայր, Դու գիտես, թե ինչ փոփոխություն ես անելու իմ կյանքում, որպեսզի էլ ավելի նմանվեմ Քեզ: Խնդրում եմ՝ այսօր գործիր իմ սրտում ու կյանքում: Ամեն:

Եթե կարծում ես, որ փոփոխությունների կարիք ունես, դիմի՛ր Ասծուն և նա կանի:

Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է իրագործվում: (Բ.Կորնթ. 12.9)

ԿԻՍՎԵԼ ՀԱՎԱՏՔՈՎ

Հեղինակ ու ավետարանիչ Բեքի Փայփերթն Իռլանդիայում բնակվելիս ցանկանում էր Հիսուսի բարի լուրը հայտնել իր մատնահարգար Հետրին, սակայն վերջինը բնավ հետաքրքրություն չէր ցուցաբերում: Զգալով, որ չի կարողանում համապատասխան խոսակցություն սկսել, Բեքին ժամադրության գնալուց առաջ աղոթեց: Երբ Հետրն իր գործն էր անում, Բեքը, թերթելով հին ամսագրերից մեկը, կենտրոնացավ այդտեղ պատկերված լուսանկարներից մեկի վրա: Երբ Հետրը հարցրեց, թե այդ ինչ է նայում, Բեքը պատմեց, որ իր բարեկամի նկարն է, որը մի ժամանակ Վոգ ամսագրի գեմքն էր: Իմ բարեկամի՝ Աստծուն հավատալու պատմությունները հետաքրքրեցին մատնահարգարին:

Որոշ ժամանակ ճամփորդելուց և Իռլանդիա վերադառնալուց հետո, Բեքին իմացավ, որ Հետրը ուրիշ շրջան էր տեղափոխվել: Բեքին խնդրեց Աստծուն, որ իրեն առիթ ընծայի, որ կարողանա Ավետարանի բարի լուրը փոխանցել Հետրին և Աստված տվեց: Բեքին անգորությունից Աստծո օգնությանը դիմեց՝ ներշնչվելով Պողոս առաքյալից: Երբ Պողոսը տկար էր ու Աստծուց խնդրեց իրենից հետ վերցնել խայթը, Տերը պատասխանեց. «Բեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է իրագործվում» (Բ.Կորնթ. 12.9): Պողոսը սովորել էր ամեն հարցում, մեծ կամ փոքր, Աստծուն վստահել ու խնդրել:

Երբ Աստծուն խնդրում ենք օգնել՝ մեզ շրջապատողներին սիրելու հարցում, դրանով իսկ առիթ ենք գտնում մեր հավատքով կիսելու:

Աղոթք - Սիրո՛ղ Տեր, Դու գործում ես Հորը փառավորելու իմ անզորության ժամանակ: Օգնի՛ր, որ կարողանամ Քո շնորհի բարի լուրը արածել: Ամեն:

Եթե ուզում ես, որ մեկը Ասծուն հավասա, աղոթի՛ր Ասծուն, որ քեզ առիթ սա խոսել նրա հետ՝ հակառակ քո անկարության:

Արդ Աստուծու նմանվող եղեք, ինչպես սիրելի որդիներ, և սիրով ապրեցեք: (Եփ. 5.1-2)

ԱՍՏՈՆ ԶՎԱԿՆԵՐԸ

Ելույթ էի ունենում անզավակ զույգերի համագումարում: Նրանցից շատերը երեխա չունենալու հանգամանքից հուսահատված էին: Ես, որ անցել էի այդ ուղին, փորձեցի քաջալերել նրանց՝ ասելով. «Դուք կարող եք իմաստալից կյանք ունենալ նաև առանց ծնող լինելու: Ես հավատում եմ, որ դուք ուժեղ ու սքանչելի եք և ստեղծված եք մի նոր նպատակի համար, որը շուտով գտնելու եք»:

Հետո մի կին մոտեցավ ու հուզված շնորհակալություն հայտնեց, որ վերջապես կարողանալու է իր անարժեք թվացող կյանքի նպատակը գտնել: Նրան հարցրի, թե հավատո՞ւմ է Հիսուսին: Պատասխանեց. «Տարիներ առաջ հեռացել եմ Աստծուց, բայց այժմ դարձյալ կարիք ունեմ Նրա հետ հարաբերվելու»:

Նման պահերը հաստատում են, թե որքան խորիմաստ է ավետարանը: Ոմանց համար մեծ դժվարություն է հայր ու մայր դառնալը, ոմանց համար՝ մեկ այլ բան: Բայց Հիսուսի միջոցով մենք կարող ենք լինել «Հիսուսի սիրելի որդիները» (Եփես. 5.1), ինքնություն, որ երբևէ հնարավոր չէ կորցնել, և «ապրել սիրով» (հմ.2). մի նպատակ, որ երանելի է ցանկացած դերում ու կարգավիճակում եղողի համար:

Բոլոր մարդիկ «ահեղ ու սքանչելի են» (Սաղմ. 138.14), և Քրիստոսին հետևողները Աստծո զավակներն են լինելու (Հովհ. 1.12-13): Այդպես ինձ մոտեցած հուսահատ կիներ հեռացավ նոր ինքնություն ու նպատակ գտնելու մեծ հույսով: Նպատակ, որ շատ ավելի մեծ է, քան այս աշխարհի տվածը:

Աղոթք - Հայր, միայն Դու կարող ես տալ կյանքն՝ իր ամբողջությամբ, և ես բացում եմ ձեռքերս՝ ընդունելու այն:
Ամեն:

Կա՞ հուսահատ մեկը, որին կարող ես ասել, որ ինքը «ահեղ ու սքանչելի է» ստեղծված և հիշեցնել նրան, որ ինքը Աստծո զավակն է:

Դուք կկանչեք ինձ, կգնաք և կաղոթեք ինձ, ու ես կլսեմ ձեզ: (Եր. 29.12)

ՆԱ ԼՍՈՒՄ Է ՄԵՉ

ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը հաճախ էր ընդդիմանում Սպիտակ տան բազմաթիվ այցելուներին ողջունելուն, որովհետև կարծում էր, որ նրանցից ոչ մեկը ուշադրություն չի դարձնում իր ասածներին: Նա որոշեց մի փորձ անցկացնել: Մի օր ընդունելության ժամանակ բոլորին, ով մոտենում էր իր ձեռքը սեղմելու, նա ասում էր. «Այս առավոտ տատիս սպանեցի»: Հյուրերը պատասխանում էին. «Հիանալի է, շարունակեք նույն գործը: Աստված օրհնի Ձեզ»: Միայն Բոլիվիայի հյուպատոսը, լսելով այդ նախագասությունը, շփոթված նկատեց. «Վստահ եմ՝ նա սպասում էր այդ բանին»:

Երբեք մտածո՞ւմ ես, որ մարդիկ քեզ չեն լսում, կամ որ ավելի վատ է՝ Աստված քեզ չի լսում: Մարդկանց լսել-չլսելու մասին կարող ենք իմանալ նրանց պատասխանից կամ աչքերին նայելով: Իսկ ինչպե՞ս ճշտել Աստծո պարագան: Վստահել մեր զգացմունքները՞ն, թե սպասել մեր աղոթքների պատասխաններին:

Աստված իր ժողովրդին յոթանասնամյա բաբելոնյան աքսորից հետո խոստացավ վերադարձնել Երուսաղեմ ու ապահովել նրա ապագան (Եր. 29.10-11): Երբ դիմեցին Իրեն, լսեց նրանց ձայնը (Հմ.12): Եվ նրանք համոզվեցին, որ Աստված լսել է իրենց աղոթքները, որովհետև խոստացավ կատարել իրենց խնդրանքը: Նույնը ճշմարիտ է նաև մեզ համար (Հովհ.5.14): Մենք կարիք չունենք հետևելու մեր զգացմունքներին՝ ստուգելու համար Աստծո լսել-չլսելը: Եթե Նա խոստացել է, ուրեմն կկատարի իր խոստումը:

Աղոթք - Սիրելի՛ Դայր, շնորհակալ եմ, որ լսում ես աղոթքս, թեև երբեմն կասկածներ եմ ունենում: Օգնի՛ր միշտ հավատալ Քո խոստմանը և վստահ լինել, որ լսում ես ինձ: Ամեն:

Երբեմն կասկածներ ես ունենում, որ Աստված լսում է քեզ, բայց վստահ եղի՛ր, որ Նա լսում է:

Բոլոր որբեւայրիները նրա չորս կողմը կանգնեցին. լաց էին լինում և ցույց էին տալիս այն շապիկներն ու զգեստները, որ Այծեմնիկն էր պատրաստում, քանի դեռ իրենց հետ էր: (Գործք. 9.39)

ԲԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մարթան երեսուն տարուց ավելի աշխատել էր որպես տարրական դասարանների ուսուցչի օգնական: Ամեն տարինա գումար էր տնտեսում, որպեսզի կարիքավոր աշակերտների համար նոր բաճկոններ, ձեռնոցներ ու շարՖեր գնի: Իսկ երբ արյան քաղցկեղից մահացավ, բոլոր բարեկամները ծաղկեպսակների փոխարեն նրա սիրած աշակերտներին նվիրեցին հարյուրավոր վերարկուներ: Շատերն էլ պատմում էին, թե ինչպես էր Մարթան այլոց օգնելու, քաջալերելու ձևեր գտնում իր ագնիվ խոսքերով ու բարի գործերով: Երեք տարի անց այդ բարեգութ կնոջ գործընկերները, ի հարգանք նրա հիշատակի, վերարկու հավաքելու մի ծրագիր սկսեցին: Այսինքն՝ նրա բարության ժառանգությունը շարունակում էր ներշնչել մարդկանց, որ օգնեն ու ծառայեն կարիքավորներին:

Գործք առաքելոցի Գրդ գլխում Ղուկասը մի պատմություն է ներկայացնում «բարի գործերով ու ողորմություններով լի» (Հմ.36) մի կնոջ՝ Այծեմնիկի մասին: Երբ նա հիվանդանում ու մահանում է, սգավոր ժողովուրդը խնդրում է Պետրոսին այցելել իրենց: «Բոլոր որբեւայրիները նրա չորս կողմը կանգնեցին. լաց էին լինում և ցույց էին տալիս այն շապիկներն ու զգեստները, որ Այծեմնիկն էր պատրաստում, քանի դեռ իրենց հետ էր» (Հմ.39): Լսելով նրանց՝ Պետրոսը հրաշագործությամբ կենդանացրեց Այծեմնիկին: Այդ լուրը տարածվեց ու «շատերը հավատացին Տիրոջը» (Հմ.42): Այծեմնիկի՝ ուրիշներին ծառայելու նվիրումն էր, որ շատերի սրտին կպավ ու հաստատեց սիրո և առատաձեռնությունն ու ժր:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ՝ ուրիշներին սիրել այնպես, որ կարողանամ բարության ժառանգությունը թողնել: Ամեն:

Սեր բարի գործերը լավ օրինակներ են դառնում ուրիշների համար և առիթ, որ մեր գործերում Աստված երևա:

Քանի որ դու եղար իմ օգնականը, քո թևերի հովանու տակ ես պիտի ցնծամ: Քեզ հետևեց իմ հոգին, և աշդ ընդունեց ինձ: (Մաղմ. 62. 8-9)

ԱՍՏԾՈ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հեռուստատեսային «Մանք» հաղորդաշարի հերոսներից Ադրիան Մանքը վախենում էր ասեղից, մեղուններից ու վերելակներից, չէր սիրում կաթ, սուճիկ ու ծնունդներ: Բայց երբ նա ու իր մրցակից Հարոլդ Կրենչոն հայտնվեցին մեքենայի բեռնախցիկում, նա հաղթահարեց վախը փակ տարածքից: Եվ դա շատ հետաքրքիր ձևով կատարվեց:

Մանքն ու Հարոլդը խուճապի էին մատնվել, երբ հանկարծ Մանքը հայտարարեց. «Ես կարծում եմ, որ մեր այս վիճակին պետք է նայենք այլ տեսանկյունից: Այս բեռնախցիկը մեզ ոչ թե բանտում է, այլ պաշտպանում և հեռու պահում շատ չար բաներից՝ օձերից, միջատներից: «Հարոլդը համաձայնեց ու շնջաց. «Բեռնախցիկը մեր բարեկամն է»:

62-րդ սաղմոսում նման հայտնություն է ունենում Դավիթը: Հակառակ այն բանի, որ «հոգին ծարավ է, ինչպես մի անապատ և անջուր երկիր, ուր ճամփա չկա» (Հմ.2-3), նա հիշում է Աստծո «զորությունն ու փառքը» և թվում է, թե անապատը վերափոխվում է Աստծո հոգատարություն ու պաշտպանություն վայրի: Թուչնի ձագի նման, որը պաշտպանվում է մոր թևերի տակ, Դավիթն էլ Աստծուն է փարվում և տեսնում, որ նույնիսկ անջրդի անապատում «պարարտ ճարպով պիտի հագենա իմ հոգին, և բերանս ցնծալից չըթունաքներով քե՛զ պիտի օրհնի» (Հմ.8)՝ անունդ ու զորություն գտնելով սիրո մեջ, որ «կյանքից ավելի լավ է» (Հմ.4):

Աղոթք - Սիրո՞ղ Արարիչ ու Սնուցող Հայր, շնորհակալ եմ, որ հրաշքով Քո սերը դնում ես իմ սրտում ու պաշտպանող թևերդ տարածում ինձ վրա: Ամեն:

Դժվարություններ ու վճանգներ դիմագրավելիս հիշենք, որ Ասված մեզ հետ է՝ մեզ ղափելու և ղաշտանելու համար:

Որովհետև արձաթափությունը բոլոր չարիքների արմատն է... ով Աստուծո մարդ, սրանցից փախի՛ր և հետևի՛ր արդարության: (Ա.Տիմ. 6.10-12)

ԿՅԱՆՔԻԴ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի երեկո ես ու կինս մեր բարեկամների ուղեկցությամբ իջնում էինք լեռնային արահետով: Ոլորապտույտ ճանապարհը նեղ էր ու վտանգավոր: Հանկարծ տեսանք, որ մեզանից ոչ այնքան հեռու մի մեծ արջ կանգնած գլուխն է օրորում: Կենդանին մեզ դեռ չէր նկատել, բայց անսպասելի կնկատեր, եթե չթաքնվեինք: Մեր բարեկամը ուզեց հանել տեսախցիկը, որպեսզի նկարի գազանին: Բայց ես չթողեցի՝ ասելով, որ անհրաժեշտ է շատ արագ հեռանալ այդտեղից: Եվ մենք լուռ հեռացանք:

Այդ նույն զգուշությունը մարդ պետք է ունենա հարստանալու ցանկության ժամանակ: Անշուշտ, փող ունենալու մեջ վատ բան չկա: Այն փոխանակման միջոց է և անհրաժեշտություն: Բայց այն մարդիկ, ովքեր տարվում են հարստանալու մոլուցքով, «փորձույթան, որոգայթի և շատ անմիտ, վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որ ընկղմում են մարդկանց կործանումի և կորստյան մեջ», -ասում է Պողոս առաքյալը (Ա.Տիմ.6.9): Հարստությունը պարզապես ավելին ուղեկցող է: Դրա փոխարեն «հետևի՛ր արդարության, աստվածապաշտության, հավատի, սիրո, համբերության, հեղուկության» (Հմ.11): Իսկ այդ հատկանիշները մեր մեջ կաճեն, երբ մենք հետևենք զրանց ու խնդրենք Աստծուն՝ ավելի շատացնել: Սա է Աստծո օգնությամբ գոհացում ապահովելու միջոցը:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, ուզում եմ աճել ու ավելի նմանվել Յիսուսին: Օգնի՛ր, որ կարողանամ համակերպվել այն բանին, ինչ Դու ես ուզում սովորեցնել ինձ: Ամեն:

Յեսևի՛ր այն բաներին, որոնք քեզ ավելի կնմանեցնեն Յիսուսին:

Գիտեմ պակասությունը քաշելը և առատության մեջ լինելն էլ: (Փիլիպ. 4.12)

ԳՈՐԾԵՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Դժբախտ պատահարից հետո Ջոնի էրիքսոն թագայի կյանքը լրիվ փոխվեց: Նա գամվել էր անվասայլակին, և իր տանը նախկին ամեն ինչն արդեն անհարմար էր. դժվար էր դռներով անցնելը, ծորակներին հասնելը և նույնիսկ ճաշելը: Բայց նա մի օր որոշեց, որ պետք է ինքնուրույն ուտի: Սկզբում փորձերն անհաջող էին, բայց նա չհուսահատվեց, խնդրեց Աստծուն, որ օգնի իրեն: Այսօր Ջոնին բավական վարժ է օգտագործում գդալը:

Նրա վիճակը առիթ է դարձել, որ ինքը ուշադրություն դարձնի մեկ ուրիշ բանտարկյալի՝ Պողոսին և մասնավորապես փիլիպեցիներին գրած նրա նամակին: Դրանով Ջոնին ձգտում էր հասնել Պողոսի արձանագրած հաջողությանը. «Գիտեմ պակասությունը քաշելը և առատության մեջ լինելն էլ» (Փիլիպ. 4.12): Պետք է նկատի ունենալ, որ եթե Պողոսը ձգտում էր խաղաղության ու գոհունակության, ուրեմն ուներ դրա կարիքը: Իսկ ինչպե՞ս նա գտավ այդ գոհունակությունը: Քրիստոսին վստահելով. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Հմ.13):

Բոլորս էլ մեր կյանքում դիմագրավում ենք մարտահրավերներ և բոլորս էլ զորություն ու խաղաղության համար կարող ենք դիմել Հիսուսի օգնությանը: Նա մեզ կօգնի, կտա հաջորդ դժվարին քայլն անելու քաջություն: Նայի՛ր իրեն ու գտի՛ր գոհացում:

Աղոթք - Փրկի՛չ Քրիստոս, շնորհակալ եմ, որ ինձ տալիս ես հույս ու քաջություն: Երբ թույլ զգամ, օգնի՛ր ինձ ուժ գտնել Քո մեջ: Ամեն:

Պայքարներ ու մարտահրավերներ մի՞տս կուճենան: Հաղթելու համար կարևորը Տիրոջն աղավիհնելն ու լսելն է:



Նյութերի ցանկ

Ազահուլթյուն	Հուն. 29
Աղոթք.....	ապր. 16,20, մայ. 12, Հուն. 20,26
Աշակերտություն.....	մայ. 30
Ապաշխարություն.....	մայ. 17
Առաքելություն և նպատակ.....	մայ. 7
Աստծու ներկայություն.....	ապր. 24
Աստծվածաչնի սերտողություն.....	Հուն. 16
Աստծու երկյուղածությունը.....	մայ. 30
Աստծու նկարագիրը.....	Հուն. 1,8, 15, 19, 22
Աստծու սերն ու գուրգուրանքը	ապր. 7,9,11,18,22,28, մայ. 1,4,9,10,17,26,27,28, Հուն. 1,8,11,15,,17,22
Աստծուն վստահել	ապր. 3,5,11,17,19, մայ. 23,4,6,13,21, 24,28, Հուն. 14
Արդարություն.....	Հուն. 1
Ավետարանչություն.....	ապր. 17,30, Հուն. 13,14
Բախում և առճակատում.....	ապր. 9,12, Հուն. 12
Գոհունակություն.....	Հուն. 30
Դրախտ.....	մայ. 14
Եկեղեցական կյանք.....	ապր. 6, Հուն. 12
Երջանկություն.....	ապր. 10
Թշնամիներ.....	ապր. 23
Իմաստություն.....	Հուն. 7
Ինքնապատկեր.....	մայ. 26
Խոնարհություն.....	մայ. 20
Խորհրդատվություն.....	ապր. 13
Ծառայություն.....	ապր. 12,19, մայ. 4,27, Հուն. 2,27
Կյանքի մարտահրավերներ.....	ապր. 3, մայ. 4,27, Հուն. 17,25
Հանգիստ.....	մայ. 25
Հանցանք.....	մայ. 16
Հավիտենական կյանք.....	մայ. 22



Հավատք.....	ապր. 16, մայ. 2,23
Հոգատարություն.....	Հուն. 5
Հոգևոր աճ.....	Հուն. 9
Հոգևոր բարեփոխում.....	ապր. 27, մայ. 12, 20
Հոգևոր պատերազմ.....	մայ. 29, Հուն. 21
Հպարտություն.....	ապր. 26, մայ. 25
Հույս.....	Հուն. 25
Մահ.....	մայ. 14
Մատակարարում և տալ	մայ. 31
Մեղք.....	ապր. 25, Հուն. 10
Մեղքի թողություն	ապր. 25, Հուն. 10
Մոլություն.....	Հուն. 18
Մտահոգություն.....	մայ. 24
Ներել ուրիշներին.....	ապր. 16
Շնորհակալություն.....	ապր. 2
Պաշտամունք.....	ապր. 16
Սեր ուրիշների հանդեպ.....	ապր. 1,8,12,15,22, մայ. 3,19,26
Սուրբ Հոգի.....	ապր. 20, մայ. 1, Հուն. 11, 18
Ստեղծագործություն.....	մայ. 26
Վախ.....	ապր. 19, մայ.21,26, Հուն. 28
Վիշտ.....	ապր. 18, Հուն. 3
Վհատություն.....	մայ. 6
Տապալում.....	ապր. 26
Ցեղապաշտություն.....	մայ. 3, Հուն. 7
Փրկություն.....	ապր. 25, մայ. 5,8,17,22,23, Հուն. 10
Քաջակերություն.....	ապր. 22
Քրիստոս՝ մահ.....	ապր. 2
Քրիստոս՝ հարություն.....	ապր. 4
Քրիստոս՝ վերադարձ.....	Հուն. 6
Քրիստոսի նման ապրել.....	ապր. 14,21, մայ. 11,25, Հուն. 2



Նշումների համար



Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. +374 47 94 52 75

Անուն, ազգանուն
Հասցե.....
.....
Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Էլկայք՝ www.amaa.am

Արցախ
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95